



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LTn
1484

1999

ՂԵՋԵՐ ՓԵՐՊԵՅՈՒ

ԹՈՒՆԴԹԸ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԳՐԱԾ

ԹՈՒՂԹԸ

ՄՆԳՆԳՐՈՒԹԻՒՆ ՍՏՆԵՕՍ ԼԻՆԳՆԵՐԻՆ

(Թարգմանութիւն և բացատրութիւնք

Մ. ՆԱԼԲԱՆԿԵԱՆՑ

Մ. ՆԱԼԲԱՆԿԵԱՆՑԻ ՀԱՄԱՌՕՏ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏՊԵՐՈՒԹԻՒՆ Մ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ



Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ-
ԲԱԿՍԻ ՏՊԵՐԱՆՈՒԹԸ

1868=ՌՅԺԷ

Ի Հայրապետութեան Գէորգայ Գ. Կաթողիկոսի ամենայն
Հայոց, ծայրագոյն Պատրիարքի Համագրական նախամեծար աթո-
ոսյ Լրարատեան Լուսփայտեան մայր եկեղեցւոյ Կաթողիկէ
Լճմիածնի:

6001

Дозволено цензурою. С.-Петербургъ. 6 ноября. 1868 г.

38 1486

71484-60

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ

ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Der eine fällt—die andern rücken nach—
Doch fall ich unbesiegt, und meine Waffen
Sind nicht gebrochen....

Heine.

Մինը ընկնում է—միւսները հետևում են նորան—
Բայց ես ընկնում եմ չյողթված,
Եւ իմ զենքերը չեն կտորաճի....

Հ է յ ն է:

Հրատարակելով Միքայէլ Նալբանդեանցի այս աշխատութիւնը, աւելորդ Համարեցինք կարդացողներին համար դնել այս տեղ նաև նորա համառօտ կենսագրութիւնը:

Միքայէլ Ղազարեան Նալբանդեանցը ծնաւ Նոր Նախիջևան քաղաքում 1830 թ. հոկտեմբերի 27: Նորա ծնողքը, թէև կարողութեան տէր մարդիկ չէին, բայց միջոց ունէին առանց ներդրելու կրելու ապրել: Հայրը, ուստայի Ղազարը, քաղարի մէջ կարող առուտուր էր անում, սա, փոքր ի շատէ բան հասկացող մարդ լինելով, ոչինչ չէր խնայում իրեն զաւակների կրթութեան համար: Այն ժամանակ, որպէս և այժմ, տարաբաղդաբար, Նախիջևանի մէջ չըկար մի ազգային օրինաւոր դպրոց կամ ուսումնարան, հետևաբար ով որ կամենում էր իր զաւակներին ուսում տալ և փոքր ինչ կրթութիւն պարտաւորված էր սոցա կրթութիւնը և դաստիարակութիւնը յանձնել մի քահանայի, սարկաւազի կամ տիրացուի, որոնք, մեծ մասամբ, եւրոպական լուսաւորութիւնից և գիտութիւններից զուրկ լինելով, նաև հայկական դպրութեան անտեղեակ, ուրիշ բան չէին կարողանում սովորեցնել իրենց աշակերտներին, բաց ի լոկ կարդալ—

գրելուց: Մեր Վալբանդեանցն էլ սկզբում վիճակվեցաւ այդ օրին, յանձնվելով մի հասարակ տիրացուի, որի անունը ()քսէնտ էր, իսկ մականունը Աղիշէ: Բայց բարեբաղդաբար երկար չմնաց նա այս Աղիշէի մօտ, ըստ որում, կարճ միջոցում, տակաւին մի երկու ամիս չանցած, այս սրամիտ, ուշիմ և աշխոյժ երեսան այնպէս վարժ կարգալ և գրել սովորեցաւ, որ այնուհետեւ խեղճ վարժապետը շատ դժուարանումէր գոհացուցիչ պատասխան տալ իր մանուկ աշակերտի հետաքրքրութեան և արած հարցուածներին: Ահա ծնողքը, տեսնելով իրենց որդու ընդունակութիւնը, յառաջագիմնութիւնը և ուսման սէրը, միւս կողմից էլ վարժապետի տգիտութիւնը, հանեցին տիրացուի մօտից և տվին նորան Տէր Վաբրիէլ Պատկանեան քաջ հայկաբան քահանային, որ այն ժամանակ Վախիճեան էր և վարժապետութիւն էր անում: Այս գործունեայ և բանաստեղծ քահանայի Վախիճեան լինելը շատ լաւ հետեանքներ ունեցաւ Վալբանդեանցի համար: Քահանան, տեսնելով իր աշակերտի աշխոյժ բնասորութիւնը, սրամտութիւնը, ուշիմութիւնը և բանաստեղծական յարմարութիւնքը, առանձին ուշ դարձուց նորա վերայ և ամենայն ջերմեռանդութեամբ ու սիրով պարապեցաւ հետը: Արժապետի այս մասնաւոր հոգացողութիւնը և աշխատութիւնը ի զուր և անօգուտ չեղան, ըստ որում Վալբանդեանցը յառաջագիմնութեամբ ուսման մէջ բոլոր իր աշակերտակիցներին գերազանց հանդիսացաւ: Մինչև 1846 թիւը մնաց նա իր վարժապետի մօտ և ուսաւ հայկաբանութիւն, կրօնագիտութիւն, պատմութիւն և այլոց և մասամբ ուսուցիչն ընթերցանութիւն: Ունեցելով սէր և հակամիտութիւն գէպ ի հոգևորական կոչումը, ուսումնառութեան միջոցները ծառայումէր եկեղեցու մէջ դպրութեամբ, առաջ սուրբ Թորոսի և յետոյ սուրբ Առաւորչի եկեղեցիներում: Շատ սիրող էր երգեցողութեան, լաւ ձայն և նուրբ լսողութիւն ունէր: Արդէն այդ մատաղ հասակում բոլոր ժամասացութիւնը, շարականի մեծ մասը բերանացի գիտէր, և բոլորի եղանակներին ծանօթ էր: Հետագայ անցքը ցոյց է տալիս թէ որքան յառաջագիմնութիւն էր արած նա այն ժամանակ հայկաբանութեան մէջ: Աերսէս կաթողիկոսը վերադառնալով Ռուսաստանից Աջմիածին հանդիպումէ Վախիճեան և, կամենալով գաղափար ստանալ այն տեղի քահանաների մասին, հրամայումէ կանչել բոլորին առաջնորդարան: Վալիս են քահանայքը և քահանայացու սարկաւազները և կարգով կանգնումեն

կաթողիկոսի շորս կողմը. սա հարցնումէ նոցանից. «կայ ձեր մէջ քերականութիւն իմացող, թող յառաջ գայ». ամենքը լուս են մնում և չեն շարժվում իրենց տեղերից. յետոյ կաթողիկոսը իւրաքանչիւրին առանձին առանձին հարցնումէ, բայց ամենից էլ բացասական պատասխան է անում: (Միայն Տէր Վաբրիէլ Պատկանեանը ուրախառիթ բացառութիւն է լինում): Չարմանալով որ ամբողջ քաղաքի մէջ մի հատ քերականութիւն իմացող քահանայ չկայ, հրամայումէ բոլորին ազատ ժամանակները գնալ աշակերտել Մկրտիչ վարժապետ Ագենեանին, որ Ագենեանից էր եկած և երկար ժամանակ Վախիճեանում վարժապետութիւն էր անում: Այս քահանաների հետ միասին Վալբանդեանցին էլ, իբրև տիրացուի, հրամայեցին գնալ ճարտասանութիւն և տրամաբանութիւն սովորել: Սա մի երկու անգամ գնաց, բայց երրորդ անգամին իսպառ հրաժարվեցաւ, ասելով, «թէ ես ձեր սովորեցուցածը արդէն վաղուց սովորել եմ, եւ առաւել մանրամասնաբար քան թէ դուք դաս էք տալիս. ունիք նոր բան սովորեցնելու, սովորեցուցէք, եւ պատրաստ եմ ուրախութեամբ սովորելու, բայց եթէ չօճիք, ապա ուրեմն խնդրեմ արձակեցէք ինձ»: Մկրտիչ վարժապետը յայտնումէ այդ յանդուգն, բայց իրաւացի, պատասխանը Աերսէսին, որ ծիծաղելով պատուիրումէ մի գրաբառ շարագրութիւն գրել տալ նորան, որ տեսնեն թէ արդարեւ իմանումէ գրաբառը, եթէ ոչ: Բակոյն Մկրտիչ վարժապետը սալիս է նորան շարագրութեան բնաբանը եւ հրամայումէ որ իր գիմաց գրէ: Քաջասիրտ եւ շնորհալի պատանին առանց այլ եւ այլի նստում գրումէ եւ մեծապէս զարմացնումէ թէ Աերսէսին եւ թէ Մկրտիչ վարժապետին, որքան բովանդակութեամբ, այնքան եւ լեզուի կանոնաւորութեամբ: Բայց աւանդ, այդ շարագրութիւնը, որից կարելի էր եղբայրակել մասամբ նորա մտաւորական զարգացման աստիճանը այն ժամանակ, մեր համար բոլորովին կորած է, որպէս եւ շատ ուրիշ այդպիսի գրաւոր աշխատութիւնք կորած են Մոսկվա գալուց առաջ: Գուցէ թէ այդ շարագրութիւնը գտնվի հանգուցեալ Մկրտիչ վարժապետ Ագենեանի թղթերի մէջ: Լաւ կը լինէր եթէ Վալբանդեանցի եղբարքը կամ աղբականքը աշխատէին ձեռք բերելու թէ այդ վերոյիշած շարագրութիւնը եւ թէ առ հասարակ նորանից մնացած միւս գրաւոր աշխատութիւնքը: Մկրտիչ վարժապետի թղթերը, ինչպէս լսեցինք, անցել են Վաբրիէլ եպիսկոպոս Այվազեանի ձեռքը, ուրեմն եթէ

այն շարագրութիւնն էլ այդ թղթերի մէջ էր, կարող ենք յուսալ որ անկորուստ կմնայ եւ մի օր թերեւս մեր ձեռքն էլ կը հասնէ: Հեռանալով փոքր ինչ մեր առարկայից, այս տեղեկութիւնն էլ հարկաւոր կը համարեմ հաղորդել մեր հայրենակիցներին: Ալբանդեանցը իր կենդանութեան ժամանակ քանիցս ասել է մեզ— եւ այդ նորա մօտ բարեկամներին էլ լաւ յայտնի— թէ մի օր տված է եղել հ. Աղափիրեանցին ոտանաւորների տետրակ, որ վերջինս առել տարել է իր հետ եւ այնուհետեւ էլ չէ վերագործուցել հեղինակին. իսկ Ալբանդեանցը իր կողմից, բանի տեղ չդնելով այդ ոտանաւորները, աւելորդ էր համարել պահանջել նորանից: Մեզ շատ ցանկալի էր իմանալ թէ արդեօք ի՞նչ տեսակ ոտանաւորներ են այդ վերոյիշած տետրակի մէջ բովանդակած ոտանաւորները: Այժմէ արդարեւ այդ տետրակը հ. Աղափիրեանցի մօտն է, ապա ուրեմն կարող ենք միանգամայն վստահ լինել, որ մեծապատիւ վարդապետը կը բարեհաճի նոյն ոտանաւորները ազգի սեփականութիւն անել, հրատարակելով որ եւ է օրագրի կամ լրագրի մէջ (կը յուսանք որ պ. Սիմեօնեանցը ուրախութեամբ կը բարեհաճի տպել իր լրագրի մէջ, եթէ արժանի են դոքա տպագրելու), կամ առանձին տետրակ տպելով, եւ կամ, եթէ ինքը հնար չունի տպելու, հաղորդելով մեզ, որ մենք, եթէ հանգամանքները ներեն, հրատարակենք նորա միւս գրուածների հետ միասին: Մեր այս խնդիրը վերաբերվում է նմանապէս եւ նոցա, որոնց ձեռքը որ եւ եցէ զիպուածով անցել են Ալբանդեանցի գրուածքը: Մեր հին հեղինակների շարագրութիւններից շատերը կորել անհետացել են, ցանկալի է որ գոնէ նորերի աշխատութիւնքը անկորուստ մնան:

Ինչպէս տեսանք, արդէն 1846 թուականին 16 տարեկան ժրգլուի պատանին բաւական յաջողակ գրուակ հայերէն եւ ազատ կարգուակ մեր հին Մատենագրերի գործքը: Այժմէ նորա գիտութեան վրայ աւելցնենք եւ բնածին քանքարը— ճարտար լեզուն եւ գրիչը, եթէ նաև աչքի առաջ ունենանք Ալախիջեանցոց մտաւոր զարգացման ցած աստիճանը, այն ժամանակ հասկանալի կը լինի մեզ նորա ազգեցութիւնը արդէն այդ մատաղ հասակից Ալախիջեանի հասարակութեան վերայ: Թէ հոգեւորականք եւ թէ աշխարհականք այնպիսի համարմունք ունէին նորա վերայ, որ երբէք նորա հետ այնպէս չէին վարվում, որպէս սովոր էին վարվել մի հասարակ տիրացուի հետ, այլ ընդհակառակն միշտ պատվելով եւ սիրելով ընդունումէին նորան

իրենց մօտ, եւ շատ անգամ էլ նորա մասնակցութեամբ եւ խորհուրդների համեմատ կատարումէին քաղաքին եւ հասարակութեան վերաբերեալ գործերը. ստէպ ստէպ կանչուակէին նորան իրենց մօտ եւ գրել էին տալիս զանազան հարկաւոր թղթեր, որ սա միշտ ամենայն պատրաստականութեամբ եւ գոհացուցիչ կերպով կատարումէր: Ասկայն այսպիսի միօրինակ եւ տաղտկալի կեանքից, այս անորոշ վիճակից ժիր եւ գործունեայ պատանին շուտ ձանձրացաւ, այնպէս որ օրէ օր եւ ժամէ ժամ սպասումէր մի յարմար զիպուածի այս գրութիւնից ելանելու: Ահա վերջապէս հանգամանքները փոխվեցան եւ Ալբանդեանցի համար բացվեցաւ նոր օր: Սրբազան Մատթէոս Արքեպիսկոպոս Ա. Եհպետեանը, որ նշանակված էր առաջնորդ Ալախիջեանի եւ Բեսարարիայի վիճակին, 1847 թուին եկաւ Աոր Ալախիջեան եւ, տեսնելով Ալբանդեանցի ընդունակութիւնը եւ գրագիտութիւնը, առաւ նրան իր մօտ եւ շատ ժամանակ չանցած կարգեց քարտուղար: Եւ այսպէս Ալբանդեանցի գրութիւնը ամեն կողմից միանգամայն ապահովեցաւ Մատթէոսի մօտ: Քարտուղարութեան պաշտօնը նա պարզերեսութեամբ կատարեց վեց տարի շարունակ եւ արդիւնաւոր ու ջերմեռանդ ծառայութեամբ համակրութիւնը գրաւեց եւ հասարակութեան եւ առաջնորդին: Սրբազանը առանց նորա մասնակցութեան եւ խորհրդին ոչ մի կարգագրութիւն կամ տնօրէնութիւն չէր անում, ամենայն քայլափոխին զիմումէր իր հանձարեղ քարտուղարին եւ նորա մտքերի համեմատ գործ էր տեսնում: Սրբազանի համարմունքը իր երիտասարդ քարտուղարի վերայ այնչափ մեծ էր, որ վերջն էլ, սորա այն պաշտօնից զուրս գալուց յետոյ, զիմումէր սորան խորհուրդ հարցնելու: Մեզ պատահեցաւ կարգալ Մատթէոսի մի նամակը Ալբանդեանցին ուղղած, որի մէջ գրած էր յետագայ տողերը. «գիտաւորութիւն ունիմ մի ազգային դպրոց բանալ Հաշտարխանու մէջ, բայց շատ արգելքներ... դիմացս կան, ուստի չեմ իմանում ինչպէս կատարեմ գիտաւորութիւնըս. ահա զարձեալ քեզ եմ զիմում եւ քո շնորքով յոյս ունիմ յառաջ տանել այս գործը եւ այլն:»

Այն ժամանակները բարձրացաւ Ալախիջեանի եկեղեցական փոզերի խնդիրը, որ տակաւին մինչև այսօր, ասումեն, օրինաւորապէս չէ վճռած, եւ Ալբանդեանցը ասպարէզ զուրս գալով քաջապէս պատերազմումէ հակառակորդների հետ, ամենայն զօրութեամբ աշխատելով ազգի եւ եկեղեցու իրաւունքները պաշտպանել մի քանի մաս-

նաւոր անձանց բռնարարութիւնից: Այս նպատակին հասանելու համար նա բնաւ չէ խնայում իր հակառակորդներին. անողորմաբար յարձակվումէ նոցա վերայ, հրապարակումէ ոմանց չարագործութիւնը և անամօթ արարմունքը և այսպէս ժողովրդի պահանջմանց իրաւունքը և գործի ճշմարտութիւնը ակներև է կացուցանում ամենի համար:

Անշուշտ այս տեսակ գործունէութիւնը կարող չէր ախորժ լինել նոցա, որոնց վերայ անմիջապէս ուղղած էին Վալբանդեանցի նետերը. ուստի դռքա իրենց պատիւը և անձնական օգուտը պահպանելու համար ստիպված էին զհարդ և իցէ խափանառիթ լինել փողերի խնդրի նորոգվելուն: Ահա այս իսկ պատճառով մի քանի նշանաւոր անձինք Վախիջևանի մէջ սկսան անիրաւաբար ամենայն կերպ հալածել Վալբանդեանցին, գանգատներ, բողոքներ անգամ գրեցին նորանից Վերսէս կաթողիկոսին, խնդրելով որ սա արժանաւոր պատիժ տայ այս խռովարար եւ ապստամբ տիրացուին: Այդ միջոցին Վալբանդեանցը, կամենալով արձակվել հոգեւորականութիւնից, խնդիր էր գրած սուրբ Սինօզ, որ տնօրէնութիւն անեն եւ իրեն արձակուողը տան: Վերսէս կաթողիկոսը, անդադար գանգատներ ստանալով նորա մասին եւ ուրիշ պատճառներով բարկացած լինելով նորա վրայ, չէ համաձայնում արձակել հոգեւորականութիւնից, այլ պահանջումէ նորան Աջմիածին: Վալբանդեանցը չէ հնազանդում իր մեծի հրամանին, ուստի այս վերջինս կարգադրութիւն է անում որ բռնեն նորան եւ կոնվոյով ուղարկեն Աջմիածին: Ասելով այս անախորժ լուրը եւ իմանալով որ իր թշնամիքը Վախիջևանի մէջ հէնց պատրաստ նստել են այդ հրամանը կատարելու, ձգում փախչում է նա Վախիջևանից եւ գնումէ Բեսարաբիա Սատթէոսի մօտ, որ ամենայն կերպ պաշտպանումէ նորան հալածանքի երեսից: Բայց կաթողիկոսը տակաւին չէ դադարում պահանջել նորան Աջմիածին, այնպէս որ խեղճը թափառական հրէայի նման ստիպված է լինում քաղաքէ քաղաք շրջել, մեծապէս աշխատելով որ եւ է ճանապարհով ստանալ իր արձակման թուղթը և այնուհետեւ ազատվել առաջիկայ վտանգից: Աւարգարեւ այդ միջոցներին նա ստանումէ մեղ անյայտ ճանապարհով իր արձակման թուղթը եւ 1853 թուակ. գալիս է Սոսկվա եւ այնտեղից Ս. Պետերբուրգ, ուր Վայսերական շամալարանում քննութիւն տալով ստանումէ վարժապետութեան վկայագիր եւ Ազգարեանց ճեմարանի մէջ կարգվումէ ուսու-

ցիչ հայոց լեզուի: Սակայն այստեղ եւս հանգստութիւն չէ գտնում Վալբանդեանցը, վասն զի Վերսէսը, իմանալով որ նա գնացել է Սոսկվա եւ նշանակվել է Հայոց լեզուի ուսուցիչ, իսկոյն յայտնումէ Սոսկվայի բարեկարգարանի ոստիկանին եւ պահանջումէ որ բռնեն այդ փախստական տիրացուին եւ անյապաղ ուղարկեն Աջմիածին: Ոստիկանը կարծելով որ Վալբանդեանցը իրաւ մի փախստական տիրացու է կամ առ հասարակ հոգեւորական կոչման մէջ է գտնվում, հետեւաբար ստորագրեալ է Սինօզին, գալիս է Ղեմարան եւ առանց այլեւայլի բանտարկումէ նորան, առանց յայտնելու անգամ Ղեմարանի կառավարիչներին: Սիւս օր հանգուցեալ Տէր Սուսէս քահանան Սոսկվայի եւ ուսուցչապետ Ս. Ս. Վաղարեանցը գնումեն բարեկարգարան եւ երաշխաւոր լինելով նորա մասին ազատումեն նորան այնտեղից: Այնուհետեւ Վալբանդեանցը իսկոյն տալիս է հրաժարականը եւ առնելով իր թղթերը Ղեմարանից ներկայացնումէ ոստիկանին եւ ապացուցանումէ որ փախստական տիրացու չէ, այլ աշխարհական ոմն եւ ուսուցիչ Հայոց լեզուի Ազգարեանց Ղեմարանում, եւ թէ նոյն Վերսէս կաթողիկոսի ստորագրութեամբ միանգամայն արձակված հոգեւորականութիւնից

Չգալով իր թերի կրթութիւնը եւ միակողմանի գրագիտութիւնը, տեսնելով որ միայն հայերէնով անհնար է յառաջ գնալ ուսման մէջ, նա սկսումէ կանոնաւորապէս ուսանել եւրոպական լեզուներ եւ իմաստասիրել այն գիտութիւնքը, որ անհրաժեշտ հարկաւոր են համալսարան մտնելու համար. կարդումէ ընտիր ընտիր գրեանք եւ այնչափ հարստացնումէ եւ լուսաւորում իր միտքը զանազան տեղեկութիւններով, որ կարողանումէ Սոսկվայի համալսարանի բժշկական հատուածում պրօֆեսսորների դասախօսութիւնքը լսել եւ հասկանալ: Բայց չաւարտած եւ քննութիւն չտված թողնումէ համալսարանը եւ մասնաւորապէս պարապումէ գրականութեան: 1858 թուականին բացվումէ նորա համար լայն ասպարէզ գործունէութեան: Վոյն թուականին գիտնական և անուանի ուսուցչապետ Վաղարեանցը հրատարակումէ «Էլուխափայլ» օրագիրը, որ նուիրված էր Հայոց ազգի ճշմարիտ օգտին և դաստիարակութեանը, և Վալբանդեանցը լինումէ նորա քանքարաւոր գործակիցներից մինը: Իր բազմատեսակ յօդուածներով, եւրոպական լուսաւոր գաղափարներ և մտքեր քարոզելով, մեծ ազդեցութիւն է գործում կարգացող դասակարգի վերայ. անդադար ազգային խնդիրներ յա-

րուցանելով, նա աներկիւղաբար հրապարակումէ ազգի պակասութիւնքը և կանխակալ կարծիքները, իրենց պատճառներով հանդերձ, ցոյց է տալիս ազգի կարօտութիւնքը և այն միջոցները, որով կարելի է լցուցանել այդ կարօտութիւնքը, և այսպիսի փութաջան գործունէութեամբ ձեռք ձեռքի տված գիտնական և բազմահմուտ խմբագրի հետ աշխատումէ զարթուցանել քնից մեր թմրած ժողովուրդը, բարձրացուցանել նորան և ցուցանել այն ճանապարհը, որ տանումէ դէպի լուսաւորութիւն: **Վորա յիշատակարանները, Մեռելահարցուկը, պօլեմիկական և կրիտիկական յօդուածները, նաև բանաստեղծութիւնքը, «Հիւսիսափայլ» գլխաւոր զարդն էին և ամեն օրագրի կարող էին պատիւ բերել:** **Մ**ին սկզբին ամեն բաժանորդ անհամբերութեամբ սպասումէր **Հիւսիսափայլի** նոր համարը դուրս գալուն, որ կարդայ **Կոմս-Ղամանուէլի (Վալբ.) յիշատակարանը** կամ միւս յօդուածները: **Վալբանդեանցի այդպիսի ժողովրդականութիւն ստանալը հասկանալի կը լինի մեզ, եթէ միտ գնենք նորա գրուածների նիւթին ու բովանդակութեանը և գործածած դիւրմբունելի լեզուին:** **Ն**չպէս որ ամենին յայտնի է, մինչև **Հիւսիսափայլի** հրատարակվելը մենք օրինաւոր, ժողովրդի կարօտը լցուցանող, օրագիր կամ լրագիր չունէինք **Ռուսաստանում, եթէ վերջին տարիները մի քանի գրեանք դուրս եկան, դոքա գլխաւորապէս գրաբառ էին և այնպիսի առարկաների վրայ խօսումէին, որ միայն մի քանի մասնաւոր անձանց հասկանալի էր, կամ այնպիսի անտաշ աշխարհաբառ գրուածք էին, որ գրաբառից էլ աւելի դժար էր հասկանալ, ուստի ժողովուրդը բնականաբար անտարբեր էր մընում դէպի այդ տեսակ գրականութիւնը, ահա հրատարակվումէ **Հիւսիսափայլ** օրագիրը բոլորովին նոր ուղղութեամբ և նոր գաղափարներով: նորա գրօջը լինումէ կենդանի ժողովրդի համար կենդանի բարբառով գրել և այնպիսի նիւթերի վերայ խօսել, որ ժողովուրդը հասկանայ, մարտէ և մարտելուց յետոյ կարողանայ գործ դնել իր բարոյական և նիւթական գրութիւնը բարեօրէն: **Մ**յսպէս խօսելով մենք չկամինք ասել, թէ **Հիւսիսափայլը** բնաւ պակասութիւնք չէ ունեցել. քա՛ն լիցի, մեր այժմեան գրութեան մէջ, երբ ամենայն բան նորից պէտքէ սկսել, այդ անկարելի է պահանջել: **Խմբագրօղը, —** հետու լինելով հայերից, չունենալով լաւ և գործունէայ աշխատակիցներ հայաբնակ քաղաքներում, որ հազորդէին նորան ժողովրդի գրութիւնը, վիճակը, կարօտութիւնքը**

և այլ կարևոր տեղեկութիւնք, չունենալով պէտք եղածի չափ բաժանորդներ, որ կարողանայ լաւ գործակիցներ ձարել և պատշաճապէս վարձատրել սոցա, վերջապէս այլ հազար ու մի անյարմար պայմանների մէջ լինելով, խմբագրօղը հարկաւ կարող չէ հրատարակել մի այնպիսի օրագիր, որ ըստ ամենայնի համապատասխան լինէր ժողովրդի գրութեան և կարօտութեան: **Խոստովանելով** այս ճշմարտութիւնը և վերագրելով պակասութեանց մի մասը այն անյաջող պայմաններին, որոնց հետ կապակից է մի հայ հեղինակի, թող թէ օրագիր հրատարակողի, գործունէութիւնը, կարող չենք ուրանալ, որ այդ պաշտօնը **Հիւսիսափայլը** աւելի յաջողութեամբ և բարեխղճաբար կատարեց, քան թէ միւս օրագիրները, կարող չենք ուրանալ, որ **Հիւսիսափայլը** իր գործնական ուղղութեամբ, աղգային պատուական յօդուածներով և դիւրմբունելի լեզուով շատ արդիւնաւոր հետեւներն ունեցաւ թէ ազգին և թէ արդի գրականութեան համար. կարող չենք նաև ուրանալ, որ **Վալբանդեանցը** իր յօդուածներով մեծապէս նպաստաւորեց նորա յառաջագիմութեան. **Վալբանդեանցի «Յիշատակարանը, Մեռելահարցուկը, Վամակները, Մխիթար և Մխիթարեանք» յօդուածը և թարգմանութիւնքը անգամ այժմ ևս ուրախութեամբ կարդացվումէ:** **Մ**յսպէս երկու երեք տարի շարունակ փառաւորապէս կրեց նա **Հիւսիսափայլի** գրօջը, իր ճարտար գրչի տակ արդի աշխարհաբառ լեզուն մշակելով և բազմատեսակ ու աղգային քանքարաւոր գրուածներով հարստացնելով մեր մանուկ գրականութիւնը: **Ս**ակայն կներենք մեզ մի նկատողութիւն էլ անել նորա գրականական գործունէութեան վերաբերութեամբ, նկարագրելով ազգի պակասութիւնքը, նախապաշարմունքը և այլն, յարձակվելով նոցա վերայ, որոնք փոխանակ ազգի խաւար կողմերը փարատել աշխատելու, անտարբերութեամբ և իրենց արարմունքներով աւելի մլտա են հասուցանում ազգին, քան թէ օգուտ, նա չէ խնայում մասնաւոր մարդոց սիրտը խոցել, ծաղրածութեամբ երևան հանելով նոցա ընտանեկան կեանքը, հրապարակելով այնպիսի հանգամանքներ և տեղեկութիւնք, որ ոչ մի խորհուրդ և նշանակութիւն կարող չեն ունենալ կարդացողի համար, և որ հեղինակին էլ ամենեին պատիւ չեն բերում: **Պ**էտք է խոստովանած, որ **Վալբանդեանցը** ունէր այդպիսի տրամադրութիւն—որին ասես վերաւորել և ծիծաղի բարձրացնել թէ խօսքով և թէ գրով: **Մ**ասամբ ահա այդ յատկութիւնն էր պատճառը, որ իր քարտուղարութեան օրից

սկսած մինչև մահը շատ թշնամիներ ունեցաւ, որոնք վրէժխնդրութեամբ զինուորված զգալի փեաներ հասուցին նորան: Բայց մենք մանրամասն կը խօսենք այս և այլ այսպիսի բաների մասին, երբ, եթէ հանգամանքները ներսն, հրատարակենք նորա միւս աշխատասիրութիւնքը լիակատար կենցաղագրութեամբ հանդերձ:

1858 թուականի վերջերը Վալբանդեանցը մասամբ տկարութեան պատճառով և մասամբ բան տեսելու սովորելու դիտաւորութեամբ գնաց արտասահման, շրջելով Պօլիս, Վեննա, Փարէզ և այլ քաղաքներ: Ըստ քաղաքներում ծանօթացաւ և բարեկամացաւ հայերի հետ և իր շիւսիսափայլին ուղղած նամակների մէջ նկարագրեց սոցա վիճակը և գործերը: 1859 թ, վերջերին վերագրծաւ Պետերբուրգ և սկսաւ կանդիդատի վկայագիր ստանալու համար քննութեան պատրաստվիլ, և իրօք 1860 թ. Պետերբուրգի կայսերական համալսարանում քննութիւն տալով ստացաւ արեւելեան լեզուագիտութեան կանդիդատի աստիճան:

Ըստնուհետեւ Վալբանդեանցը առ ժամանակ թողնումէ գրականութեան ասպարէզը և գնումէ Վոր Վախիջեան շնորհական հրիտակների խնդիրը յարուցանելու և որ և է կերպով վճռելու դիտաւորութեամբ: Նկատանի մեծատուն հայերը 70—75 տարի սորանից առաջ զանազան հրիտակներով մեծագումար փողեր էին կտակել զանազան քաղաքների, սոցա կարգում և Վախիջեանի, անունով, բայց մինչև 1860 թիւը այս ծանրակշիւ գործը մեր ազգի աններելի և սովորական անտարբերութեամբ, ծուլութեամբ և զանցառութեամբ բարձի թողի էր արած, և այսքան տարվայ միջոցում ոչ ում յանձնառու չէր եղել խիզախել այդպիսի հեռաւոր ճանապարհորդութիւն անելու և գործը աւարտելու, անհարկին կամ իր կարողութիւնից վեր սեպելով դորա յաջողութեամբ գլուխ բերելը, ոմանք էլ միանգամայն խելացնորութիւն էին համարում այսքան տարի անցնելուց յետոյ վեր կենալ այդպիսի հեռաւոր և փանգաւոր ճանապարհորդութիւն անել, և այսպէս այն փողերը Վախիջեանի համար կորածի կարգումն էին, ասես թէ ճակատագիրը Վալբանդեանցին էր ընտրել, որ երթայ երևան հանէ այն փողերը և բերէ տայ Վախիջեանին: Վալբանդեանցը յառաջագոյն տպեց շիւսիսափայլի մէջ այդ հրիտակները և գոցա մասին մի յօդուած հրատարակեց, առաջարկելով Վախիջեանի հասարակութեան, որ խորհուրդ անեն այդ մասին իրենց մէջ և օր ա-

ռաջ աշխատեն ձեռք բերել այն փողերը: Վախիջեանցիք ընդունեցին նորա առաջարկութիւնը, ժողով կազմեցին քաղաքական ատեանում (մագիստրատ) և ամենի համաձայնութեամբ ընտրեցին Վալբանդեանցին հասարակութեան կողմից երեսփոխան այդ գործի մասին: Ըստ ընտրութեան ժամանակ մի անցք է պատահում, որ աւելորդ չի լինիլ համառօտաբար պատմել այստեղ: Վալբանդեանցի և Վայրապետեանցի¹⁾ հակառակորդները աշխատումէին և կամենումէին անպատճառ մի ուրիշ մարդ ընտրել իրենց կուսակիցներից, ուստի, երբ որ ընտրութիւնը վերջացաւ, սոքա սկսան գոռալ և ասել. «այդ ընտրութիւնը, հետեւաբար եւ նորան տալու հաւատարմագիրը (добрепность) կանոնաւոր չէ եւ ամենեւին զօրութիւն չունի առանց առաջնորդի համաձայնութեան եւ ստորագրութեան, «ընտրութիւնը շիտակ չէ, աղբար, ազպէս անօրէնք բան չի լալ, մենք ազ բանին յօժարութիւն չենք տալ, առաջնորդը պէտքէ ձեռք գնէ, որ բանը թամամ ըլլայ, հանա հոս նստած է Մուխալը (Միք Վալբանդեանցը), օրէնքը մեղիմէն աղէկ գիտէ, կուղիքնը իրենմէն հարցուցէք շիտակէ ասածներս չէ նէ չէ»: Վալբանդեանցը, որ այդ միջոցին լուռ ու մունջ նստած էր եւ արդէն հասկացել էր բանի էութիւնը եւ գիտէր որ կողմից էր լինում քամին, վեր է կենում տեղից եւ տաք տաք խօսելուց ու առաջնորդի ստորագրութեան անպէտք եւ աւելորդ լինելը ապացուցանելուց յետոյ, աւելցնումէ մի քանի յանդուգն եւ վերաւորական խօսքեր առաջնորդի վերաբերութեամբ, հրաժարվելով միանգամայն առաջնորդի հոգաբարձութեան տակ գործ կատարել: Նակառակորդների փափուկ սիրտը վերաւորվումէ, որ հրապարակով ասվեցաւ անվայել խօսք առաջնորդին, դոքա իսկոյն բողբոլմեն Վալբանդեանցից քաղաքական ատեանի առաջ, բայց ատեանը չէ ընդունում բողբոքադիրը, ասելով, թէ նախ առաջնորդից հաւատարմագիր բերէք, որ տեսնենք թէ նա ձեզ հաւատացել է և իրաւունք տվել է իր փոխանակ բողբոքելու, թէ ոչ, իսկ այդ միջոցին Վալբանդեանցը կծկումէ Ս. Իշմիածին եւ Մատթէոս կաթողիկոսը իր ստորագրութեամբ վաւերացնումէ հաւատարմագիրը,

1) Ըն ժամանակ քաղաքացիութիւն էր եւ այդ գործը զլուս բերելու զլուսաւոր աշխատողներից մինը: Քաղաքացիք պէտք է երախտապարտ լինին այս պարսին, որ այնպիսի խոսովութեանց եւ երկպառակութեանց ժամանակ կարողացաւ ընթացք տալ հրիտակների գործին եւ մեծապէս նպաստաւորել նորա յաջողութեամբ աւարտվելուն:

որով ուղեւորվում է նա շնորհակատան: Ընդանում Գոլիս, Փարէզ, Լժնդոն, եւ այնտեղից Փարէզի ու Սուէսի ճանապարհով հասանում է վերջապէս Վալիաթա, ուր մեծամեծ դժուարութեանց եւ արգելքների հանդիպելով եւ յաղթելով հանում է բազմամեայ աւերակների տակից այն կտակած փողերի մնացորդը: Այլբանդեանցի նամակներից երեւում է, որ ճանապարհորդութեան ժամանակ արած նկատողութիւնքը, իր հաւաքած զանազան հետաքրքրական տեղեկութիւնքը այս տեղ ու այնտեղ ցրված հայերի մասին եւ այլ ուշադրութեան արժանի անցքեր, որ մանրամասնաբար գրած է եղել իր յիշատակարանի մէջ եւ միտք ունեցել է մի օր կարգի բերել ու հրատարակել, միւս շատ թղթերի հետ միասին բոլորովին կորել են, գոնէ նորա եղբոր մօտ մենք չգտանք այդպիսի բաներ: 1863 թ. Ապրիլի 8-ին Պետերբուրգից գրած նամակը յայտնապէս ցոյց է տալիս, որ այդ թուղթերը մինչեւ բերդից դուրս գալը նորա մօտն էին եւ մեռնելուց յետոյ անհետացել են. վերոյեջեալ նամակի մէջ խօսում է բողոքական միսիօնարների եւ Տաճկաստանի հայ-բողոքականների վրայ, եւ նամակի վերջը ասում է, թէ սոցա մասին յիշատակարանիս մէջ շատ տեղեկութիւնք կան, գուցէ մի օր Աստուծու աջողակով կարգի կը բերեմ եւ կը հրատարակեմ: Մենք այստեղ կը դնենք այդ նամակի բառացի թարգմանութիւնը, միայն առաջին երեսը բաց թողնելով, վասն զի իր ընտանիքի վրայ է խօսում 1):

1) Սերեւի եղբայր

Ես չգիտեմ ինչ է սպիւղ Բարսուղ քահանայն Տաճկաստանի բողոքական հայերի մասին, բայց զգում եմ եւ հաւատացած եմ, որ դա մի ախտակիր ներբողական է, իր եղբայրակիցները—բոս կոչման—ամերիկացի արկածախնդիր կրօնաւորների օգտի համար գրած: Ինչ որ էլ գրեն եւ սպեն առաքեալքը այդ գործի վերաբերութեամբ, զլիսովին սուտ է: Այդ տեսակ խնդիրների մէջ այնչափ կարելի է հաւատալ նոցա, որչափ կարելի է հաւատալ Յիսուսեաններին, երբ նոքա գրում են XVI եւ յետագայ դարերի պատմութիւնը: Ի հարկէ ով որ հիմնաւորապէս եւ մօտից չէ իմաստասիրել հայ-բողոքականի որպիսութիւնը եւ մանաւանդ այդ առաքեալների ինչ տեսակ մարդիկ լինելը, նա անպատճառ կը խաբվի: Բայց ինձ չեն կարող խաբել ոչ Բարսուղը եւ ոչ նոյն իսկ առաքելութեան ժողովը, որ աշխատում է նոյն սկզբունքների վերայ գործ կատարել, որ սկզբունքների վերայ աշխատում էր պատուելի Քրիստոսաբազմիկն շնորհաւորում եւ ճարտիպում եւ նորա յաջորդքը Չինաստանում: Աւաղ որ այս տեղ կարելի չէ գտնել «New York Herald» ամերիկական օրագրից, որի մէջ աղբակն են խառնում այդ սուտ առաքեալներին: Եմանապէս շատ յօրուածներ սպվեցան Tims'ի 1861—62 տարուայ համարներում ընդդէմ այդ առաքեալներին: Պէտք է ասել, որ դժբա մեծ ուժիկ էին ստանում որպէս քարոզիչք Աւետարանի Տաճ-

Այսպէս գործը յաջողութեամբ աւարտելով, 1862 թ. Յունիսի մէջ վերադառնում է Պետերբուրգ եւ 25 օր մնում այնտեղ, երկար, վատակեցուցիչ եւ վտանգաւոր ճանապարհորդութիւնից փոքր ինչ հանգստանալու համար: Այդ կարճ միջոցին նա պատրաստութիւն է տեսնում հին շայաստանի քարտի տպագրութեան մասին, եւ կարգադրութիւն է անում, որ մի ամսից, իր Ախիլեան գնալ ու վերադառնալուց յետոյ, սկսվի տպագրութիւնը, որի մասին է. Մեղու Լրագրի մէջ էլ յայտարարութիւն է տպում: Յետոյ գնում է Մոսկվա եւ մի շաբաթ էլ այն տեղ է մնում: Մոսկվայից ճանապարհ է ընկնում դէպի Ախիլեան, հասարակութեան հաշիւ ու համար տալու գիտաւորութեամբ: Բայց յառաջ քան քաղաքին հաշիւ տալը, հարկ է լինում կառավարութեան հաշիւ տալ եւ կրկին վերադառնալ

կաստանի մահամեակներին. պարոն առաքեալները իրենց ստեղծած հաւատացուցել էին, թէ բոլոր Հայոց ազգը մահամեական է, եւ այն նորարարների անշնան թիւը, որ փողով կամ անզիլայի դեպանութեան հոգաբարձութեամբ էր գնալ, հասուցել էին մինչեւ տաք հազարների: Խաբեալութիւնը վերջապէս յայտնվեցաւ. Գուսպիկն պահանջեցին Ամերիկա, ուր նա անցած տարի (1862) աւարտեց իր կեանքը: Երկու շողեկառք միմեանց հանդիպելով տարին նորան այն տեղ, ուր որդն ոչ մեռանի եւ հուրն ոչ չիջանի, միանգամայն ազատելով նորան պատասխանատվութիւնից եւ դատաստանից:

Այդ սուտ առաքեալներից մէկը ինձ էլ պատահեցաւ շողեկաւ մէջ, որ Չմիւնայից բերում էր մեզ Պոլիս: Սորա փոքրօրութիւնը եւ անամօթութիւնը այն աստիճանին հասել էր, որ չկարողացաւ այստեղ էլ ինքն իրեն զսպել եւ սկսաւ մի տանու թը տարեկան հայի քարոզել: Խեղճ պատանին միանգամայն շիտթված սորա արած հարցուածներից եւ ամաչելով, որ իր մայրենի եկեղեցու վրայ լրբաբար եւ անամօթաբար ծիծաղում է, զրեթէ արտասուխառոն աչքերով դիմեց իմ պաշտպանութեան այն աներես եւ լիբը կրօնաւորից: Ես բարձրացայ տախտակաձաճի վերայ, իսկ առաքեալը բնաւ չկարծեցով որ մօտը կանգնած է հաւատափութութիւն քարոզողների մահաբեր թոյնը, արձակ համարձակ շարունակում էր իր գործը տաճկերէն լեզուով: Առաջ կամաց կամաց նորան ձեռք առի, բայց յետոյ երեւի էլ Աւետարանը եւ առաքելութիւնը զըլիսին չէին դալիս, վասն զի մինչեւ մեր Պոլիս հասանելը ներքնայարկից զուրկ դուրս չհասնեց:

Համառօտ խօսելով ահա բոլոր բանի էութիւնը որտեղ է. Տաճկաստանի հայերը դատնվում են արտաքայ պաշտպանութեան. Մեղիական եւ Քրիստոսական կառավարութիւնը այդ բանը իրենց օգտին են ծառայեցնում, իրենց պաշտպանութեան տակ ստնելով փաշաներից բռնաբարված այն քրիստոնեաներին, որոնք դատնում են կաթոլիկ կամ բողոքական: Ահա միակ թալիսմանը, որի վերայ հիմնվում էր այդ կրօնների յառաջագիմութիւնը Տաճկաստանի մէջ բառատուն թուականներին: Հիմի ամենեւեւ յառաջագիմութիւն չկայ, թող թէ շատերը վերադարձան իրենց մայրենի եկեղեցու ծոցը: Ով որ այս կէտից նայէ բանի վրայ, բնականաբար կը գայ յետագայ հարցին. թէ ինչու թող է տալիս Տաճիկի կառավարութիւնը, երբ որ պարզ եւ հաս-

Պետերբուրգ եւ առանց երկու ամսի ուղիղ երեք տարի մնալ այնտեղ զանազան պատճառներով...: Այս երեք տարվայ ընթացքում՝ Վալքանգեանցը չգաղարեցաւ գրականութեան պարապելուց, և մասնաւորապէս աշխատեցաւ այս մեր հրատարակած Ղազար Փարպեցու թղթի վերայ: Բացի Ղազար Փարպեցու թղթից նա թողաւ էլ քանի մի գրաւոր աշխատութիւնք, որոնց ցուցակը դնումենք այս յօդուածի վերջում: Այդ միջոցին նա ուսումնասիրեց նաև Աբրայեցոց ու Յունաց լեզուները և համեմատեց մեր Աստուածաշունչը Աբրայեցոց ու Յունաց Աստուածաշնչի հետ: Այս աշխատութեան արդիւնքը, որ կտոր կտոր թղթերի վերայ է գրած և մի ամբողջ շարագրութիւն չէ, կաշնատենք, եթէ հանգամանքները ներեն, տպել նորա միւս գրուածները հետ միասին:

Բայց այդպիսի անխոնջ պարապմունքը և այլ հանգամանքները շատ վնասակար ներգործութիւն ունեցան նորա արդէն խանգարված առողջութեան վերայ, հիւանդութիւնը այն տեղը հասուցել էր նորան, որ ճանաչել կարելի չէր. այն աստիճանի լլարել

կանալի են Մեդիայի եւ Ֆրանսիայի սկզբունքները: Թեև այդ հարցուածին շատ պատասխաններ կան, բայց ամենքն էլ կարճաօտ են:

Նախ, քան թուականներին, երբ անդթարար ներում եւ հալածութիւն հայ-կաթօլիկներին, երբ շարաքար տանջելով խումբ խումբ նոցա քշումէին Պօլսից, խուլաւոր ախտերի բժիշկ Լուի-Ֆրիլիպը խորհուրդ տուաւ Գուան, թէ մեծ անխոհեմութիւն է իր կողմից հալածել հայ-կաթօլիկներին, թէ կառավարութեան օգուտը ոչ թէ հալածել է հայ-կաթօլիկներին, այլ պաշտպանել նոցա եւ եթէ կարելի է մի ուրիշ կրօն դաւանողներին եւս, որ հայոց ազգը բաժանվի զանազան կուսակցութեանց, իրենց դաւանութիւններով միմեանց թշնամի եւ ատուգ: Մտարակոյս զգուշութեամբ ծածկեցին կառավարութեան աչքից մեղալի միւս կողմը, որի վրայ դրած էր խորամանկ ձեռքով, թէ որչափով տարածվի կաթօլիկութիւնը Տաճկաստանի մէջ, այնչափով կը լայնանայ Ֆրանսիայի բարոյական աղեցութիւնը: Գուռը հասկացաւ միայն առաջինը, եւ այդ յատուկ այն պատճառով, որ նոյն ժամանակները կամ փոքր ինչ գորանից առաջ Ո principe փոխադրել էին տաճկերէնի:

Բացի գորանից, ժամանակ առ ժամանակ կրկնումէին կառավարութեան սկանչին, թէ լուսաւորչական հայերը շատ վտանգաւոր են, ըստ որում նոցա եւ Յունաց եկեղեցիների մէջ շատ սակաւ տարբերութիւն կայ:

Գարձեալ պէտք է աւելցնել. այս բարոյութիւնքը կատարվումէին եւ կատարվումն հաւատի անունով, իսկ Գուռը իրաւունք չունի քրիստոնեաների հաւատին վերաբերեալ դորձերի մէջ մտնել: Բայց բաւական է, նամական շատ երկարացաւ. մի օր գուցէ Աստուծաւ աջողկելով յիշատակարանս կարգի կը բերեմ եւ կտպեմ ուշագրութեան արժանի շատ տեղեկութիւնք եւ դիտողութիւնք մեր ցիրուցան եղած հայերի մասին...: Բարեկամներս ողջնք եւ այլն:

Միշտ քեզ սիրող եղբայր
Միքայէլ:

էր, որ միայն ոսկոր ու կաշի էր դարձել, էլ առաջվայ աշխուժութիւնը ու կենդանութիւնը վրան չէր մնացել. բոլոր բարեկամների ու ծանօթների սիրտը մղտկումէր, նայելով առաջվայ կրակոտ հայկազնի ուրուականի վրայ:

1866 թուականին, երբ նա արդէն իր մասնաւոր գործերը վերջացուցած պատրաստութիւն էր տեսնում Սարատովեան նահանգի Կամիշլին քաղաքը գնալու, Պետերբուրգի երեւելի բժիշկները խորհուրդ տվին մնալ մի քանի ամիս այնտեղ իր տկար մարմինը և նուազած զօրութիւնը կազդուրելու: Սակայն բժիշկների բոլոր ջանքը և փոյթը ի զուր եղան, վասն զի նորա ցաւը անբարմանելի էր. թոքախտութիւնը այն աստիճան զարգացել էր, որ էլ ամենեւին հնար չկար օգնութիւն հասուցանելու նորան: Այսպէս յոյսը Աստուծու վրայ դրած, վեց ամիս հիւանդութեամբ անցնելով, վերջապէս սրտապնդած ուղեւորվեցաւ դէպի Կամիշլին: Մեծ ներութիւնք կրելով, դեկտեմբերի 7-ին մտաւ այնտեղ առաւել մեռած քանթէ կենդանի, ինչպէս ինքը ասումէ իր նամակի մէջ, որ գրած էր իր բարեկամներից մինին:

Բերումենք այստեղ բուն իրեն խօսքերը. Կամիշլին $\frac{15}{3}$ Գեկու. Յունվար

1865 Վ. Տ.

«Ամիս 7-ին մտայ Կամիշլին առաւել մեռած քան թէ կենդանի. ճանապարհին քաշածներս անտանելի էին իմ վիճակում, բայց դարձեալ վերջին ուժերս և ոգիներս գործ դնելով դիմագանք: Ասայ այստեղ հազիւ մի բնակարան գտայ և 4 օր պառկած էի ջերմով բռնված մինչև ստիպվեցայ հրաւիրել տեղւոյս բժիշկներից մինը և ինդրել որ տայ ինձ քինա և այլ և այլն, ընդունեցի, և այս 2—3 օրն էլ տան պիտանի բաները ձարելու աշխատելով ահա այսօր առաջին նամակը գրումեմ Ձեզ եւ

. Այս քաղաքի մասին լաւ բան չունիմ ասելիք, անպիտան մի տեղ է և ձմեռը բոլորովին մեռած, ամառը, ասումեն, մի կենդանութիւն փայլումէ անդադար շոգեխաւերի եւ անցորդների յաճախութեան պատճառով. բայց ես դորանից էլ օգուտ չպիտի քաղեմ. պատճառ, ապրիլի 15 ին թէ միայն մնացի կենդանի կերթամ քաղաքից գուրս մի հոլտի մէջ ուր շատ ծառաստանք կան եւ աղբիւրներ եւ ուր բժիշկ Վայգենսկը կուսիս է խմացնում տկարներին, ուրեմն մինչև սեպտեմբեր

գրեթէ ես կը մնամ այնտեղ, ինչ կըլլայ եղեր: Ինձանից շատ նամակ մի պահանջեցէք, գիտէ Մատուած որ չունիմ ուժ եւ զօրութիւն: Մյս տողերը գրուեմ, բայց կուրծքս եւ թիկունքս ցաւից խեղդումեն, երբ մի փոքր առողջանամ պարապուծիւնից այնքան գրիմ որ դուք էլ զգուիք, բայց առ այժմ ներեցէք»:

Մեռնելուց երկու ամիս առաջ մի նամակ էլ գրուե՛, որի մէջ սրտաշարժ կերպով նկարագրուե՛ իր թշուառ եւ աղետալի գրութիւնը, ահա քաղումենք նամակից այն կտորը եւ գնումենք այստեղ.

«Մյստեղ բժիշկ Վայտնեմը, որ կուժիտով պարապումէր ամառները մասնաւոր կերպով, զժբաղաբար տեղափոխվումէ գէպի Սարատով, ուստի ինձ հարկ եղաւ ամսոյս 15-ից վաղօրօք խնդիր գրել առ Գաւառապետն որ հրաման հանէ կամ ինքը տայ Մայիսի 1-ից մինչեւ Օգոստ. 15 երթալ Սամարի գաւառը, Սամարից 60 վերստ հեռի, կուժիս խմելու, թէեւ մինչեւ Մայիսի 1 ը հասնելը Մատուած գիտէ, այս ոչ թէ լոկ իմ խօսքն է, այլ այս տեղի եղածներից ամենալաւ Վինօգրադով բժիշկը ինձ պարզապէս ասաց եւ ես օրէ օր մօտենումեմ գերեզմանին: Հաւատացէք այնպէս վատած եմ այժմ, որ ինքս ինձ հայելիի մէջ տեսնել վախենումեմ, վկայ է Մատուած, ջերմը ամենայն օր հոգիս է հանում, քրտինքը, հաղը եւ թուքը թիւ չունի, աւելցուր սոցա վերայ իմ անօգնական միայնութիւնը, մի կուխարկա (կերակուր եփող աղախին) ունիմ անունով միայն շէն կաշա գիտէ որ ես չեմ ուտում, այլ բան բնաւ, ուրիշ բան էլ չկայ: Ուր թողում բարոյական անախորժութիւնքը ամենայն քայլափոխ . . . բժիշկը ինձ պատուիրումէ սաստիկ խաղաղութիւն հոգւոյ, բայց թողումեն խաղաղ, մի չնչին խաղաղութիւն ինչերով է ձեռք գալիս, ինչ օգուտ, գրել չեմ կարող, խոհեմութեամբ հասկացիր», եւ . . . Միք. Վալբանդեանց:

Մյսպէս չորս ամիս դառն եւ անմխիթար օրեր տեսնելով, վախճանեցաւ Մարտ ամսի 13: Մեղու Հայաստանի լրագրի 1866 թ. 19 համարում տպած է նորա թաղման հանդիսի ստորագրութիւնը, որ մենք այստեղ բերումենք նոյնութեամբ. «Վա (Վալբանդեանը) զգալով իր մահուան մօտենալը յայտնեց իր ցանկութիւնը, որ նորա մարմինը թաղվի իր հայրենի քաղաքում, Վոր Վախիջեանում, որ եւ կատարվեցաւ: Վորա երեք եղբայրները շոգեմալով բերին հանգուցելոյ մարմինը Վոր Վախիջեան, ուր Գօն

գետի ափումը սպասումէր մեծ բազմութիւն նորան ընդունելու համար: Բազմութիւ յուղարկաւորները եւ Վախիջեանու բոլոր եկեղեցական դասը հանդիսով տարան մարմինը 1 ռուսաւորչի մայր եկեղեցին: Մյս էր ապրիլի 13: Միւս օրը ժամը 10-ին սկսաւ սուրբ պատարագը հանգուցելոյ համար: Խուռն բազմութիւն ժողովրդոց եկել էին իրանց վերջին հրաժարականը տալու իրանց բարեկամի անշնչացած մարմնոյն: Պատարագից յետ, ծերունի եւ գերապատիւ Մկրտիչ վարդապետը ասաց ազու քարող, որի մէջ յիշեց հանգուցելոյ բարի եւ օգտաւէտ յատկութիւնները: Արբ աւարտեցաւ այս էլ, բոլոր եկեղեցականքը շրջապատեցին հանգուցելոյ դագաղը եւ կատարեցին հանգստեան կարգը, այս ժամանակ յարգոյապատիւ պ. բժիշկ Յովհաննէս Բերբերեանցը կարգաց դամբանական ճառ, որից յետ բոլոր բազմութիւնը յուղարկաւորեցին հանգուցելոյ մարմինը մինչեւ քաղաքից դուրս, ուր դրվեցաւ դագաղը առանձին պատրաստած կառքի վերայ, որնոր տարաւ նրան հանգստեան տեղը: Սուրբ Խաչ վանքը, ուր հետեւեցին նրան բոլոր եկեղեցականները եւ բազմութիւ ժողովրդականները կառքերով: Մյստեղ կատարվեցաւ թաղման վերջին կարգը ու մարմինը դրին գերեզմանի մէջ: Պատրաստած էր մեծ հացկերոյթ, որնոր վայելեցին բոլոր եկեղեցականները եւ յուղարկաւորները, ու ողորմի ասելով հանգուցելոյ հոգուն եւ օրհնելով նորա յեշտակը դարձան քաղաքը»:

Մեր համար շատ բնական է եւ հասկանալի, որ Վախիջեանցիք այդպիսի մեծ համակրութիւն ցոյց տվին Վալբանդեանցին, որ, իրարած ծառայութիւններով եւ մանաւանդ Հնդկական հրիտակների գործը յաջողութեամբ գլուխ բերելով, անմոռանալի յիշատակ էր թողել Վախիջեանի մէջ եւ իր քաղաքացիներին երախտապարտ էր արել իրեն: Ինչ որ նօքա Վալբանդեանցի կենդանութեան ժամանակ չկարողացան կամ միջոց չունեցան հատուցանելու նորան, հատուցին մեռնելուց յետոյ, փառաւորապէս եւ մեծ հանդիսով թաղելով նորա մարմինը: Իսկ այն կոիւնները եւ անբաւականութիւնքը, որ ծագեցան այդ հանդիսաւոր թաղման պատճառով, ինչպէս յայտնվեցաւ վերջը, մի քանի փառազուրկ, խռովայոյզ եւ չարամիտ մարդոց պտուղ էր, որի դանտութիւնը, բարեբաղդաբար, ամենից առաջ ինքեանք վայելեցին: Ընդունելի լինի:

Բաց ի Փարպեցու թղթից, որ այժմ կարգացողն ձեռքին է, Վալբանդեանցը թողաւ յետագայ գրաւոր աշխատութիւնքը, որ տակաւին չեն տպած.

ա) Շերամաբուծութիւն. Աւրոպական անուանի բնապատումների շարագրութիւններից քաղած եւ Հայաստանի գրութեան յարմարեցուցած:

Այս գործը, որ այժմ մեր մօտն է, չէ պարզագրած եւ միանգամայն վերջացուցած, ուստի մենք պարզագրեցինք եւ մտադիր ենք որքան կարող ենք պակասը լրացուցանել, օգուտ քաղելով նոյն հեղինակների գրուածներից, որոնց համեմատ աշխատասիրել էր հանգուցեալը: Արբ յաջողի մեզ տպել գրան, մենք կը նշանակենք որն է մեր աւելցուցածը:

բ) Փորձ արդի աշխարհաբառ լեզուի քերականութեան (մինչեւ բայերը հասուցած): Այս քերականութեան վիճակը մեզ յայտնի չէ. նորա թղթերի մէջ մենք չգտանք այդպիսի բան, թէև բերդից գրած նամակների մէջ կարգումենք, որ անխոնջ պարապումէր այդ գործին եւ արդէն մինչեւ բայերը հասուցած էր: Մայց մի նամակին մէջն էլ ասումէ. «եթէ ես ինքս չհաւանեմ այս գործին, իմացած եղիք, որ ոչ ոյ չի տեսնել գրան». մի գուցէ ինքը հեղինակը չհաւանելով իր գրածին ոչնչացուցել է: Արկու նամակի մէջ մասնաւորապէս խօսումէ իր քերականութեան եւ աշխարհաբառի վերայ, եւ մեծ բաւականութեամբ է խօսում: Մենք այս գրքի քամակում գրինք այդ երկու հետաքրքրութեան արժանի նամակները:

գ) Սօս և Սարդիթ եր վեպասանութեան քննութիւնը: Մասնականին մեծ յօդուած է եւ մեզ յայտնի է ում մօտն է գտնվում:

դ. Աղցմիք. Հին լեզուով գրած զանազան բանաստեղծութիւնք, որոնց մէջ ուշագրութեան արժանի է «Արկածք Մախաճօրն» պօէման:

ե) Աիրակոս Վանձակեցի վերնագրով մի յօդուած. Մենք չենք կարդացել եւ չգիտենք ինչ բան է: Այսքանը գիտենք, որ դա մի ուսումնական հայի մօտ անկորուստ պահված է:

զ) Ուրիշ զանազան մանր մունր յօդուածներ եւ աշխարհաբառ գրված ոտանաւորներ:

Այս յօդուածներից մի քանիսը և Փարպեցու թուղթը յաջողեցաւ մեզ ձեռք բերել անցած տարի: Ըրապարակով յայտնումենք մեր խորին շնորհակալութիւնը հանգուցեալ Մալբանդեանցի եղբարցը, Վրիգոր եւ Սերովբէ Մալբանդեանցին, որոնք ամենայն ջանք եւ փոյթ գործ էին գրել իրենց եղբօր գրաւոր աշխատութիւնքը ձեռք բերելու եւ անկորուստ պահելու: Արկին շնորհակալութիւն

այս ազնուամիտ պարոններին, որ վերը նշանակած յօդուածներից մինը «Շերամաբուծութիւնք» եւ «Ղազար Փարպեցու թուղթը» յանձնեցին մեզ եւ իրաւունք տվին հրատարակելու:

Եթէ մեր այս տպագրութիւնը տարածվի, մենք ձեռնամուխ կը լինենք տպելու եւ այն յօդուածները, որոնց մասին յիշեցինք վերեւում:

ՄԻՔԱՅԻԼ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ:

Ս. Պետրբուրգ.
1868 թ. Հոկ. 20:

Վ.Ե.Ջ.Ե.Ր ՓԵՐՊԵՅՈՒ ԳՐԸԾ

Թ ՈՒՂ Թ Ը ¹⁾

ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏ ԵՒ ՄԱՐԶՊԱՆ ՄԱՄԻՈՆՆԱՆՑ
ՏԻՐՈՋ ՎԱՀԱՆԻՆ

ՄԻԹ ԲԵՂԱԿԻՑ

ՄԵԳՂԿՐՐՈՒԹԻՒՆ ՍՏԵԽՕՍ ԵՐԵՂՆԵՐԻՆ

ԹՂԹԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ ²⁾

Աստուածային շնորհը միշտ լուսաւորումէ արգարութիւն սիրող-
ներին և մանաւանդ նորանց, որ սորվելով Քրիստոսից, որ ասումէ
«քննեցէք գրքերը», ³⁾ աստուածային բանի քննութեանը պարապե-
ցան: Մեծ շահ համարելով իրենց անձներին երկնաւոր խօսքը,
միշտ պատրաստ ունեցան, որ թէ իրենց և թէ լողների հոգիները
թեւաւորեն այն տեսակ առաքինութեան մասների հասնելու համար.
որովհետև, զօրութեան և իմաստութեան որպէս պատճառ ընդու-
նեցին այդ խօսքը, սորվելով մարգարէից, որ ասումէ, թէ «Ով
որ պատուականը անարգից հանէ իմ բերանը կը լինի»: ⁴⁾ Պատճառ,
ճշմարիտ, արդար և օրինաւոր խօսքը, ժողովրդին խրատելու հա-
մար ասված, երկնաւոր լուսով ծաղկեցնելով, պողաբեր է անում
լողների հոգիները: Այս մարդիկը, վաճառականների նման, ծով
ու ցամաք ման են գալիս, իրենց մտքի խորհուրդը երկնաւոր և
չապականվօղ գանձով հարստացնելու համար, որ իրենցից խնդրող-
ներին տալ կարողանան աստուածային խօսքը, հոգու փրկութեան
համար:

Այս տեսակ մարդերից մէկը, երանելի Ղազարը, սիրող և պարագող այսպիսի երկնաւոր արուեստի, գեռ երեխայական հասակից սկիզբն անելով բանական գիտութեան պարագելու, Յունաց աշխարհը գնաց, և այն տեղ լաւ և առաքինի մարդերի ձեռքի տակ ուսանելով և աստուածային խօսքի մարգարիտը կատարելապէս իր մէջ ընդունելով, վերագործաւ իր աշխարհը:

Աւ որովհետեւ մարգիւթեան մէջ սովորական մի բան է, որ իմաստունները և մեծամեծները գնումեն վաճառականներից մարգարիտը և պատուական հանդերձները, որ ամեն երևելի մարդոց մէջ երևելի և պայծառ երևին, այսպէս էլ իմաստուն և Աստուծու պատուէրներին տեղեակ մարդիկը, Ղազարի գիտութեան մասին լսելով, գովեցին. եկեղեցիները, նահատակների մատուռները և ուսումնարանները ամեն ժամանակ խնդացին և ուրախացան նորանով. նորան լսողների հոգիները ծաղկումէին այն շնորհից, որ նորա բերնից էին դուրս գալիս ⁵⁾, և, բանական գիտութեամբ, հայրապետների և եպիսկոպոսների մէջ արուեսակ աստղի պէս պայծառացած էր փայլում:

Մեծիմաստ Սահան մարդպանը—ձայոց զօրավար և Մամիկոնէից Տէրը—կամենալով նորան առաւել մերձաւոր և սիրելի անել իրեն, նորան յանձնեց Ղոր քաղաքի երևելի և հոյակապ տեղը, որի անունը Սուրբ Աթուղիկէ եկեղեցի էր, վանքովը հանդերձ ⁶⁾. Ղազարն էլ մարդպանի հրամանը ընդունելով կառավարումէր այդ վանքը:

Եկեղեցու փայտեղէն շինուածքի կրակից վնասվելու պատճառով, շատ նեղութիւն քաշեց Ղազարը, շնչին և անպիտան մարդերից. ուստի միտքը բերելով և յիշելով Պաւղոսի խօսքը, թէ «թող աստուածասէրքը ամեն ժամանակ այնպէս ապրին, որ նոցա խիղճը չտանջէ նորանց» ⁷⁾ աղօթք էր անում ասելով, թէ Աստուծուց խնդրումենք, որ ձեզ մի չար բան չպատահի, և միտքը դրեց այն տեղից Յունաց կողմերը գնալ. հասաւ Ամիթ քաղաքը և այն տեղ մի քանի ժամանակ մնաց: Այս տեսնելով, չար նախանձով լցված մարդիկը սուտ խօսքեր հանեցին նորա վանքի և նորա ուսումի մասին, որ նորա բարձր անունը կարողանան ցածցնել:

Ասելով այս բոլորը Ղազարը քաջ պատերազմօղի պէս զինեց իրեն, որ զօրաւոր խօսքերով իր ոգու և անվախութեան և կերպարանքի պատկերը այս թղթի ձեռքով յայտնէ նոցա, որով և

լուսափայլէ վաստակը իր քարոզութեան, որ առաջ արել էր նոցա մէջ, որպէս զի չարախօս մարդոց լեզուն կարճանայ. որովհետեւ այս կերպով (ասումէր) տգէտ և չիք մարդիկը ձայոց աշխարհից հալածեցին լաւ և պիտանի մարդոցը: Աւ մանաւանդ վստահ լինելով ամենիմաստ մարդպանի վրայ, թէ նա գիտէ չլսել խաբեբայական խօսքերի և իրաւունքը ճանաչել, որպէս զի նորա առջևը արդարացնէ իր անձը այս թղթի ձեռքով: Աւ յաղթօղ երևելու համար, գիտութեան զէնքը առնելով իր ձեռքը, ուղարկեց այս թուղթը բարեսէր, մեծ և պատուական նախարար Մամիկոնեան շամաղասպի ⁸⁾ ձեռքով, որ Ղազարի այս տեղից վերագառնալուն բուն պատճառը դարձաւ, որ մարդիկ միւսանգամ լսեն նորա գիտութեան աղբիւրից և արգարութիւն պտղարբերեն Աստուծու:

Ձայոց երրորդ պատմութիւնը ⁹⁾ իմ երանելի Ղազարը գրեց. այս պատճառով, այդ գրքի մէջ մենք նորա այս թուղթն էլ գրեցինք, որ ընթերցասէրքը Պատմութիւնը կարդալով այս թուղթն էլ կարգան և նորա խօսքի արժանաւորութիւնը փորձով հասկանան:

ԲՈՒՆ ԹՈՒՂԹԸ

Մեր Փրկիչը և Տէրը Յիսուս Վրիստոսը, սաստիկ զգուշացնելով Առաքեալներին, պատուիրումէր, թէ երբ ամեն ինչ որ հարկն է կատարէք, ասացէք, թէ անպիտան ծառաներ ենք¹⁰⁾: Բայց ինչի՞նչ Աստուծու հոգեւոր մշակը—սուրբ Պաւղոսը—նեղանալով երբեմն այն մարդոց վրայ, որ նախանձել էին նորանում եղած մեծ շնորհին, այլև այդ մարդոց նոր դարձված աշակերտների հետ գայթակղեցուցիչ և անհանձար բաներ խօսելու համար, սուտ մշակներ անուանեց նորանց¹¹⁾, և, չկարողանալով դիմանալ եղած գայթակղութեանը, Վրիստոսի կանոնին ընդդէմ վարվեցաւ, և ինքը իր լաւութիւնքը և աշխատութիւնքը մեծ մեծ պարծանքով գրեց¹²⁾. և ո՛չ բնաւ որպէս մի սխալված մարդ մերժվեցաւ, այլ, պայծառապէս կացաւ ու մնաց նոյն առաքելութեան մէջ: Այլ թէ ինչի՞նչ այս այսպէս էր լինում, թող բննողը հասկանայ, եթէ կարող է. ապա թէ ո՛չ, թող լռէ:

Արդ, դո՛ւ, Տէ՛ր, քաղցր, խոնարհամիտ, արդարասէր և ճշմարտասէր մի մարդ ես, և Աստուծու հաւատքին առաւել մօտ ծանօթ¹³⁾, ինչպէս և քո ամեն նախնիքը: Իսկ ես, անպիտանս, թէպէտև Տիրոջ առջև ամենների կղկղանք¹⁴⁾ երեւիմ, տղամարդի որդի լինելով¹⁵⁾, իբրև մի անզգամ, ինչպէս Պաւղոս մեծ առաքեալը, բայց դո՛ւ, Վրիստոսին նմանելով, տանելով և ներելով իմ անզգամութեանը, ընդունէ՛ ինձ որպէս մի անզգամ¹⁶⁾:

Տղայութեանս ժամանակ իմ վարած կեանքի որպիսութիւնը, դո՛ւ, Տէ՛ր, ինքդ լաւ գիտես¹⁷⁾:

Իմ ուսուցիչների¹⁸⁾ հրամանով գնացի Յունաստան և մի ժամանակ մնացի այն տեղից վերադարձած կեցայ Ամսարականների¹⁹⁾ մօտ, այն բոլոր պատերազմների և խռովութեանց ժամանակները

մինչև ձեր հնազանդվելը²⁰⁾: Աորանից յետոյ, ձանձրացած լինելով այդ շփոթների նեղութիւնից, կամեցայ աղօթքի պարապել և հանգստանալ: Այս պատճառով գնացի Սիւնեաց աշխարհը և երկու տարի կեցայ, ձմեռները մի քարանձաւում, գաւառի բոլոր բնակիչներից, բոլոր կրօնաւորութեան մէջ հուշակված մի մարդու մօտ, որի անունը Մովսէս էր և տեղի անունը Անձուկ. իսկ ամառները, այն տեղի շատ տաք լինելու պատճառով, Սիւնեաց եպիսկոպոսը—տէր Մուշէն²¹⁾—տանումէր ինձ իր մօտ, ինչ տեղ որ լինէր ինքը ապահովութեան դուրս եկած:

Այլ այսպէս, իմ առաջվայ վարք ու բարքս գիտեն տէր Աերսէհ և Հրահան²²⁾ կամարականները. իսկ Սիւնեաց երկրում ունեցած կեանքիս որպիսութիւնը գիտէ վերը յիշված Սիւնեաց աշխարհի եպիսկոպոսը: Այլ դու փնտրելով ինձ և գտնելով Սիւնեաց աշխարհում տարիւր քո տունը ո՛չ որպէս մի տան պատկանաւորներից, կամ սպասաւորներից մի աղքատ մարդ, և ո՛չ որպէս քեզանից օտար, կամ մի ուրիշի ծառայ²³⁾, որովհետև պարեգօտ հագնողները ազատված են Վրիստոսով: Իսկ ինձ աշխարհի ծառայութիւնից պարեգօտով որոշող և ազատութեան պատճառ եղողը Տէր Աղանն էր, Տիրոջ մօրեղբայրը²⁴⁾: Այդ պատճառով, Հայերի մէջ, քեզ, Տիրոջ արժանի էի:

Բաց ի սորանից, քո երանելի մայրը երբ բղեչելի²⁵⁾ մօտ բերեց ձեզ, որի տանը և մեզ ուսում էին տալիս, թէպէտև տարիքով աւելի հասակաւոր էինք ձեզանից, այլ սննդակից էինք ձեզ և խաղակից, խաղալու ժամանակ ձեր արկանելին²⁶⁾ ձեր քամակից տանելով. և ձեր օրհնեալ մայրը և Անոյշ-Առամը, իրենց հոգեւորութեամբ, մեզ էլ ձեզ հետ, ձերպէս սնուցին: Այս բոլոր պատճառներով քեզ, Տիրոջ արժանի էի:

Իսկ, իմ ունեցած շատ շնորհին նայելով, որ Վրիստոսը տուեց ինձ—որպէս արժանաւորի, թէ անարժանի, այն, տուողը լաւ գիտցաւ—ապա արդարև քեզ միայն արժանի էի:

Որովհետև, վերին Աստիանամութիւնը, այս դարում, քո քաջութիւնը զօրացնելով պայծառացուց ամեններից առաւել, քան որ կային և կամ որ այժմ կան Հայերի մէջ, և իմ շնորհը առաւել քան շատ պարեգօտաւորների շնորհից,—ահա անզգամեցայ և խօսումեմ, աղաչումեմ մի փոքր ներէ՛ իմ անզգամութեան,—այս պատճառով էլ ճիշդ և առաւել, քեզ միայն արժանի էի:

Եւ ես եմ այն Ղազարը, որին, քո և շատ ուրիշների ասածին պէս, փոխանակը մարդ չկայ. իսկ այժմ, նախանձի չարութեան պատճառով, շատերն աշխատումէին լինել իմ փոխանակ. բայց թէ կարողանային լինել:

Գեո արարածների սկզբից շատ ոճիրներ գործեց նախանձը աշխարհում: Սատանան, դեռ սկզբում, նախանձելով կործանեց նախաստեղծին և հոյ դարձուց նորան. Իմաստութեան²⁷⁾ մէջն էլ վրկայումէ Մատուածաշունչը, թէ «Սատանայի նախանձելով մահ՛ը աշխարհ մտաւ»: Գեո երկու մարդ միայն ծնվել էին Ադամից, աշխարհի երեսին, Այէն և Եբէլ, նախանձ ձգող դէր տիեզերքի անչափելի տարածութեան վրայ որպէս մի փոքրիկ և նեղ բանի վրայ նայել տուեց Այէնին, եղբայրասպան անելով: Եսաւը, նախանձից գրգռվելով Յակոբի վրայ, սորա մահն էր մտածում²⁸⁾: Կախանձի ձեռքով անմեղ Յովսէփին դէպ ի սորկութիւն վաճառեցին նորա խեղճնոր եղբարքը²⁹⁾: Կախանձի ձեռքով Ահարոնին և Մարիամին—այդ երկու հոգեշնորհ անձանց—սատանան, անարժան խորհուրդ յղանալ յանդգնեցնելով, մարգարէ կոչը բորոտեցուց³⁰⁾: Կախանձի ձեռքով Աաուղը, այն թշնամին կործանող և ժողովուրդը ապրեցնող մարդուն—Գաւթին—անդադար ազանաներ էր դնում և աշխատումէր կորցնել³¹⁾:

Բայց, էլ ո՛ւր եմ խօսում արարածների միմեանց ունեցած նախանձի մասին, երբ և ամենների արարչին և Տիրոջը Յիսուս Քրիստոսին, նախանձի պատճառով, շրէից ժողովուրդը և քահանայապետքը առաջ ժամանակներում ծաղը անելով թշնամանումէին, երբեմն, կախարդ կոչելով, ինչպէս, «Գեոերի իշխան Իէեղղերուղի ձեռքով դեեր է հանում դա»: ³²⁾ Երբեմն, կինեմո՛ղ և ուտող խմող էին անուանում, Կորա աշակերտներին ասելով, «Ինչի՞ ձեր Արքայետը մեղաւորների հետ միասին ուտումէ խմում»: ³³⁾ Բայ ի սորանից «պահ՛ք չպահ՛ող և ամեն ժամանակ կերակուր ուտող» անուանելով նախատումէին, «ինչի՞ Յովհաննէսի աշակերտները և փարիսեցիները պահումեն և քո աշակերտքը չեն պահում և խառն ուտումեն» ³⁴⁾ ասելով: Կորան «դիւահար» էլ կոչեցին. «չէ՞ որ ճշմարիտ ենք ասում, թէ Սամարացի ես դու և դե կայ քո մէջ»: ³⁵⁾ Յետոյ, սուտ վկաներ ժողովելով, իրենց նախանձի և վրէժխնդրութեան պատճառով, ոչինչ բաներ էին խօսել տալիս նորանց, ³⁶⁾ և իրենք ուրախացած բացազանչումէին զատողների առջևը, ուր,

ինչպէս Աւետարանիչը վկայումէ, Պիղատոսը ճանաչելով, թէ նախանձի պատճառով մատնեցին նորան, ձեռքերը լուանալով ասաց. «Ես անպարտ եմ այդ մարդու արիւնից, որովհետեւ մահի արժանի յանցանք բնաւ չգտայ դորանում, դուք առէք և ձեր օրէնքով դատեցէք»: ³⁷⁾ Եւ ձգեց նորան օրէնքի և ժողովուրդի ձեռքը, որ երկուքն էլ մահապարտ էին, և՛ շրէից ժողովուրդը և՛ օրէնքը: Սորա՛ չղիմանալով դիւամոլ նախանձին, մահի մատնեցին Կորան, և ո՛չ արգարների այլ անիծված ³⁸⁾ մահի, որպէս մի չարագործ և մարգասպան, այսինքն, խաչի՛. Կորան, որ արարիչ էր և նորողիչ, կեանք տուող և մահ սպանող, ամենի երախտաւոր, քաղցր և շատ ողորմած:

Եւ այս բոլորը մեր համար իր անձով քաշելով Փրկիչը շուտ շուտ զգուշացնումէր այս մասին և իր աշակերտներին, թէ ձեզ էլ պիտի պատահի այս ամենը, և չլինի թէ, անպատրաստ գանկելով, ձեզ հասած վշտերից վախենաք: Եթէ ինձ սիրեցին, ապա և ձեզ կը սիրեն, եթէ ինձ ընդունեցին, ապա և ձեզ կ'ընդունին, իսկ եթէ ինձ հալածեցին, ձեզ էլ կը հալածեն, եթէ ինձ ատեցին, ձեզ էլ կ'ատեն. ³⁹⁾ և եթէ ինձ, որ տանը տէրն էի, Իէեղղերուղ անուանեցին, ո՛րչափ ևս առաւել ձեզ և իմ մօտ մարդոցը պիտի ասեն ⁴⁰⁾:

Այսպէս էլ, նախանձի պատճառով, իմ մասին հանել էին շատ բամբասանքներ, ասելով, «Թէ Ղազարն ասումէ, որ պոսնկութիւնը մեղք չէ. այս բանը մարդպանին էլ գրել է նա»: Թէ ճշմարիտ էր այդ, դու, Տէր, խիստ լաւ գիտես, քան թէ այն սուտ կարծողքը: Եւ ուտող խմող և պիղծ մարդիկ քաղցր ախորժանքով ընդունումէին այդպիսի բաների լուրը, իրենց մէջ բուն դրած չար գործերին որպէս մի օգնութիւն:

Բայց ո՛վ արգեօք անհաւատներից, չասնէք քրիստոնեաներից, իր մաքի մէջ կարող է այդպիսի բան խորհել, թող թէ և մի ուրիշ մօտ բերնից հանել. ո՛ր անմիտը, ո՛ր տգէտը, ո՛ր շրէան, ո՛ր այլազանդը: Եւ Ղազարն էր այդ քարոզում. ո՛ւմ, կամ ո՛ւր և կամ երբ. Ղազարը, որ տգէտ է գրոց, որ անկիրթ է և անուսումն, որ Սովսիսական օրէնքին օտար է և Քրիստոսի տուած շնորհին անտեղեակ: Արգեօք, այս մեր շայոց արեղայքը արտասուքի, ողբալու և շատ սուգի արժանի չէն, երբ հանումեն ան-

պիտան համբաւներ և նախանձի պատճառով խօսուածն անարժան բաներ:

Պատճառ, ո՞վ արդեօք երկայնամիտ և բարկութիւն չունեցող Մատուածը զրդելով դէպ ի այնպիսի ահաւոր բարկութիւն շարժեց, որ ջրհեղեղ անէր բովանդակ երկրի երեսը, մինչև որ բոլոր սարերը ծածկվեցան, չէ՞ որ նա, որ պոռնկութեամբ էր բորբոքված: Տեսան, ասու՞մէ, Մատուածու որդիքը մարդոց աղջկերքին և խառնակվեցան նոցա հետ»⁴¹⁾:

Ինչ բանի համար, որդոց որդի, մինչև յաւիտեան այնպէս մեծ համարվեցաւ Մհարնեան Փենեհետի արդարութիւնը, եթէ ոչ Օւամբրոն, իր Մարիանացի բողի հետ միասին, գեղարգով զարկելով, գետնին ցցելով և Մատուածու բարկութիւնը իջեցնելուն համար⁴²⁾: Ո՞ր բանի պատուհասի համար, Տիրոջ ժողովրդից բսան և չորս հազար հոգի մէկ պատերազմում ընկան⁴³⁾: Մասնը չէ՞ր, որ, անխելք խօսքերի համար, երկար ժամանակ ատելի դարձած լինելով իր եղբօրը, սպանվեցաւ նորա ձեռքով⁴⁴⁾: Ուղղուածն դեռ Մովսիսի գրած պատմութիւնից և ուրիշ մարգարէներից լսել այդ բաների հակառակը, թող նային և տեսնեն առաջին հարց ապաշխարութեան ճանապարհը: Մատուածու մարդը—Մնովքը—որ օրինաւորապէս ամուսնացած էր, հաճոյ գտնվեցաւ Մատուածու և դէպ ի անմահական վիճակը փոխվեցաւ⁴⁵⁾: Նոյնը, շատ ժամանակ, մինչև հինգ հարիւր տարի կուսութիւն պահելով և սորանից յետոյ որդեծնութեան համար սրբութեամբ ամուսնանալով, այս աշխարհի երկրորդ հայրը դարձաւ⁴⁶⁾: Մասպէս և մարգարէների մէջ մեծը—Մովսէսը. այսպէս էլ նորա պաշտօնեայ և կուսութեամբ պատուած Յեսոն: Իսկ այն զարմանալի մարդու—Մղիայի—գովութիւնը ո՞վ արդեօք բերնով կարող է պատմել, որ մարմնի մէջ եղած ժամանակ անմարմինների պէս ապրելով հրեղէն կառքով դէպ ի հոգեղէն կեանքը վերացաւ⁴⁷⁾: Իսկ եթէ Քրիստոսի պարգևած Մեծտարանից կամենան այսպիսի օրինակներ, աւելի խիստ և աւելի զարհուրելի բաներ կը գտնեն. Փրկիչը, գործվածի մեղք լինելը բոլորովին մի կողմ թողած, լոկ ցանկութեան պատճառով նայելը կատարված շնութեան հետ հաւասարեց, ասելով, թէ որ մէկը ցանկութեան պատճառով նայի կին մարդու վրայ, արդէն իր սրտի մէջ շնացաւ նորա հետ⁴⁸⁾:

Մյուս հեթանոսաց վարդապետի քարոզութիւնն էլ սոցա վրայ

աւելցնելով թող լսեն ու լսեն լիրբ և անամօթ մարդիկը, որ ուրիշների բերնից իրենց կամքի ուզածն են խօսում և չեն ստիճում Տարտնացի Սերովբէ Պաւղոսից, այն մարդուց, որով Քրիստոսը խօսում էր⁴⁹⁾ աշխարհի հետ, որ Փրկիչի չարչարանքների մնացորդը իր նեղութեամբ լցված մարմնի վրայ էր կրում⁵⁰⁾: Ինչ որ սա, իր բոլոր թղթերում, պոռնիկների արքայութիւն չժառանգելու մասին գրեց խիստ շատ են, և այդ բոլորը մանրամասն գրել այս տեղ շատ աշխատութիւն եմ համարում և աւելորդ. պատճառ, և աւատքի տեղեակ⁵¹⁾ մարդու հետ է խօսքս: Մյուս այն քիչ խօսքերից, որ կորնութացոց առաջին⁵²⁾ թղթումն է գրում—թէ ինչն է բնաւ պոռնկութեան անունը կայ ձեր մէջ,—մնացած ամենն էլ հասկացվումէ: Աւ Միսեացոց, թէ «պոռնկութեան և ամենայն պղծութեան, կամ ազահութեան անունն էլ թող չլինի ձեր մէջ»⁵³⁾: Աւ իսկոյն, սորա քամակից, թէ «ո՞վ որ պոռնիկ է, կամ պիղծ, կամ ագահ, որ է կուսաշատ, ժառանգութիւն չունի Քրիստոսի թագաւորութեան մէջ»⁵⁴⁾:

Թող ասեն այժմ այդ շնին և թշուառական մարդիկը, թէ ինչն նախանձի պատճառով ձգուածն իրենց անձը չապաշխարվելու մեղքի տակ, որոնց մասին և Յովհաննէս առաքեալը⁵⁵⁾ յիշումէ ասելով, թէ «կան մեղքեր, որ մահի հաւասար են», որ և Մեծտարանաց գրուածոց մէջ անգամ կարգուածն, թէ «ո՞վ որ և ոգին Սուրբը հայհոյէ նորա մեղքը չթողվի, ո՞չ այս և ո՞չ գալու աշխարհում»⁵⁶⁾, բայց, արհամարհողների պէս, բանի տեղ չեն դրնում: Բայց մարդ մարմնի թուլութեան պատճառով մեղք է գործում, ինչպէս և ես, որ ամեն մարդերից էլ մեղաւոր եմ. բայց մեղքը մեղք է ասել, ո՞ր արհամարհոտ և ամբարիշտ հոգին կարող է մտքից անցնել: Իսկ ով որ ճանաչէ իր յանցանքը և զարհուրած սրտով կարող լինի զղջալ շտապել իսկոյն թողութիւն կրստանայ: Բայց ո՞վ որ յիմար կոյսերի⁵⁷⁾ ձեռով կամենայ աղատվել թողութիւն չի ստանալ:

Վարձեալ ասումէին. «աղանդաւոր է»: Աւ այս բանը աշխատումէին շուտ շուտ ամենին յայտնել և տկարամիտ մարդերին հաւատացնելով, իմ մէջ եղած շնորհի վարդապետութեանը, որպէս մի թերի բանի վրայ նայել էին տալիս: Մղանդի անունն անգամ, որով այդ յանդուգն մարդիկը բամբասումէին ինձ, գրով գրելու համար ես շատ աղտեղի եմ համարում: Բայց նոցա հայհոյանքի խորհուրդը,

մի փոքր առաջ յիշված, դարձեալ նոցա ասած բաներին նման էր, ինչպէս պրոնիկներէ մեղքը թեթեւ' և շնչին համարելը:

Բայց ես, իմ կարողութեան չափով, հունական գիտութեանց պարապելով, իմ տկար մտքի զօրելու համեմատ, կարգացած եմ գրուածքը սուրբ մարդոց, որ, Սուրբ Հոգու գէնքով զինված, աղանդաւոր վարդապետութեանց հոգեւական սուրբը այդ վարդապետութիւնքը հնարողների սրտերին դէմ դարձնելով, նոցա աղեղները փշրեցին⁵⁸), և իրենց փրկարար վարդապետութիւնը գրով մեզ աւանդեցին, ինչպէս արդար և հոգեւէր հայրեր ամեն յիմար մարդոց օգտի մասին հոգալով: Որոնց գրուածքը եթէ մի մարդ երկար և ջերմ սիրով կարդայ, անփնաս կարող է լինել և հեշտ աղատվել չար աղեղնաւորների կրակ թափող նետերից. Սուրբ Աթանաս Աղեքսանդրացու, և երկու միանուն մարդոց Արևել Աղեքսանդրացու և Ալեքել Արուսաղեմացու, Բարսեղ Աեսարացու և Նազազացի Գրիգորի, որ իր շատ շնորհի պատճառով աստուածարան ասվեցաւ, և մեր առաքելանման նահատակ Հայոց վարդապետ Գրիգորի մասին է խօսքս, և նոցա նմաններին, որ նոյն առողջամտութեան ճանապարհին հետևելով վարդապետեցին: Այս պատճառով և միւս բոլորը և ինչ որ նոցա մօտ եղած մարդոցը վերաբերեալ, նորա ծառաները⁵⁹), Աղեքսանդրացի Արիստի, Գատիկեցի Ապոլինարիսի, Անտիոքացի Նեստորի, Աոստանդուպոլսեցի Ատաքսի և Ալեքսի սարկի—որ յետոյ Սանի անուանեց իրեն, և այս պատճառով էլ նորա հետևողքը Սանիքեցիք կոչվեցան—բոլոր գրուածքները ունին և ուրիշ շատերի, սոցա նման կորստի ճանապարհը գրանցողների գրուածքը, որոնց Սուրբ, Աթուղիկէ և առաքելական Ալեքեցիին նշովել և գուրս է ձգել, որոնք հեռացած Աստուծու ուղղափառ եկեղեցուց, մինչև այսօր վարվումեն, ամենքը իր չարութեամբ ներկված, որ անյայտ շնն միմեանց և ամեն ուղղափառ ժողովրդոց էլ յայտնի:

Աւ թէպէտ այս մարդիկը մոլորված են և չբժշկվելու կերպով կաղումեն հաւատքի մէջ, բայց, այս խօսքով է միայն և ոչ գործով պատճառ, մարմնի պարկեշտութեամբ, ամեն ճգնութեանց մէջ, մինը միւսից գերազանցումեն, և մանաւանդ կերակրի, խմիչքի և ցանկականի համբերութեան մէջ: Իսկ Հայոց աշխարհի աղանդը, որ ասումեն, մի հիմնադրի անուն չունի իր վրայ, և գրված մի բան չէ: Հաւատքից և ուսումից զուրկ են, գործի մէջ ծոյլ և անհամբեր,

որոնցից, նայելով այն տգիտութեանը և անկարգ վարքին, որ կայ նոցա մէջ, արդարև արժան էր, որ այդպիսի մի աղանդ բուսանէր, առասպելի ասածին համեմատ, թէ «Խոզի պէս հարսին կարէ—կարասը բաղնիք»⁶⁰): Իրաւ որ «Թող չպատմվի՛ այս Վեթի մէջ և չլսվի՛ Ասկաղովի դռներում»⁶¹), կարդացողը կը հասկանայ:

Բայց ես թէև այդ տեսակ աղանդաւորներից մի մարդ գիտէի, սակայն լոկ համբաւի վրայ հիմնվելով դատել կամ դատապարտել բնաւ կամք չունէի, ուստի, այն չարածոյն մարդիկը, կարծումէին, թէ ես էլ նոցա նման եմ: Բայց ես չէի դատապարտում այն պատճառով, որ ուսել էի Վրիստոսից, որ չէ հրամայում ամեններին, մինչև հնձի ժամանակը յանդգնութեամբ որովը ցորենից քաղել, այլ խոտանումէ հնձի ժամանակ ուղարկել իր հրեշտակները⁶²), որոնց կամ հրեշտակ է ասում և կամ ճշմարիտ վարդապետ. ինչպէս Սուրբ Վիրքը սովոր է վարդապետներին հրեշտակ անուանել⁶³), որպէս և իշխաններին Աստուած ասացին մարգարէքը⁶⁴): Իսկ ես, որ ոչ հրեշտակ եմ և ոչ վարդապետ, երբէք էլ սորա կամ նորա կամքը հարցնողներից չեմ եղած, որ մի իշխանութեան գործ գանեմ, ոչ երբէք⁶⁵), պատճառ ինձ ատելու համար—կարելի է իմ անարժանութեան պատճառով—սուրբ, անարատ և ամեն մեղքից ազատ Հայոց այդ ուսուցիչքը, թող թէ մեծ մեծ պաշտօնների հասցնել, ինչպէս եպիսկոպոսութեան, կամ նոցա մէջ առաջին պաշտօնի և կամ եկեղեցու դատաւորութեան, այլ քորեպիսկոպոս էլ չարաւ ինձ նոցանից մինը, որ Պարսիկները և անարժան մարդիկ այսօր էլ անումեն⁶⁶):

Իսկ ինքս ինձ յանդգնութեամբ առաջ քշել դէպ ի վարդապետութիւն, ինչպէս անպիտաններից շատերին տեսնումէի որ անումէին, սարսափումէի հակովբոսի պէս ահագին մարդուց, որ աղաղակումէ. «Թէ շատ վարդապետներ մի՛ լինիք, եղբայրներ, գիտցած եղիք, որ մեծ դատաստան պիտի ընդունինք»⁶⁷). դարձեալ չէի յանդգնեցնում ինձ վարդապետելու, պիղծ և վատթար գործերով լցված մարդոց պէս, որ իրենց գերանին չնայելով, ուրիշների աչքին մօտենալով նայումեն որ շուրջ հանեն: Աւ այսպիսի խաբեբայութեամբ աշխատումեն իրենց անձը արդար ցոյց տալ աշխարհի, բայց այդ խաբեբայութիւնը բնաւ չի ծածկվիլ, և նոքա էլ աւելի շատ յաւելումներով բարկութիւն են հաւաքում իրենց գլխին դատաստանի օրում և չեն լսում Պաւղոսի բողոքը. «Թէ որ մեր անձը

դատէինք» 68) (ապա չպիտի դատապարտվէինք): Ուրիշներն էլ, ագահութեան ցաւով հիւանդացած, պարտաւորութեան տակ են ձըգում արդարին էլ անարդարին էլ և արծաթը միայն, որի համար հարստահարումեն, ձեռք բերածի պէս, այնուհետև ամենին էլ արդար և անմեղ են անուանում և չլսող լինելով արհամարհումեն (Ամբակում մարգարէի աղաղակը, մանաւանդ թէ աղաղակով 69):

Եւ յօժարութեամբ գուցէ միտքդ բերես, Գիւտ կաթողիկոսի եղբորորդու երանելի Յովհաննիսի, Սեուկի 70) պարտէզում, մի քանի մարդերի կողմից քեզ Տիրոջդ ասած խօսքերը, որ այն մարդիկը քեզ արծաթ խոստանալով խնդրումէին այդ տեղը: Եւ դու, Տէր, կանչելով քո եղբօր տէր Ալարդին, Հայրիկին 71) և իմ անարժանութիւնս, Տէր Յովհաննիս հրամայեցիր, որ միւսանգամ կրկնէ այն մարդոց ուղարկած խօսքը, որի ընդդէմ դու, Տէր, ուրիշ էլ շատ բաներ ասելով, տուած պատասխանիդ գլխաւոր բանը 72) այս արիւր, թէ «պէտք էր որ նոքա մտածէին և մի այդպիսի խօսք ինձ չուղարկէին. անզգամութիւն է նոցա արածը. բայց ես այսպիսի քրքրտիւնքով առաջ բերած մեծ վաստակս և շատ աշխատութեամբ արած ծախքս, վատ վաճառականութեամբ, թեթև բանի հետ չեմ կարող փոխել, և ո՛չ մի հոգևոր և յաւիտենական գանձ անպէտ և անցաւոր ընծաների հետ»: Եւ տէր Յովհաննիս էլ նեղացար, թէ «բնաւ քեզ պէս մի մարդու արժան չէր լսել, թող թէ ինձ էլ բերել»:

Եւ որովհետև ես, երկրաւոր մտքով, տկարամիտ և անզգոյշ մարդ եմ, ուստի չկարողացայ դաւաճանութիւնը այն միջոցին հասկանալ. բայց ինձ պէտք էր իսկոյն ոտքդ ընկնել, արտասուքով աղաչել և այդ վանքի հոգաբարձութիւնից հետու փախչել: Եւն ժամանակ ազատված կը լինէի չարածոյն ժանիքից գազանների, որ այն օրից սկսած ծածուկ դարան մանելով, և իրենց անհամար հարստութեան համեմատ շատ և շատ արծաթով յետան (սրող քար) գնելով թուրի պէս սրեցին իրենց լեզուները և իժերի թոյն կար նոցա շրթունքի տակ 73): Եւ ես 74) չկարողանալով Սաղմոսերգողին պէս աղօթել, թէ «պահէ, Տէր, մեղաւորի ձեռքից և չար մարդուց փրկէ ինձ» 75), նոքա ընկան այնուհետև քամակիցս, իմ գնացքը խափանեցին և վրայ հասնելով դէպ ի մահ խոցոտեցին:

Բայց խնդումեմ ցնծալով, որ այն վէրքերով, իմ հոգիս, որ առաջուց խոցոտված էր մեղքերով, առողջանալով զօրացաւ:

Եւ այսպէս կատարելով իրենց կամքի բոլոր ուղածը իմ վրայ,

այնուհետև զուարճանալով ուրախացան, ինչպէս մի տօն կատարելու ժամանակ: Որոնց պարտքն էր, սենեկում չորս կողմս նստած, լալ իմ վրայ, որպէս մի վերաւորի վրայ և ճար անել, այս բոլորի հակառակն արին. ուրախ սրտով ծաղր անելով շրջապատեցին ինձ, բացին իմ վրայ իրենց բերանները և ասացին. վա՛շ վա՛շ, մեր աչքը տեսաւ 76): Եւ լոկ վայրախօսութիւն չէ այս իմ կողմից, այլ սողոյգ իրողութիւն է, որ Տիրոջդ առջև գնումեմ:

Մի երեւելի ազնուական մարդ, ակնաւոր տոհմից, ուղարկեցի այդ Հայոց գլխաւոր քահանային, այդ հոգիների հիւանդատեսին, ասելով. «վերաւորների բժշկութիւն տալու շուտով հասիր. թըշ նամին անթիւ նետերով խոցոտեց ինձ. վէրքերիցս մահի դուռն եմ հասած. քո պարտքն է այսուհետև դեղ դնել և բժշկել, իսկ թէ մեռնիմ, տանել գերեզման և թաղել»: Եւ նա պատասխան տալով ասաց պատգամաբերին. «Քրիստոսի շնորհելով ո՞ղջ եղիր, և այրն ոչինչ թեթև և եթէ ես, չեմ համարձակվում երկիւղից նաև տեսնել քեզ, բայց դու դեռ ասումես, թէ գամ բժշկեմ և կամ թաղէ. չլինի թէ մի մարդ իմանալով, Սուրբ Հոգու խօսքը իմ վրայ բերէ, թէ «վա՛յ նորան, որ չար ագահութիւն է պահում իր տանը»:

Գարձեալ ասումէին, «թէ մէկ խօսքով պիղծ և չարագործ մարդ է. վանք ունի այն տեղ Գաղարը և սիրումէ նորանց»: Եւս բաները ասողների գործերի մասին ես ահա լուռ եմ կենում, որովհետև ինձ բնաւ հարկ չկայ ասել. բայց Քրիստոսի ահագին և աւնաշառ օրը չի լուր, այլ անչէջ կրակին կը մատնէ: Եւ ինձ բարեկամ էին անուանում քո եղբարքը, Տիրոջդ, սուրբ զրուանի գին, եղբորորդու հետ միասին: Եւզ երեքն էլ հոգեպէս և մարմնապէս կրթված և դաստիարակված մաւրիկ են, և ուղղափառ հաւատի ուսումը ստացած են քո օրհնեալ մօրից և նոյն իսկ Տիրոջիցդ: Եւ հասակով թերակատար կամ պակասաւոր մարդիկ չեն, այլ թէ խելքով և թէ քաջութեամբ լցված և կատարեալ: Աոցա հետ միասին և Երեղենից տիրոջը (ինձ բարեկամ էին անուանում), որ. քո, Տիրոջդ, սիրուն և ամենին ընդունող բարերարութիւնից, յարգելի մարդ է և հրապարակում երեւելու պատճառ ունի և Տիրոջից, և Քրիստոսի շնորհից ամենքն էլ ո՞ղջ են և մեջ տեղում, թող հարցանվին նոքա, իմ ըստ աշխարհի որպէս հայր տուած խրատներիս և ըստ հոգու իմ վարդապետութեան խօսքերի մասին, և ինչ որ

ամեն մինը լսել են, առանց իրենց հոգին պարտաւորելու թող ճըշ-
մարիտը ասեն:

Բայց երեք եղբարքն էլ սիրումէին Սուրբ Կաթուղիկէի վանքը
ընծաներ և ամեն հարկաւոր բաներ նուիրելով, որոնցից ամեն մէկի
տուածը յայտնի էր և գրով մնաց վանքում. և ճշմարիտ որ Տիրոջ
կամքի կատարողը դոքա եղան: Արովհետև այն օրից, երբ դու
Տէր, քո անարգ մարդ մեծարող խնամքովդ ինձ քո ընտանիքին յանձ-
նեցիր, դոքա՛ եղան իմ վրայ քո խօսքի հրամանը կատարողքը, ա-
ռանձին առանձին, իրենց կամեցողութեամբ, վանքի պողաբերու-
թիւնը հատուցանելով:

Մեռնելու չափ անմխիթար տրտում եմ, որ գայլերի նման վա-
ղեցին իմ ունեցած չունեցածի վրայ և առանց խնայելու կտրատե-
ցին, երբ տեսան թէ քո աչքից ընկայ: Այլ այժմ իմ ունեցածնե-
րով զարդարված, ման են գալիս ինձ ծաղը անելով. իսկ ինչ որ
իմ բաներիցս վանքումը մնաց, այդ մասին, ուրախ եմ և ցնծում,
որովհետև մի սուրբ և հոգևոր տեղում մնաց:

Բաց ի սորանից ուրիշ չար խօսքերով քեզ, Տէր, իմ վրայ նե-
ղացնել էին աշխատում, թէ մի մանուկ չէ կարող վանքի հոգաբար-
ձութիւն անել: Այլ իմ համար մի հրեշտակ մարմին չառաւ, որ
գոնէ իր հոգեղէն բնութեամբ տեսնելով թշնամիների ծածուկ լա-
րած որոգայթը կարողանար զգուշացնել ինձ և յանձն առնուր լի-
նել իմ համար երկրորդ ես, որ անշուշտ կ'անէի:

Իսկոյն դաւաճանութեամբ նենգողների մօտ վաղելով և միտք
պղտորող խաբէբայական չար խօսքերով ասումէին, «Այ յիմար
մարդիկ ինչի՞ էք ունայն տեղը աշխատում, ո՞ւր էք այդ շոգ կրա-
կում կենում և յիմարբար անձնամահ լինում: Մամիկոնեանց տան
մի քանի աւագ ծառաները երգումով խօսք են տուած մեզ և այդ
տան Աւագ անունով քահանան ասել է, թէ երբ էլ որ լինի, ես
իրեն իսկ Ղազարին չպիտի թողում հանգչել այդ տեղում, թող
թէ նորա մարդոցը»: Այլ լսողքը, այսպիսի խօսքերից թուլանալով,
էլ այնուհետև աշխատումէին ժողովել առաւել իրենց պարկերի քան
թէ վանքի ամբարի մէջ: Բայց ես, մեղուի նման ամեն կողմից բե-
րելով, կարողանումէի հոգալ և՛ վատնողների պէտքերը և՛ վանքի
պաշարը:

Բայց դու, Տէր, լաւ յիշողութիւն ունիս և բան չես մոռա-

նում, մանաւանդ քո հոգասիրութեամբ, որովհետև շատ էր կառա-
վարել նա այդ վանքը, թէ ուր և իցէ գտնվումէ, թող հարցանվի
և թող ասէ: Իսկ ինչ որ կարգել էին ինձ տարեկան տէր Աեր-
սէհը և շրահատը, — կերակրի, հանդերձի և ձիու համար, — յայտ-
նի է. նոյնպէս և Տիրոջ եղբորորդիներից նշանակվածը, այն էլ
դեռ հերիք էր լինում ինձ, և երբեմն իմ աւելորդներից վանքի
պէտքերի համար էր գործ գրվում: Իսկ Աղուանտանից, Արաս-
տանից, Սիւնեաց և Արշարունեաց երկիրներից իմ բերած բաներս և
ինչ որ բոն Տիրոջ եղբորորդիներից ստացել էի, այդ բոլորը —
իւրաքանչիւրի տուածը առանձին առանձին գրի անցուցած, — մնաց
վանքում. և ինձ մերկ և խայտառակութեամբ դուրս հանեցին իմ
բոլոր ունեցած չունեցածի միջից, ինչ որ տղայութեանս ժամանա-
կից սկսած ժողովել էի: Մինչև անգամ և հունարէն գրքերս ինձ
չտուին, որ ընկած են այժմ վանքում ցեցերի կերակուր լինելու
համար, բայց արդեօք այդ գրքերը կարդալով պիտի լուսաւորվին
այդ տեղում բնակվողքը, կամ ուրիշներին պիտի լուսաւորեն:

Այլ դու, Տէր, և այս մի բանը չես իմացած, բայց արժան էր
որ իմանայիր, ես լսեցի, որ իմ քամակից ասումէին, թէ «ես վան-
քում բան չունէի»: Այլ թողր կահ կարասիքի կողմից և ամեն
հարկաւոր եղած բաներով, երկու հարիւր տարուց շինված վանքե-
րից փոքր պակաս, կամ յետ մնացած լինէի, ապա բնաւ արժանի
չէի համարիլ ինձ այն տեղ մնալ: Թէպէտ վանքի սարք ու կարգը,
շինուածքի անհաստատութիւնից, մի երկու անգամ ջարդվեցաւ,
բայց այս վերջին անգամինը եթէ Տէրդ գիտնար և ինձանից համար
պահանջած լինէր, որ ամեն բան մանրամասն քեզ յայտնվէր, այն
ժամանակ կ'իմացվէր, գովութեան եթէ մեղադրանքի էի արժանի:
Բայց ես միայն իմ դուրս ձգվելուցս յետոյ ընկայ այս ու այն տեղ
իմ պէտքս և կարօտութիւնս առանձնապէս հոգալով, սակայն իմ
քարողութիւնքս շատ ախորժելով և պատուականութեամբ ընդունու-
մէին, ինչպէս մի առողջ վարդապետի քարողութիւն, և հօր պէս
էլ պատվումէին, և մանաւանդ էլ աւելի տէր շամաղասպը, որին
ողորմութիւն անէ Տէրը ինչպէս Անիսիփորի տանը, այս խօսքերը
ասողի բարեխօսութեամբ, պատճառ, շատ անգամ ինձ հանգստա-
ցուց և իմ հալածվելու ժամանակ իմ կերակրիչը եղաւ:

Ոմանք էլ ասումէին, «թէ ես Տիրոջ տանը որպէս մի աւելորդ
անօթ էի», որովհետև մտածումէին, «թէ իմ ո՞ր արուեստի համար

դո՛ւ, Տէր, պահպանելով պիտի մեծարէիր ինձ»: Սորանում ինչ բանի չէին ցանկանում դոքա, արծաթ և ոսկի, որ թէ ես մի ունեւոր մարդուց գանձեմք, որ թէ ուզուեմք մեկը ձեռք բերել, այն ես վանքի պէտքերի վրայ էի ծախում: Արհաւորներ եփել սորված չէի, որ ձկան աղեքներով և հաւի փորոտիներով այդ ուտողների համար լաւ լաւ կերակուրք պատրաստէի, և թերեւս այդպիսի բաներով կարողանայի մարդու հաճելի լինել:

Բայց ես մի ուրիշ նոր բան էլ ասեմ Տիրոջդ, որ թէ քո արդարութիւն վնասող մտքիդ ընդունելի երևի, խնդրուեմ Տիրոջիցդ, ամեն բանից առաջ այդ բանը քննել, և ճիշդ տեղեկանալով, կամ, զարմացի՛ր և կամ, եթէ ճշմարիտ չէ ասածս, անարգէ: Այն օրից, երբ դո՛ւ, Տէր, ինձ վանքը տարիր, մինչև իմ այն տեղից հալածվելու օրը, վանքի եկամուտից կամ բերված ընծաներից մինչև անգամ և մէկ դրամ վրաս անցուցած չեմ, և ո՛չ իմ պէտքերի համար ում և իցէ տուած. և այս բանը գիտեն իմ հետ այն տեղ բնակվողքը: Բայց ուրիշներից աւելի Ալիթ անունով մի մարդ, որ Վարդմանի վանքից եկած էր մեր վանքը, այն օրից երբ սորա հիմքը ձգել էին, և մինչև իմ վանքից գնալը նա այն տեղ էր, իսկ այժմ լսեցի թէ Անդրայ մօտ է գտնվում, ահա այդ մարդը շատ լաւ տեղեակ է ասած բաներիս և ինձ քեզ հետ կը թաղէ, որ քաջ հովուի աներկիւղութիւն է:

Ո՛ր է արդար ուսուցչի հոգողութիւնը, ո՛ր է արդար հայրպետի Վրիստոսին նմանելը: Արարածների արարիչը մեղաւորների փրկութեան համար մարդ եղաւ, շատ անարգութեան, գլխին զարկելու, և երեսին թուք ընդունելու և փշեղէն պսակի և ուրիշ էլ աւելի մեծ մեծ բաների համբերեց, իսկ դա՛ վէրքերից թուլացած մարդու երեսին և ջուր անգամ ցանել չհամարձակվեցաւ մարդերից վախելով: Վահեկանները լիքը բռնով Սամարացի գթածիցը առնելով այդ արծաթը—հիւանդները նայելու գինը—սապատների մէջ է ժողովում, իսկ հիւանդներին պանդոկից հանելով դուրս է ձգում, մեծ ամփութութեամբ: Վրիստոս Փրկիչը բարձր ձայնով ամեն օր մեղաւորներ է կանչում». ինձ մօտ եկէ՛ք ամեն հոգնածներ և ո՛վ որ ծանր բեռներ ունի և ես կը հանգստացնեմ ձեզ», և Պաւղոսը աշխարհի անյայտ դէպքերից անկանգնելի ընկնելու մասին, գեռ չընկնողներին, զգուշացնումէ—Վաղատացիներին գրելով. «եղբարք, ասումէ, եթէ յանկարծ ձեզանից մէկը որ և իցէ յանցանքի մէջ բռն-

վի, դուք որ հոգեւորներ էք հեղութեան հոգով կանգնեցրէ՛ք այնպիսուն. զգո՛յշ եղիք ձեր անձին, որ չլինի թէ դուք էլ յանցանքի մէջ ընկնիք. միմեանց բեռը վերուցէ՛ք և այնպէս կատարեցէ՛ք Վրիստոսի օրէնքը»: Իսկ դա նորա հակառակն է աղաղակում. ո՛ր ես գալիս, չեմ ուզում, համարձակութիւն չունիմ քեզ տեսնել»: Արդեօք, մէկ կամ երկու անգամ, տարա՛ւ ինձ իր սենեակը, և խօսեցա՛ւ իմ հետ, ինչպէս Փրկիչը հրամայումէ, ես ու ինքը առանձին, կամ մէկ և կամ երկու ընկերով, որ չհաւնելով և իբրև մեղաւոր և մաքսաւոր համարելով ինձ հալածէր:

Յիշելով, ասումէ, մի անգամ մի մարդ իմ անունը Աւագի մօտ, մի քանի պարեգօտաւորների առջև, տրտում հառաչանքով ասաց, թէ «իրաւացի չեղաւ Ղազարի մեր աշխարհից հեռանալը, պատճառ, նա եկեղեցու զարդ էր»: Այլ լսողները ուրիշ բան չկարողանալով ասել, միայն այս պատասխանը տուին, թէ «նորա հալածվելու պատճառը բնա՛ւ մենք չենք. բայց ինչ որ նորա գիտութեան մասին էք խօսում, ստո՛յգ է, առաջ շատ համեղ և զօրաւոր կերպով էր քարոզում, իսկ այս վերջի ժամանակները իսպառ վատ էր նորա քարոզը»: Այլ այսքանը չկարողացան հասկանալ թէ իրենց դատապարտութեան և ամօթի համար խօսումէին այդպիսի բաներ:

Թո՛ղ ասեն ուրեմն, որի՞ համար շնորհվելով պարգևվումէ վարդապետութեան խօսքը. ասողի՞ համար. չէ՞ որ ակորժանքով անկաջ զնողների, լսողների և նոցա խնդրուածքի համար: Վայեցէ՛ք Յունաց ժողովրդի վրան, երբ իմաց է տրվում, և քարոզ ասողը նշանակված տեղն է անց կենում, ամենքը իրենց սիրտը զարթեցնելով բարձրացնումեն դէպ ի Աստուած. թեկերը բանալով խաչի նման են լինում, և միաձայն խնդրուածքներով և արտասուալից աղաղակով խնդրումեն Փրկիչից. «խօսք տուր, ասումեն, շնորհ ուղարկէ, բուն դու ինքդ խօսէ մեզ հետ դորա բերնով, ինչպէս երբեմն խօսումէիր սուրբ Պաւղոսի ձեռքով. նորան իմացուր քո հաշտ լինելը քո ծառաների հետ: Մեր մեղքի պատճառով, ամուլ ամպերի թող չնմանի՛ դա՛, այլ առատ անձրև թափելով թող ջրէ՛ մեր հողիների անդաստանքը, որով ծաղկելով քո կամքիդ հաճելու արժանի պտուղներ բերենք և քեզ մատուցանենք:

Արդեօք ո՛ր տգէտի, թո՛ղ թէ փոքր ինչ ուսումնականի, միտքը չի զարթիլ, նորա մտածութեան գործարանը չի վառվիլ և Սուրբ

1001

Հոգու գանձերից հին և նոր դուրս չի հանիլ, մանաւանդ, եթէ այդ մարդը քարոզելու ելնէ խոնարհութեամբ և ոչ հպարտական գիտութեամբ, լտղների աղօթքով և ոչ իր անձի գիտութեամբ պարծենալով: Աթէ Աստուծու ընտիր անօթը—Պաւլոսը—Նիսիսոսի մէջ հաւատացեալներին գրումէր աղաչելով, թէ «Աղօթք արէք և իմ համար, որ ինձ խօսք տրվի բերանս բանալու ժամանակ», արդ, եթէ նա, որ Աստուծու խորհուրդների հաղարպետն էր աղօթքի էր կարօտում և աղաչումէր, ո՞րչափ ևս առաւել մենք,—չատ տկարութիւններով պատած,—այժմեան մարդիկս:

Իսկ այդ Հայոց արեղայքը, իրենց սրտերի հետ միացած դառնաշունչ նախանձի պատճառով, այդ բաների հակառակն են անում. և՛ իրաւ որ, մարգարէի ասածին պէս, «ցաւեր են յղանում և անօրէնութիւն ծնում», աղօթք էլ չեն անում իսկի քարոզողի համար, բաց ի սորանից, եթէ յանկարծ մարգասէր Աստուծուց խօսք շնորհվի, խնդրվումեն նախանձից: Աթէ տեսան ժողովուրդից մի մարդ, որ գովումէր, ծաղր անելով ամաչեցնումեն նորան. «միանգամ թէ խօսեց, էլ լուել չգիտէ», ասումեն, «և զուր տեղը կանչումէ և հառաչում»: Իսկ Հունաց ժողովուրդը և երեսայքն անգամ, իրենց ծնողաց ուսերի վրայ, գովելու համար ձեռները շարժելով և կրցկտուր ձայներ հանելով թուշտումեն: Բայց դոքս գլուխները ծածկած 1) և երեսները փաթածած նստումեն ինչպէս մի հոտած սատկոցի մօտ, մունջ գլխի պէս պապանձված: Եւ եթէ Մարգասէրը գթալով, ժողովուրդոց փրկութեան համար, խրատի խօսք կամենայ

1) Այս տեղ հարկաւոր ենք համարում ծանօթաբանել, որ բնագրում ասած է. «Գլխարկեալք, պատաստել երեսօք, եւ այլն: Հայկազնեան բառարանը «գլխարկեալ» հասկանումէ ոչ «գլուխը ծածկած» այլ «գլուխը կախած», եւ այդ բառարանի բերած վկայութիւնքը արգարեւ այդ միտքն են տալիս:

Բայց սակայն այն վկայութիւնքը, որ տիրապէս «գլուխը կախած» են հասկանում բնա արդեւը չեն եւ «գլուխը ծածկած» հասկանալու, որովհետեւ ամենահին վկայութիւնը Աստուածաշնչից է. «Եւ Համան գնաց ՚ի տուն իւր գլխարկեալ» (Եօթ. դ. Գ. հմ: 12) որ չէ ցոյց տալիս որոշակի կամ գլուխը ծածկած կամ կախած: Միտքը այն է թէ Համանը գնաց տրամած եւ ամպած: (?)

Այս ծանօթութիւնը գրելու բոսկիս յունարէն Աստուածաշունչը ձեռքիս չէր, որ նայելի թէ ինչ բառ է դործ դրած այնտեղ: Հրեական բնագիրը «գլուխը ծածկած» է ասում:

Մեր թարգմանութիւնը ոչ թէ հրեական բնագրին հետեւելով է եղած, այլ թէ այն տեղում մենք այնպէս ենք հասկացել այդ բառը, թէ եւ ընդդէմ չենք, որ կարելի է նաեւ թոյլ տալ «գլուխը կախած» հասկանալ:

տալ քարոզչին, նայելով նոցա դառն խորհուրդներ որոճալուն, իր մէջ քաշելով արգելումէ շնորհը. անընդդիմանալի՛ են, արգանք, ինչպէս ()ըհնութեանց ()ըհնութիւնների մէջ գրված է, այս երկուքը—Աբ և Նախանձ—նորա կայծերը, կրակի բոցի կայծեր են. որոնցից ամեն մէկը դէպ ի բարին գործ զնտղներին մոցնումէ արքայութիւն, իսկ դէպ ի չարը վարողներին դժողքն է ժառանգեցնում:

Արդեօք, այս ժամանակումս կայ Արեմիայ մարգարէին նմանօղ մի մարդ որ ողբալով ասէր. «Արանի թէ գլուխս ջուր լինէր և աչքերս արտասուքի աղբիւր» և նստէի լայի մեր աշխարհի թըշուառութիւնը:

Նոյնպէս ասումէին. «առաջ գիտնաբար էր խօսում Վազարը իսկ այժմ՝ անգիտաբար»: Քանի որ դոցա մէջ տակաւին լուռ էր նախանձը իմ մէջ զօրացած էր շնորհը. իսկ երբ տեսան որ ժողովուրդի բազմութիւնը յօժարութեամբ էր լսում, երբ տեսան, որ մարդիկ միմեանց պատմելով շնորհի առատ թափվիլը հակամիտ էին գովելու, յարգելով և անմոռաց զարմանալով լուսաւոր և ողջամիտ խօսքերի բղխելու վրայ, հրապարակներում և փողոցներում միայն այս բանը միմեանց հոչակելով և ուրախանալով վեր էին ցաթկում, այն ժամանակ իրենք, այդ արեղայքը գետինն անցան, էլ այնուհետեւ սկսեցին ռիսակալութիւն յղանալ և նախանձ ծնանել: Իսկ երբ դոցանում առատացաւ այդպիսի շարակամութիւնը, խօսքը դադարեցաւ և արգելվեցաւ, և ոչ թէ ասողից, քաւ լիցի, «որովհետեւ շնորհը յետ չէ դառնում և պարգևքը չեն պակասում», այլ դոցանից, որ իրենց փրկութեան խօսքը չսեն, որոնց վրայ կատարվումէ Հոգու խօսքը որ ասումէ, թէ «Տիրոջ խօսքերը լսելու սով կ'ուղարկեմ ձեզ»:

Իրենց մտածութիւնքը ուրիշ շատ տեղեր տանել բերելով, միւս սէ բամբասանքների վրայ այս էլ աւելցնելով ասումէին. «Այդ մարդը գիրք չէ կարդում, բայց ընթերցուածը այնպէս անսխալ ասումէ ինչպէս գրքին մէջ գրված է»: Այս էլ չկարողացան որ իմանային, թէ որոնք որ լաւ գիտեն, Վաւթի սաղմոսը պէտք է միայն ժամի միջոցին անսխալ իմանալ և ոչ թէ Աստուածաշունչը միշտ ձեռքը բռնած, յիմարացած մարդոց պէս այս ու այն խօսել: Իսկ մեր երանելի ուսուցիչքը եկեղեցու բոլոր Ատակարանքը, երեք չորս անգամ, ծայր ի ծայր մեզ ուսուցանելով համար էին պահան-

ըում մեզանից, և այն բոլորը Վաւթի սաղմոսի պէս գիտնալ էին հրամայում: Իսկ այժմ, լիրբ և նախանձոտ մարդերից շատերը եկեղեցական գրքերի անունները անգամ կամ կանոնների կարգադրութիւնը հազիւ կարանուան գիտել, բայց, նախանձ ձգող դեի գրագուելով, միմեանց մօտ նստած, ուրիշներին լսելի կերպով յիմար յիմար խօսումեն բարձրաձայն:

Իշլ ինչ ասեմ, իմ ժամանակս բաւական չէ, թշնամու իմ վրայ քաշած նետերից ստացած, անթիւ վէրքերս համարելու, որ օրէ օր և ժամէ ժամ վտանգով ընդունելով, համբերումէի ամեն բանի հարկից լինելով ստիպված: Պատճառ, որպէս ամուր և պիրկ կապով կապված լինելով Տիրոջը քաղցր և ախորժելի սիրով,—որի անուշութեան համը հերիք է եթէ մարդ միանգամ առնու,—ուղումէի առաւել մեռնել, քան թէ այդ սիրուց զրկվիլ:

Բայց այժմ, խօսքս վերջացնելու գալով, յարմար և արժանեմ համարում յիշել զարմանալի և երեք անգամ երանելի աւազակի խօսքը, որ խաչին վրայ իր թշուառ ընկերին էր ասում. թէ «մենք, մեր գործած յանցանքի համեմատ, արժանապէս ընդունումենք այս փոխարէնը», և փրկչի վրայ ցոյց տալով. թէ «բայց Սա ինչն»:

Այսպէս էլ, ես, իմ գործերի համեմատ արժանի պատուհաս ընդունեցի ահա, և խոստովանումեմ հրեշտակների և մարդերի առջև. բայց, ուրիշ առաքելանման մարդիկը ինչն՝ այսպիսի և սորանից էլ աւելիներին հանդիպելով այս աշխարհում, շատ խիստ վշտերով վախճանեցան:

Երանելի Մովսէս Փիլիսոփոսը (Խորենացին), որ արգարև, մինչդեռ մարմնով էր ապրում, գրեթէ երկնքի զօրքերին էր քաղաքակից. չէ՞ որ այդ Հայոց արեղայքը այս տեղից այն տեղ հալածական արին նորան: Չէ՞ որ նորա լուսաւորող և տգիտութիւն հալածող գրքերը տգիտութեամբ Փաթարդիկէս էին կոչում. և ուրիշ այլ շատ բաներով նախատելով, յետոյ, ուրիշներից ամաչելով, խաբէական եպիսկոպոսութիւնքը մահազեղի պէս խմցնելով սուրբին, խեղդեցին, որ թէ իր վախճանելու ժամանակ ինչ հաւուր նղովք, գրով, գրել է գլխաւոր քահանաների վրայ, այդ, դուք ինքներդ շատ լաւ տեղեկացած լինելով, գիտէք..... տիրոջ մասին. նորա անչափ անհանգիստ աշխատութեանց և գիշեր ցերեկ Հայոց աշխարհի լուսաւորութեանը վաստակելու վրայ գրեց: Ասկորները հանել էին տալիս և գետը թափել, այն հրեշտակի նման մարդուն,—

տիրոջը,—անհանգիստ հալածանքով վախճանեցուցին և այժմ էլ դեռ անհագութեան զինով հարբած մեռածին հետ կովումեն:

Անարատ և ամեններից յարգվելու արժանի յոյսը,—տէր Խոսրովիկը,—տակաւին մեր երկրի սահմանը չհասած, մինչ դեռ գալիս էր և սոքա լսեցին, ինչպէս մի թշնամու վրայ նորա ընդդէմ զնվեցան, «էլ ո՞ւր է գալիս միւս թարգմանն էլ» ասելով: Եւ այն օրհնվածը հեռուից լսելով նոցա մահաձայն աղեղների աղմուկը աղթեց աստուծուն և շուտով իր խնդրածը ստացաւ, որի փափաքելի ոսկերքը մենք ո՞չ, այլ ուրիշները արժանի եղան ընդունելու:

Մոյնպէս յարմար եմ գատում նոցա հետ յիշել և տէր Աբրահամ եպիսկոպոսը, որում ըստ ձաթի խորհրդոյն և չհանգուցանէր ՚ի ծերութիւնս, և կարող լինէի առ նմա գոնեայ սուղ ինչ ժամանակ մնալ, թէպէտ և ոչ թերակատար գործով սուրբ և ստոյգ հաւատ, զոր ուսեսալ ՚ի տղայութեանն յերանելոյ Ալանայ, կեամ նովեմբ ՚ի նմին անփոփոխութեամբ մինչև ՚ի վախճան կենցաղոյս իմոյ: Այլ յաղագս իմաստաւոր բանի ըստ նորա տեառն մեծ հրահանգին, շահեալ ՚ի նմանէն հանգոյն մեծի գանձու ամփոփելոյ հաշուէի զպարարումն զայն: Յորոյ վերայ տեսեալ պարեգօտաւորաց, զայրագնեալ իմն զօրհնելոյ տիկնոջ Աւագի զմիտսն ոչ ծանուցին առ ժամայն, նա աղաչելով զերանելի մայրն հոգացեալ իբրև զեղբայրս ՚ի վերայ եղբօր, այլ առաւել զայրացուցեալ, գրգռելով զկամացն իւրեանց նովաւ կատարեցին զհաճոյս:

Եւ սոցա այսպէս նախատվելը և հայհոյվելով հալածվելը, ոչ թէ անցած ժամանակների պատմութեամբ, կամ որպէս մի լուր մի մարդուց լսելով մեզ յայտնվեցաւ, այլ բուն մեր օրերում և մեր ժամանակում այս ամենը կատարված տեսանք:

Իսկ զլաւաջագոյն գրելոյս սուրբ արանցն, զորս ՚ի պատմութեանն նահատակին Վրիգորի գրոշմեալ յիշատակէ: Իշլ ինչ ասեմ արգար և արժանաւոր բարեպաշտ և սուրբ Աերսէս կաթողիկոսի մասին, և կրօնաւոր, առաքինի և Հայոց մեծ լուսաւորիչ տէր Սահակի և ուրիշ շատերի մասին, որոնք վախճանեցան, ո՞չ օրհնելու համար բանալով իրենց բերանը:

Այս պատճառով զարհուրած վախնումեմ, չլինի թէ և դոցա

կպչի Աւետարանի սպառնալիքը, որ ասումէ. «Ահաւասիկ ես կ'ուղարկեմ ձեզ մարգարէներ, իմաստուններ և կարգացողներ և դուք նոցանից կ'սպանէք, կը խաչէք և ձեր ժողովարանների մէջ կը տանջէք և քաղաքից քաղաք կը հալածէք, որ ձեր վրայ գայ երկրի երեսը թափված ամեն արդար արիւն, արդար Աբելի արիւնից սկսած մինչև Գարեթի որդի Չաքարիայի արիւնը, որ տաճարի և սեղանի մէջ տեղը սպանեցիք, ճշմարիտն ասումեմ ձեզ, որ այդ ազգից պիտի պահանջեմ»: Այլ սոգտները պիտի մտիթարեն մեջ շրէից ազգին ասված կարծելով այդ խօսքերը: Այնպիսին, թող լաւ ուշադրութեամբ մտածէ. արդար Աբելի արիւնից ասաց, որ նորա սպանվելու ժամանակին նայելով, երկիւղով հասկանայ, թէ այդ խօսքը վերաբերվումէ այն ամեն մարդոց, որոնք նոյնտեսակ գործեր կը գործեն: շամարձակվումեմ յանդգնութեամբ այս էլ ասել, եթէ ստոյգ չեն իմ կարծածները, դ՛ու, Տէր, քաղցրութեամբ, բանի տեղ չդնելով, ներէ՛ ինձ որպէս մի տկարամիտ մարդու: Այլ քո իսկ ամենասքանչ անձինդ, որից ամեն մեծ կամ փոքր մարդու, որ կան շայոց մէջ հասել է մեծապէս օգտակարութիւն և պատիւ և փառք, իսկ մի քանիսին էլ մահից դէպ ի կեանք և կորստից դէպ ի գրտնվիլ և մէջ տեղում լինել դ՛ու, Տէր, պատճառ ես եղած. այժմ տեսնելով Տիրոջ օրէ օր Աստուծու փառաւորութեամբ լցված հմտութիւնը, որ պարգևել է և բերել է նոցա շքեղութիւն և պարծանք, եթէ կարելի լինէր, նախանձի պատճառով, շատերը կը կամենային հնարք գտնել, որ Տիրոջ արած լաւութեան տեղը բարի չհաստուցանէին, այլ նորա հակառակը: Իսկ վերին արդարատես Աչքը չէ նայում չար կամքերի ուղածներին, այլ իր խնամակալութեան աջողութեամբ, հանապազ և անփոփոխ բարին է կատարում, իր սուրբ անունը այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից փառաւորվելու համար. ամէն:

ԹԱՐԳՄԱՆԶԻ ԲԱՅՇԳՐՈՒԹԻՒՆԻՐԸ

§ 1. Այս թուղթը, ինչպէս ամենին յայտնի է, առաջին անգամ հրատարակվեցաւ սոպագրութեամբ Սոսկվայի մէջ, 1853 թուականին, պ. Լյմինի ձեռքով: Այդ սոպագրված օրինակից է արած մեր թարգմանութիւնը: Ինչպէս պ. Լյմինի յառաջարանից երևումէ, թուղթը դուրս է եկած Ս. Լյմիածնի գրատունից, և ինքը պ. Տրատարակողը ստացել է իր օրինակը հանգուցեալ տէր Հովհաննէս Շահխաթունեան արժանաւոր եպիսկոպոսից: Սեղ, նոյնպէս, պատահեցաւ տեսնել այս թուղթի մի ձեռագիր օրինակը Ս. Լյմիածնի մէջ, Արթ. Գանիէլ վարդապետի մօտ. բայց աւանդ, այն ուրիշ օրինակ չէր, այլ բուն գրչագրիցը արտագրված, որով չէին պարզվում աղճատված կամ մութ տեղերը. չէր լցվում նոյնպէս թերթերի պակասութիւնը:

Թուղթի հարազատութիւնը երկբայութեան ենթակայ խնդիր չէ: Սեծ Սահանի օրով, Ղազար Փարպեցու կրօնաւորների վերայ տեսուչ կարգվելը այդ թուղթի հրատարակվելուց առաջ էր յայտնի Ստեփանոս Տարօնեցու պատմութիւնից, ուր 32-դ երեսում, այսպէս է խօսում երջանիկ ծերունին. «Իսկ Սահան ղեկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր, զպաշտօնեայս ուխտին մեծարելով, բարեչէն զաշխարհս առնելով: Աոյնն և ի ժամանակս իշխանութեան իւրոյ զմեծ կաթուղիկէ եկեղեցին որ ՚ի շայս վերստին մեծապէս նորոգեաց, զդասս կրօնաւորացն բազմացուցանել, որ Սուրենայ անապատն ասի, վերակացու նոցա կարգեալ զՂազար Փարպեցին—ճարտասան և պատմագիր»:

Եթէ այս վկայութիւնն էլ չունենայինք, այնու ամենայնիւ կարելի էր հաստատողապէս ապացուցանել, թէ Փարպեցու գրչիցն է դուրս եկած այդ թուղթը. պատճառ, սորա ոճը, նոյն է Փարպեցու Պատմութեան ոճի հետ. Սուրբ Գրքի նոյն վկայութիւնքը, նոյն

ակնարկութիւնքը միօրինակ տեսնումենք և՛ Պատմութեան և՛ Թուղթին մէջ: Մենք հաւաքել ենք, ինչ որ այս Թուղթի և Պատմութեան մէջ միօրինակ բաներ կան, վկայութիւնք, ակնարկութիւնք, Ս. Վրբից փոխառութիւնք, ձև, ոճ և այլն. բայց երկարութիւնից փախելով յետ գրինք այս անգամ, պահելով հրատարակել Պարպեցու Պատմութեան Թարգմանութեանը հետ *):

Ինչպէս Թուղթի տպած բնագիրը կարգացողներին յայտնի է, պ. Լյմինը հրատարակելով այս Թուղթը արել է, նախ, մի քանի սըրբագրութիւնք, երկրորդ, գրել է մի քանի ծանօթութիւնք և երրորդ, մի յառաջաբանութիւն:

Պ. Լյմինի այս երեք տեսակ գործողութեանց մէջ էլ կան բաներ, որոնց բնաւ չենք կարող համաձայնիլ. այս պատճառով, երբ Թարգմանեցինք այս Թուղթը, հարկ եղաւ հրապարակել թէ՛ մեր անհամաձայնութիւնը և՛ թէ՛ սորա պատճառները: Եւ ինչ որ սոցանից զատ հարկաւոր համարեցինք գրել, այդ բոլորը կարգացողն ձեռքին է այժմ:

Թուղթի Թարգմանութեան ժամանակ, Թարգմանեցինք նաև Ս. Վրբից բերված վկայութիւնքը, բայց սակայն, բացառութեանց մէջ պահեցինք ոչ միայն բուն Ս. Վրբի խօսքերը, ուղղակի արտագրելով Լստուածաշնչից և տեղերը ցոյց տալով իւրաքանչիւրի, այլ երբեմն մէջ բերինք Թուղթի բնագրի խօսքերն էլ, եթէ որ և իցէ պատճառով հարկաւոր թուեցաւ:

Սուրբ գիրքը բաց ի որպէս վկայութիւն բերելուց, Փարպեցին անումէ զանազան ակնարկութիւնք Ս. Վրբում եղած բաների վրայ. բացառութեանց մէջ մենք հանգէս հանեցինք այդ բոլորը, շատ անգամ արտագրելով Ս. Վրբի այն տեղերը և երբեմն, եթէ երկար էին, լրիկ տեղերը ցոյց տալով:

Շատ տեղ էլ Ս. Վրբից ձևեր և ոճեր է փոխ առնում Փարպեցին. մենք այդ տեղերն էլ ցոյց տուինք, արտագրելով որպէս Թուղթի բնաբանը նոյնպէս և Ս. Վրբի խօսքերը. և սորա պատճառը մեր բացատրութեանց մէջ յայտնած ենք մի տեղում:

*) Մերայել Նալբանդեանի այս յիշած բաները մենք բնաւ չգտանք նորա Թղթերում, թէև ամենայն մտադրութեամբ աչքէ անցուցինք ինչ որ մնացել էր նորանից. անշուշտ, պէտքէ կարծել, որ դրա եւս կորած անհետացած են, որպէս մի քանի ուրիշ աշխատութիւնքը, որոնց մասին յիշել ենք մեր յառաջաբանութեան մէջ:

Վարդացողը, երբեմն վկայութիւնք պիտի տեսնէ մեր բացառութեանց մէջ, որ մենք ուրիշ գրքերից ենք առած. չկամենալով ամեն անգամ կրկնել թէ մեր գործ դրած այս կամ այն գիրքը տպված է այս կամ այն տեղում և կամ այս ինչ թուականին, մենք միանգամ այստեղ ենք դնում այդ բոլորը, որ կարգացողը, երբ բացառութեանց մէջ տեսնէ այդ գրքի անունը, իմանայ թէ ինչ օրինակ է եղել մեր ձեռքում, և թէ՛ որ տպագրութեան երեսներն ենք ցոյց տալիս:

Լգաթանգեղոս, Կ. Պօլիս տպած 1709. հրատարակութիւն Մարտականցի Վրիգոր դպրի Լղեքսանդր կաթողիկոսի յանձնարարութեամբ:

Լղիշէ վարդապետ, Մոսկվա. 1861. հրատ. պ. 3. Վաթանեանց.

Թուղթաւ Լրծրունի, Պատմ. տանն Լրծրունեաց, Կ. Պօլիս, 1852. հրատ. Թանգարանին վերձանութեան յ(Օ)րթագիւղ:

Խորենացի քերթողահայր, Պատմ. շայոց, Լմստերդամ, 1695-ին, հրատ. Վանանդեցի Թուղթաւ եպիսկոպոսի:

Կիրակոս Վանձակեցի, Մոսկվա, 1858, հրատ. պ. Ո. Յովհաննիսեանց:

Կորիւն վարդապետ, Վենետ. 1833, հրատ. Մխիթարեանց:

Ղազար Փարպեցի, Պատմ. շայ. Վենետ. 1793, հրատ. Մխիթարեանց:

Յովհաննէս կաթողիկոս, Պատմ. շայ. Մոսկվա, 1853, հրատ. պ. Մ. Լյմին:

Չամչեան շ. Միքայէլի «շայոց Պատմութիւն» անունով ամենին յայտնի երեք հատոր խմբագիրքը, որ մէկ անգամ է տրվել և էլ չպիտի տպվի:

Սեբէոս եպիսկոպոս, (Պատմ.) ՚ի շերակին, Կ. Պօլիս, 1851, հրատ. պ. Թ. Մ. Միհրդատեանց:

Սուրբ Վիրբ (Լստուածաշուէշ), Վենետ. 1805, 4 հատոր, հրատ. շ. Յովհ. Օհրապեան վարդապետի:

Ստեփանոս Տարօնեցի, (Լսողիկ), Փարիզ, 1859, հրատ. Լրժ. Շահնազարեանց Կ. վարդապետի:

Վարդան վարդապետ, շաւքումն Պատմութեան, Վենետ. 1862, հրատ. Մխիթարեանց:

Մեղ մնումէ այս տեղ հանդիսաբար յայտնել մեր անկեղծ շնորհակալութիւնը այն պարոններին, որ կամակար յօժարութեամբ ուղարկեցին մեզ վերը գրված գրքերը, ո՛վ ինչ ունէր: Մի քանիսը այդ գրքերից, ինչպէս ամենին յայտնի է, աղճատված ձեռագիրներից են տպված. այս բոլորիս աւելի լաւ օրինակ չունենալով մեր ձեռքում, գո՛հ եղանք գտնվածով. յայտնի է թէ «առ ՚ի չգոյէ Լստուածոյ ՚ի մէջ Խորայէլի առ ճանճիկ աստուածն Լիկարոնի դիմեցին»: Գեո լաւ է, որ այս հեռաւոր շիւսիսում այսքանն էլ գտնվումէ: Արկին շնորհակալութիւն մեր բարեկաններին.

§ 2. Լսո անանուն յառաջբանը, ինչպէս նորա բովանդակութիւնը տեղիք է տալիս ենթագրել, գրել է մի արժանաւոր մարդ, որ քաջ էր ճանաչում Ղաղար Փարպեցու արժանաւորութիւնը: Լստարակոյս, նորան ենք պարտական, որ այս հրաշալի թուղթը կարդումենք այսօր մենք, մեր նախահարց օրերից հեռացած, նոցա սրտերից օտարացած, կորած և շուարած որդիքս: Լսո պատուական մարդը միտք է արել, որ Փարպեցու Պատմութեան քամակում դնէ և նորա այս թուղթը, որ, մորմոքվելով ենք ասում, մի քանի տեղերում աղճատված է այսօր, և որ աւելի ցաւելին է երկու թերթ էլ իսպառ պակաս:

Շահխաթունեան Յովհաննէս սրբազան եպիսկոպոսը, գտել է այս թուղթը Փարպեցու Պատմութեան քամակում:

Յառաջբանը տալիս է մեզ մի քանի տեղեկութիւնք, առանց որոնց աւելի պիտի մթնէր մեր համար թղթի բովանդակութիւնը: Յառաջբանը կարգացողքը պէտք չէ որ հակասութիւն համարեն նորա մէջ հարևանցի յիշված բայց թղթում իսպառ չեղած բաները: Լս հասարակ, այս յիշատակարաններից ենթագրելով միայն պիտի գուշակել այն դառը հանգամանքը, որոնց մէջ փակված էր Փարպեցին: Կորա թուղթը և յառաջբանը, պարզ երևումէ, որ պահել են իրենց մէջ եղած բաների հազիւ մի հարիւրերորդ մասը, և այս է պատճառը, որ տեղ տեղ անհասկանալի է մնում մեզ թուղթը, որովհետև մենք չգիտենք այն բաները, որոնց վրայ ակնարկումէ թղթի հեղինակը: Խաղաղութիւն և այդ յառաջբանը գրողի տան և հինգ դարուայ ոսկորներին. հանգիստ յաւիտենական:

§ 3. «Քննեցէք զգիրս, զի գուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենականս»: Լեւո. Յովհ. գլ. Ե, համար 39:

§ 4. Բնագրում այսպէս է այդ վկայութիւնը. «որ հանէ զպա-

տուականն յանարգէ, բերան իմ եղիցի». (Եր. 35) Ս. Գրքում այսպէս. «Եւ եթէ հանցես զպատուականն յանարգէ, իբրև զբերան իմ եղիցես»: Մարգ. Երեմ. գլ. ԺԵ. համար 19: Մեր Լստուածաշնչի վկայութիւնը, որ բերինք այս տեղ, բա՛ռ առ բառ ուղիղ է բուն հրէական բնագրի հետ: Թուղթա Լսոնունին այսպէս է գործածում այս վկայութիւնը. «որ հանէ զպատուականն յանարժանէն իբրև զբերան իմ եղիցի», (Եր. 334) որ բաւական մօտ է Երեմիայի մարգարէութեան նախագրութեան խօսքերին ԺԵ. «եթէ հանցեն զպատուականն յանարժանէ իբրև զբերան իմ լիցիս»:

§ 5. Բնագրի խօսքը. «ի շնորհացն որ ելանէին ՚ի բերանոյ նորա». (Եր. 36) յիշեցնումէ մեզ «ընդ բանս շնորհացն, որ ելանէին ՚ի բերանոյ նորա». Լեւո. Գ. ուկ. գլ. Գ. համար 22:

§ 6. Պ. Լսինը, որ «Ղաղարի կեանքի մանրամասնութիւնքը» ասելով, գրեթէ Փարպեցու բոլոր թուղթը ներս է առել իր յառաջբանի մէջ, որպէս նաև թղթի անանուն յառաջբանը, գալով այս Կոր քաղաքին այսպէս է ծանօթաբանում. «կամ զՂաղարչապատ իմանալ պարտ է (տես Պատմ. Ղաղարայ Եր. 307) և կամ զմերձակայն Կորք»: Մեղ թվումէ թէ պ. Լսինը հիմք չունի Կորքի խօսքը հանել երբ բանը Կոր քաղաքի վրայ է, և երբ Կոր քաղաքի էլ Ղաղարչապատ լինելու վկայութիւնը ինքն է բերում Փարպեցու ստոյգ պատմութիւնից: Բանին չվերաբերված, և մանաւանդ անհիմն, ենթագրութիւնքը սար ու ձոր են ձգում կարգացողի միտքը. մեզ ցաւելի է, որ պ. Լսինի այս ոճը սիրելը շատ անգամ պիտի ստիպէ մեզ երկար խօսել հիմնաւոր փաստաբանութեամբ:

Եթէ պ. Լսինը տարակոյս ունի Փարպեցու յանձնված Սուրբ Կաթողիկէ եկեղեցու Ղաղարչապատում կամ Կորքում լինելու վրայ, ասել է թէ պարզ ըմբռնողութիւն չունի այն մասին, թէ ինչ եկեղեցի էր Փարպեցուն յանձնվածը, որովհետև թղթ է տալիս երկու տեղ Ղաղարչապատ և «մերձակայն Կորք»:

Թէ Փարպեցու թղթի բնագիրը և թէ մեր թարգմանութեան կարգացողների միտքը հանգստացնելու համար, շտապումենք յայտնել թէ այն Սուրբ Կաթողիկէ եկեղեցին, որ Մամիկոնեան Մեծ Ղահանը յանձնել էր երանելի Փարպեցուն, ո՛չ աւելի և ո՛չ պակաս է նոյն այն Ս. Կաթողիկէ եկեղեցին, որ այսօր յայտնի է մեզ Ս. Կաթողիկէ Լսինի անունով:

Ամենին յայտնի է, որ հին դարերում Աջմիածին անունը չկար, կամ գոնէ դպրութեան մէջ չէ կործածվել: Ազաթանգեղոսը և Ղազար Փարպեցին ստէպ յիշելով Աղարշապատի եկեղեցին, անուանումեն նորան Վաթողիկէ: Սերէոս եպիսկոպոսը, եօթներորդ դարում, անուանումէ նորան Վաթողիկէ: Հովհաննէս կաթողիկոսը, իններորդ դարում, անուանումէ նորան Վաթողիկէ: Ասողիկը, տասն և մէկերորդ դարում, անուանումէ նորան Վաթողիկէ. նոյնպէս և ուրիշ հեղինակներ, Վաթողիկէ, բայց Աջմիածին և ո՛չ մէկը: Սեր խնդրից դուրս է ցոյց տալ, թէ երբ է երևում մեր գրքերում առաջին անգամ Աջմիածին անունը:

Թէ՛ Նոր քաղաքը նոյն Աղարշապատն է, այդ մասին մենք չենք ուզում ուրիշ վկայութիւնք բերել, — թէ և այ՛, կարող էինք, — բաց ի այն վկայութիւնից, որ ինքը պ. Այմիւր բերել է, ցոյց տալով Փարպեցու Պատմութեան 307-դ երեսը: Ահա ևս Վաթողիկ Փարպեցու խօսքերը. «Աւ օրհնեալ զամենեսեան, նախ գային ՚ի քաղաքն Աղարշապատ, որ այժմ անուանի Նոր քաղաք»: Այս խօսքերից յետոյ, ամեն ուրիշ վկայութիւնք աւելորդ են Նոր քաղաքի և Աղարշապատի նոյնութիւնը ապացուցանելու համար, որովհետև ճշմարտութիւնը աչքի յայտնի է:

Թէ՛ ինչ ժամանակից է սկսվել Աղարշապատի Նոր քաղաք կոչվելը այդ մասին պատմութիւնը ոչինչ չէ ասում մեզ, բայց հաւանականաբար կարելի է ենթադրել թէ այդ եղել է մեր քրիստոնէութիւնից յետոյ և շատ կարելի է թէ Ս. Գրիգոր Առաջնորդի և Տրդատի օրով Աղարշապատը եղած լինելով կենտրոն քրիստոնէութեան ամենայն շայոց, որպէս նաև առաջին օրորոց հայկական ընդհանուր Քրիստոնէութեան, փոխել են նորա անունը, որ կապաշտութեան ժամանակից էր մնացած և դրել են Նոր, թերևս խորհրդով փոխ առնելով այդ անունը Ս. Գրքից: «Աւ գրեցից ՚ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ զնորն Արուսազեմի, որ իջանելոց է յերկնից Աստուծոյն իմոյ. և անուն նորա Նոր: Հայտն. գլ. Գ. համ. 12: Թէ՛ մեր բազմերախտ և առաքելանման Առաջնորդիչը ամենայն նախանձայուղութեամբ հետամուտ էր երբեմն քարոզութեամբ, հեղուկեան հոգով, և երբեմն թագաւորական հրամանով զօրքով և զէնքով ջնջել և անհետացնել յաւիտեանս յաւիտենից ամեն բան, որ կարող էր յիշեցնել կապաշտութիւնը, այդ ապացուցի կարօտ խնդիր չէ, որով-

հետև պատմութեան ձեռքով արդէն ապացուցեալ ճշմարտութիւն է: Բայց սակայն չենք կարող ասել թէ բո՛ւն Ս. Առաջնորդի օրով է եղել այդ անուանափոխութիւնը. բայց որում նորա սկսածը կատարելագործեցին նորա առաքելանման որդիքը և թոռները:

Աղարշապատ քաղաքը ունի այսօր իր սեփական եկեղեցին. և Ս. Վաթողիկէ Աջմիածինը էլ չէ կոչվում այդ քաղաքի անունով: Այսօրվայ մեր ամենայն շայոց եկեղեցեաց Մայրը բնաւ Աղարշապատի մէջն էլ չէ այլ նորա հարաւային կողմում, առանձին և շէնից մեկուսի: Բայց սակայն այդ եկեղեցին շինվել է Աղարշապատի կենտրոնում. և այս մասին կան ստոյգ վկայութիւնք. թէ և Աղարշապատից մնացած գեղը հեռացել է այժմ նորանից: Աջմիածինը հիմնված է Ս. Առաջնորդի ձեռքով բո՛ւն Աղարշապատի մէջ տեղը, մօտ թագաւորական պալատին, որ դուրսէ ընկնումէր եկեղեցու հարաւային արևելեան կողմը, բայց որում այդ կողմից փակված մի դուռ, մինչև այսօր էլ աւանդութեամբ, կոչվումէ «Տրդատայ դուռ»:

Ս. Աջմիածինի արևմտեան կողմից, տակաւին երևումէ այսօր, Աղարշապատի հողէ պարսպի մնացորդը, քաղաքից աւելի հեռու քան թէ վանքը, հիւսիսից դէպի հարաւ ուղղված: Աղարշապատից դուրս գալով, եթէ իսկոյն դէմքը շրջես արևմուտք և աջ կողմը Սրբաղնադոյն Սիւնհոգոսի շինուածքը, իսկ ձախ կողմը Ներսէսեան լիճը բռնած առաջ գնաս բաւական տեղ դէպ ՚ի արևմուտք, այն ժամանակ հին պարսպի մնացորդը կը հանդիպի քեզ դէմ յանդիման, Վաստղի առուի վրայ: Թէ՛ որքան երկայնվումէր տակաւին այդ պարսպը դէպ ՚ի հարաւ չէ կարելի այլ ևս հաստատ ասել. բայց երևի թէ տակաւին շատ առաջ էր գնում, որովհետև Ս. Գալիանեանց վանքը բաւական հեռու է պարսպի մնացորդից, որ գրեթէ վերջանումէ լճի մօտ: Այդքանն էլ հերիք է ապացուցանելու համար թէ Ս. Վաթողիկէ Աջմիածինը Աղարշապատ քաղաքից դուրս չէր այլ նորա մէջ:

Բայց ինչ հարկաւոր են մեզ հողեղէն վկայութիւնք, երբ գրաւոր, պարզ և բացայայտ յիշատակարան կայ այդ մասին:

«Աւ տեսիլ մի ահաւոր մարդոյ... և ՚ի ձեռին իւրում ուն մի մեծ ոսկի... և եկն եհաս մինչև մօտ ՚ի յատակս երկրիս, ՚ի շինամէջ քաղաքիս... և տեսանեմ ՚ի մէջ քաղաքիս մուտ յապարանսն արքունի խարխտածև ճախարակածև խարխտ ոսկի»:

մեծութեամբ իբրև զմեծ մի բլուր և բարձր մինչև յոյժ, և ՚ի վերայ նորա սիւն մի հրեղէն և ՚ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ և խաչ լուսոյ ՚ի վերայ նորա»: (Ագաթանգեղ. եր. 329):

Սորանից մենք պարզ տեսնումենք, որ ոսկի խարխիս ունեցող հրեղէն սիւնը երևել է Աղարշապատի կենտրոնում: Սիւս մնացած երեք սիւնքը, որ ոսկի խարխիս չունէին և մենք մէջ չբերինք, որովհետև մեր նպատակին յարմար չէր, Աղարշապատից դուրս էին. մինը Վայիանեանց, միւսը շուրիսիմեանց նահատակված տեղերում, և երրորդը նոցա բնակարանի տեղում, հնձանի մտ, ուր նահատակվեցաւ շուրիսիմեանց մի ընկերը և ուր այժմ տեսնումենք Շողակաթի եկեղեցին:

«Որոյ սեան խարխիսն ոսկի էր և նորին սիւնն հրեղէն և թակաղաղն անպեայ և խաչ լուսեղէն ՚ի վերայ նորա: Ոսկի խարխիսն վէմն հաստատութեան անշարժութիւն է և սիւնն հրեղէն կաթողիկէ եկեղեցի է»: (Վոյն. եր. 332):

«Եւ տեղին այն տաճար լիցի Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և աթոռ քահանայապետութեան». (եր. 333):

«Շինեցիւր տաճար անուանն Աստուծոյ, ՚ի տեղուջն որ քեղցուցաւ, որ սիւնն հրեղէն ունէր ոսկի խարխիս (եր. 337)»:

«Եկայք զնկատեալ տեղին տերունական տանն և մեզ հրամայեալ, ՚ի մէջ առեալ ՚ի պատիւ փակեցուք. թագաւորն և ամենայն ժողովուրդքն հանդերձ երթալ հասանէր ՚ի ցուցեալ տեղի հրեղէն սեանն ոսկիակալ խարխիսն»: (եր. 344):

«Հասանէր յառաջին դաստակերտսն իւր յըռոտտակն այրատեան գաւառին ՚ի Աղարշապատ քաղաքի... և զնկատեալ տեղի տանն Աստուծոյ զցուցեալն նմա յԱստուծոյ ՚ի տեսլեանն, զյառաջագոյն դրոշմեալն իւր և կանգնեաց անդ զեկեղեցին Աստուծոյ»: (եր. 375):

Այս պարզ և բնաւ երկբայութեան տակ չընկնող վկայութիւնքը ապացուցանելով ապացուցանումեն, որ Ս. Գրիգոր Առաւորչի հիմնած և շինած կաթողիկէ եկեղեցին էր Աղարշապատի մէջը և ոչ նորանից դուրս, ինչպէս այսօր նոյն սուրբ եկեղեցին:

Սեր պատմութեան մէջ անդադար տեսնումենք, որ Աղարշապատի կաթողիկէ եկեղեցին, որպէս նախամեծար Մայր եկեղեցի, հանդիսարան է լինում երևելի դէպքերի: Հայոց կաթողիկոսքը,

մարդպանքը, նախարարքը, զօրքը և այլն և այլն մի ուրախական տոնի պատճառով, նախ և առաջ իրենց ուխտերը և աղօթքը կատարումեն Աղարշապատի Սուրբ կաթողիկէ եկեղեցում, և յետոյ կոյսերի վկայարաններում: Ինքը Սեծ Ահաճնը, երբ Պարսից Աղարշ թագաւորից Հայոց սպարապետութիւնը գտած Պարսկաստանից Հայաստան վերադարձաւ, նախ և առաջ զնաց Աղարշապատ քաղաքը, ուր իր սովորութեան համեմատ, ինքը և իր հետ եղած ուխտապահ և քաջարանց նախարարքը մի քանի օր մնացին այն տեղ և իրենց ուխտերը և նուէրները կատարեցին նախ կաթողիկէ եկեղեցու մէջ և ապա կոյսերի նահատակված տեղերում: (Տես Փարպ. Պատմ. Հայ. եր. 307—8):

Կարելի՞ բան է ասել, թէ այդ Աղարշապատի կաթողիկէն չէր նոյն իսկ այսօրվայ կաթողիկէ Լջջմիածինը Ս. Առաւորչի հիմնած և շինած հայկական նախամեծար եկեղեցին: Ի՞նչ ուրիշ եկեղեցի առաւել յարմարութեամբ կարող էր հանդիսարան լինել այն փառաւորութեանց, որով փառաւորված քաջարանց նախարարքը իրենց գլխաւորի և Սուրբ Յովհանն Մանդակունու հետ այնտեղ վաղէին իրենց աղօթքը, գոհութիւնը և ուրախական արտասուքը, որպէս անոյշ հոտ, Աստուծուն վերողղելու, Որ Գրիգոր Սեծ նահատակի բարեխօսութեամբ պարզացրել էր թէ՛ քրիստոնէական խաչի և թէ՛ կարմիր Արգանի դրօշի պարծանքը, որ այն միջոցին գտնվումէր նորա սիրելի եղբօր նրդու ձեռքում:

Աղարշապատի մէջ հաւաքված բոլոր եկեղեցական ժողովները լինումեն Սուրբ կաթողիկէի եկեղեցում: Սեր մեծ հայրապետ Լարգէն կաթողիկոսը, Վաղկեգոնի ժողովը դատելու համար, Աղարշապատի նոյն Սուրբ կաթողիկէ եկեղեցու մէջ հաւաքեց այն սուրբ ժողովը, որի վերջին խօսքը էր անաթեմա Աւոնի տուամբին:

Կարելի՞ բան է թոյլ տալ, թէ, այսօրվայ կաթողիկէ Լջջմիածինը թողած, կարող էր այդ ժողովը գումարվել մի այլ եկեղեցում: Ամենին յայտնի է թէ ի՞նչ ծանր և մեծակշիռ խորհուրդ ունի Աղարշապատ վերը յիշված սուրբ ժողովը մեր ազգի կեանքի մէջ: Այդ ժողովին էր ապաստան Ս. Առաւորչի շինած նաւը, և այդ ժողովը դարձեալ հեռատես իմաստութեամբ նաւապետելով նորան և փրկելով Ռիզանդիան ճախիններից և Աւոնեան խարտաւանակ տուամարի ծանծաղներից, ուղղեց նորա ընթացքը նոյն գծի վրայ,

ուր կանգնեցրել էր նորան մեր բազմերախտ Հայրը, որ մնաց ինչպէս որ կար սկզբից, նոյն անապակ ջրերում, որոնց աղբիւրը էր ինքը մեր Փրկիչը, և որոնք սկզբնաբար խառնվելով Թագդէոս և Բարթողիմէոս առաքեալների և նոցա հարազատ յաջորդների արիւննով ոռոգել էին Հայաստանի կոապաշտութեամբ կոշտացած հողը:

Մենք չենք կարող թոյլ տալ, որ այդ ժողովը եղած լինէր մի այլ եկեղեցում, մանաւանդ, որ Բաբգէն կաթողիկոսը ինքն Գուին նստելով, ժողովը չէր կարող ուրիշ մտքով գումարել Աղաբաշտպատ, եթէ ոչ Ս. Լուսաւորչու ձեռքով հիմնված կաթողիկէ եկեղեցու մէջ կատարելու համար այն մեծախորհուրդ իրողութիւնը, ըստ որում Աղաբաշտպատի Ս. կաթողիկէ եկեղեցին Մայր էր ամենայն Հայոց և աթոռ քահանայապետութեան, թէև այն միջոցին քաղաքական պատճառներից ստիպված Աղաբաշտպատ չէին նստում մեր կաթողիկոսքը:

Յովհաննէս կաթողիկոսը այսպէս է վկայում մեր խօսքին. «Մեծ հայրապետն Հայոց Բաբգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Արաց և Եղուանից ՚ի Կոր քաղաքի ՚ի Սուրբ կաթողիկէի ՚ի մայրն եկեղեցեաց Հայոց»: (Յովհ. կաթ. Պատմ. Հայ. եր. 36): Տեսնումք Կոր քաղաքի Սուրբ կաթողիկէի անունը տալով, իսկոյն յարումք. ՚ի մայրն եկեղեցեաց Հայոց¹⁾:

Երդ, բաց ի այսօրվայ Ս. կաթողիկէ Լջմիածինը, ինչ ուրիշ եկեղեցի կարող էր լինել Աղաբաշտպատում, որի համար Յովհաննէս կաթողիկոսը ասէր «Հայոց եկեղեցիների մայրը»:

«Կոյնն (Ահհան) և ՚ի ժամանակս իշխանութեան իւրոյ զմեծ կաթողիկէ եկեղեցին որ ՚ի Հայս վերստին մեծապէս նորոգեաց»: (Եսողիկ. եր. 82):

Ինչ ուրիշ եկեղեցու համար կարելի էր այսպէս խօսել բաց ի Ս. կաթողիկէ Լջմիածնից:

Լմենին յայտնի է, որ երանելի Կուսմիտաս կաթողիկոսը, չօրհիսիմեանց հրաշլի «Ենձինքի» այն անմահ երգիչը, եօթներորդ դարու սկզբում, սրբատաշ քարերով շինեց, որպէս չօրհիսիմեանց հոյակապ վկայարանը, նոյնպես և Աղաբաշտպատի կաթողիկէ եկե-

1) Սոյոգ է Փաւստոս Բիւզանդացին (գլբ. Գ. զԼ ԺԳ) Տարծի սուրբ կարապետի—Գլակայ վանքի—վրայ խօսելով կոչումէ նորան եւս «Մայր եկեղեցեաց ամենայն Հայաստանեայց». բայց այս այն պատճառով միայն, ինչպէս ինքը Փաւստոսն էլ յայտնումէ, որ առաջին է ժամանակով բոլոր հայոց եկեղեցիներից:

ղեցու գմբէթը, որ առաջ փայտից էր շինված¹⁾: (Թողնելով ուրիշ ների վկայութիւնքը, եթէ միայն մէջ բերենք արժանայիշատակ Սեբէոս եպիսկոպոսի ասածը, որ գրեթէ ժամանակակից էր Կուսմիտասին, եթէ միայն յիշենք Յովհաննէս կաթողիկոսի խօսքերը, հերիք է որ անդարձ փարատվել ամենայն տարակոյս:

«Աւերացոյց (Կուսմիտաս) և զփայտակերտս Սրբոյ կաթողիկէին, նորոգեաց և զխախուտ որմնն, շինեաց զքարայարկսն»: (Սեբէոս եր. 140):

«Յետ որոյ ապա քակեալ սորա (Կուսմիտասայ) զփայտակերտ գմբէթ Սրբոյ կաթողիկէին, որ ՚ի Աղաբաշտպատ քաղաքի, շինէ զնա գեղեցկայարմար և չքնաղատես կոփածոյ քարամբք». (Յովհ. կաթ. Պատմ. եր. 43):

Երանելի Կուսմիտաս կաթողիկոսի սրբատաշ քարերով շինած փառաւոր գմբէթը, մեր այսօրվայ Ս. Լջմիածնի գմբէթը լինելը, ամեն հարցնողի կարող է պատմել Լջմիածնի նաև վերջին մոնթը:

Եւելորդ է ասել, որ Աղաբաշտպատի մէջ երկու հատ չէր այլ մէկ հատ Սուրբ կաթողիկէ անունով եկեղեցի, և այն մեր Մայր եկեղեցին, որի համար Փարպեցու Թղթի յառաջաբանն էլ ասումք. «Շնորհէր (Ահհան) նմա (Աղաբաշտպատ) զհոյակապ և զականաւոր տեղին ՚ի Կոր քաղաքի, որում անուն էր Սուրբ կաթողիկէ եկեղեցի». (եր. 36—7):

Մենք կարող էինք և ուրիշ վկայութիւնք բերել մեր ասածները ապացուցանելու համար, բայց այսչափն էլ գուցէ աւելորդ երևի ոմանց. խոստովանումենք, բայց ինչ անես, երբ Փարպեցու Թողթը կարգացողին սար ու ձոր են ձգել «կամ զԱղաբաշտպատ և կամ զմերձակայն Կորք» ասելով:

Մեզ գուցէ ասեն,—ի հարկէ ոչ պ. Լջմիւր—թէ Ս. Լջմիածինը կաթողիկոսական աթոռ լինելով, ինչպէս կարելի է որ յանձնվէր մի մասնաւոր վարդապետի տեսչութեան:

Պատասխանենք կարճաօտ. Փարպեցու ժամանակ, որպէս և նորանից յետոյ մեր կաթողիկոսքը նստումէին Գուին քաղաքում, ուս-

1) Թղթի յառաջաբանի մէջ յիշված եկեղեցու փայտակերտը, որ վնասվել էր կրակից, մենք հասկանումենք Ս. Լջմիածնի գմբէթը, որ ինչպէս երևումէ, երկբայ յետոյ, վերստին փայտից է շինվել, որ փայտէ մնացել է մինչև եօթներորդ դարու սկզբը, որ Կուսմիտաս կաթողիկոսը խապառ վերջնելով փոխանակը շինել է այն հոյակապ քարակառօց գմբէթը:

տի բնականաբար, վանահօր ձեռքով պիտի կառավարվէր Սուրբ Կաթողիկէն, ուստի և Սեծ Ա շահներ ամենայն իրաւունքով յանձնել էր Փարպեցու պէս մի մարդու, որ այն ժամանակ, ինչպէս վերակայումէ թող յառաջաբանը «արուեսակ աստղի պէս էր փայլում»։ «Նւ զիմ շնորհս քան զբազումս պարեգօտաւորաց» (զօրացուցեալ պայծառացոյց Ա երկն Խնամակալութիւնն) ասումէ ինքն Փարպեցին, իր թողութիւն, պաւղոսեան գեղեցիկ անդամութեամբ։ (եր. 42)։

Պատճառ ունինք ենթադրելու, թէ Փարպեցին առաջինը չէր որ կառավարումէր Ա. Կաթողիկէ եկեղեցին, որովհետեւ, Ա արդանանց Լաւրայրի պատերազմից և սուրբ Ղևոնդեանց նահատակութիւնից յետոյ, կաթողիկոսական անժողով փոխադրուել էր Ղուկին. իսկ այդ թուականներից մինչև Սեծ Ա շահնի մարզպանութիւնը աւելի քան թէ երեսուն տարի կայ, յայտնի է թէ այդ միջոցում մասնաւոր մարդոց այսինքն եպիսկոպոսների կամ արժանաւոր վարդապետների ձեռքով էր կառավարվում Ա. Կաթողիկէն։ Բաց ի սորանից, Փարպեցու թողութի մի անհասկանալի տեղում կայ ակնարկութիւն մի մարդու վրայ, որ շատ անգամ կամ շատ ժամանակ կառավարել էր այդ եկեղեցին. ըստ որում այսպէս է ասում. «քանզի յոյով նորա արբանեկեալ էր զպէտս տեղւոյդ, հարցցի թէ կայ ուրէք և ասացի» (եր. 55)։ Սենք չենք հասկանում միայն, թէ ո՞ւմ է վերաբերում նորա գերանունը։

Իսկ թէ Փարպեցին վերջին կառավարիչը չէր, այդ մասին զբրական ապացոյց ունինք։ Փարպեցու հալածվելուց առաւել քան թէ հարիւր քսան տարի յետոյ, Կումիտաս կաթողիկոսի օրով կառավարումէր այդ եկեղեցին մի Յովհաննիկ անունով վարդապետ։ Սերէոս եպիսկոպոսը պատմելով Կումիտաս կաթողիկոսի վերը յիշված նորոգութիւնքը ասումէ. «Լայս եղև յամս Յովհաննիկան վանուց երիցօւ Արբոյ Կաթողիկէին» (Սերէոս եր. 14)։

Սեղ կարող են ասել, թէ Փարպեցու թողութիւն կան տեղեր, որ Փարպեցու յանձնված տեղը ենթադրել են տալիս մի նոր հիմնարկութիւն։

Լհասարիկ այդ տեղերը. «զի ամենայն կահիւ և կազմածով եթէ սակաւ մի երեւէի նուազեալ քան զայնոսիկ որք յերկերիւր ամէ շինեալ վանորայքն համարէի զանձնս արժանի կարյ, ... Եւլ առաւելագոյն այր մի Լիլիթ անուն որ եկեալ ՚ի տեղիդ ՚ի Գարգ-

մանայ վանաց ՚ի նմին աւուր յորում հիմն արկաւ տեղւոյդ» (եր. 56, 57)։

Նախ, ինքը Փարպեցին, Ա. Կաթողիկէ եկեղեցու վերաբերութեամբ այսպէս է փարատում ամենայն տարակոյս. «կատարէր զսովորական ուխտս և զպատարագս ՚ի սուրբ եկեղեցւոյն Կաթողիկէի զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ, ըզհնացեալ գործ նախնեացն իւրոց քաջ զօրավարն Հայոց Սամիկոնեանն Ա շահն» (Փարպ. Պատմ. եր. 273)։ Սորանից մենք տեսնումենք, որ Սեծ Ա շահներ, ոչ թէ չեղած տեղում նոր է շինել Ա զարշապատի Կաթողիկէ եկեղեցին, այլ թէ նորոգել է հիմնի վեր։ Արկրորդ, թող յառաջաբանը մեզ ասումէ, թէ Սեծ Ա շահն Փարպեցու տեսչութեան յանձնել է «զՏոյակապ և զականաւոր տեղին ՚ի Նոր քաղաքի, որում անուն էր Սուրբ Կաթողիկէ եկեղեցի վանօքն» (եր. 37)։ Ինքը Փարպեցին յիշելով իր կահ կարասիքը և կազմածը, ոչ Սուրբ Կաթողիկէ եկեղեցուն այլ վանքին վերաբերելով աւելացնումէ. «եթէ սակաւ մի երեւէի նուազեալ քան զայնոսիկ, որք յերկերիւր ամէ շինեալ վանորայքն» և թէ «զիտեն զայս բնակեալքն ընդ իս»։

Ա զարշապատի Ա. Կաթողիկէ եկեղեցին Ա. Լուսաւորչի ձեռքով հիմնվեցաւ, ոչ որպէս այժմեան հասկացողութեամբ վանք կամ վանքի եկեղեցի կամ կրօնաւորների բնակարան, այլ որպէս մայր եկեղեցի թագաւորանիստ Ա զարշապատի, որով և ամենայն Հայաստանայց։ Լգաթմանգեղոսը, որ մանրամասն և շատ տեղ էլ անունով պատմումէ այսպիսի բաները, բնաւ չէ խօսում Ա. Կաթողիկէի մօտ կրօնաւորների բնակարան լինելու մասին։ Սեղ թվումէ, թէ Փարպեցու «ի նմին աւուր յորում հիմն արկաւ տեղւոյդ» խօսքը վերաբերվումէ Ա. Կաթողիկէ եկեղեցուն ոչ, այլ վանքին, այսինքն կրօնաւորների բնակարաններին, որ Լիլիթն էլ Գարգմանի վանքից գալիս է այն տեղ և բնակվում։ Ինքը Փարպեցին «և բնակեալքն ընդ նմա»։ Յայտնի է թէ սոցանից ոչ մինը չէ բնակվել բնաւ եկեղեցու մէջ, այլ այն շինուածքում, որի անհաստատութիւնից «միանգամ և երկիցս ջարդեցաւ բոլոր կահն»։ Լայս ջարդված բաներն էլ չենք իմանում եկեղեցական անօթք, այլ կրօնաւորների բնակութեան սարք ու կարգը։ Լսողիկը օգնութիւն է գալիս մեզ երբ Սեծ Ա շահնի Կաթողիկէ եկեղեցին մեծապէս նորոգելը պատմելով յարումէ. «զղասս կրօնաւորացն բազմացուցանելով, որ Սու-

րէնայ անապատն ասի»: Տայտնի է թէ, երբ բաղմացնումէր կրօնաւորների թիւը, պիտի այդ բաղմումեան չափով տեղ էլ պատրաստէր, ուստի և անհասկանալի չէ Փարպեցու այն խօսքերը, որ մի նոր հիմնարկութիւն կարող էին համարել տալ նորան յանձնված վանքը: Աւելորդ է ասել, որ մենք չգիտենք, թէ ինչի՞ համար, եօթներորդ դարում, Սուրէնայ անապատ է կոչվում Ս. Կաթողիկէի մօտի կրօնաւորաց բնակարանը. բայց մեր այս անգիտութիւնը անփաստ է. կրօնաւորների բնակարանը կարող էր նաև հինգերորդ դարում Սուրէնայ անապատ կոչված լինել: Այսօր էլ կան Ս. Իջմիածնի մէջ տեղեր, որ ունին իրենց յատուկ անունը:

Համառօտենք մեր խօսքը: Փարպեցուն յանձնվելէ՛ Նոր քաղաքի Ս. Կաթողիկէ եկեղեցին, իսկ՛ Նոր քաղաքը Ս. Ղազարշապատն է, և Ս. Ղազարշապատի Ս. Կաթողիկէ եկեղեցին, մեր այսօրվայ Ս. Իջմիածինը. ուրեմն Ղազար Փարպեցուն յանձնվածը եղել է Հայոց նախամեծար մայր եկեղեցին, նոյն ինքը Սուրբ Կաթողիկէ Իջմիածինը:

Այսպէս բացայայտ լինելով այս բանը մեր պատմութեան մէջ, որ անտարակոյս անյայտ չէր և պ. Իմինից, մենք զարմանումենք այն ծանօթբանութեան վրայ—որ պատճառ դարձաւ մեզ ակամայ այսքան խօսելու—«կամ զՍ. Ղազարշապատ իմանալ պարտ է և կամ զմերձակայն Նորք»:

§ 7. Բնագրում այսպէս է ասած. «Եղև զմեզ զհարստի զբանն Պօղոսի, զի յամենայն ժամ աստուածասէրքն առանց խղճի մտաց կեցցեն». (Եր. 37): Ո՛չ միայն Պաւղոսի թղթերում, այլ բովանդակ նոր կտակարանում չկան այս խօսքերը. միայն, Պաւղոսը Փեղիքս դատաւորին այսպէս է ասում. «յորում և ես իսկ ձգնիմ անխիղճ միտս ունել առ Աստուած և առ ամենայն մարդիկ յամենայն ժամ»: Գործք Առաք. գլ. ԻԳ. համ. 16: Սեղ թմուռէ թէ թուղթի յառաջաբանը գրողը այս խօսքերն է, որ ուրիշ ձևով առաջ է բերում, պատճառ, բաց ի սոցանից և ոչ մի նման բան կայ, յառաջաբանի յիշած վկայութեանը:

§ 8. Այս Համաղասպ Սամիկոնեանի ո՛վ լինելը մեզ չէ ասում Պատմութիւնը ուստի մենք չգիտենք և ընթերցողին էլ ասել չենք կարող:

§ 9. Փարպեցին ինքն է եղել առաջինը, որ երրորդ է կոչել իր Պատմութիւնը, առաջին համարելով Արամեանգեղոսի և երկրորդ Փաւստոս Բիւզանդացու գրածները: Այս դասակարգութիւնը ուղիղ

է եթէ միայն վերաբերենք այդ աշխատութեանց ժամանակին կամ նոցա բովանդակած անցքերի ժամանակին, իսկ թէ կամենանք գործի արժանաւորութեամբ դասակարգել, նայելով նոցա վրայ որպէս պատմական աշխատութեանց վրայ, ապա ուրեմն, այս երեքի մէջ առաջինն է Ղազար Փարպեցին, որի պատմութիւնը ստոյգ, անցքերի դասակարգութիւնքը պարզ, և ժամանակագրական յաջորդութիւնքը անշփոթ: Արդարև, Փարպեցու պատմութիւնը շատ տեղ և մեծ մասով նմանութիւն ունի Տակիդոսի հոյակապ տարեգրութեանց, թէ իր անխտակիր ոգու, և թէ ճարտարութեան մասին: Այլ մեզ թմուռէ թէ այս համեմատութիւնը էր ամենամեծ գովասանութիւնը, որ կարող էինք տալ Փարպեցու Պատմութեան, առանց վախենալու եւրոպական գիտութեան դատաստանից:

Հայոց մէջ եղել են հեղինակներ, որ Փարպեցուն դասել են Աղիշէից յետոյ. եթէ որպէս պատմագիր, Աղիշէից, երկրորդ պիտի համարվի Փարպեցին, այդ մենք չենք ընդունում. պատճառ միմիայն մարդ կայ, որ կարող է Փարպեցուց առնուլ նորա առաջնութիւնը, և այդ մարդը է անզուգական Սոփէս Կորնեացին: Բայց մենք մանրամասն կը խօսինք այս բաների մասին, երբ Աստուծու աջողելով հրատարակենք Փարպեցու Հայոց պատմութեան թարգմանութիւնը:

§ 10. Բնագիրը. «Յորժամ զամենայն արդարութիւնս կատարիցէք, ասասջիք, եթէ ծառայք անպիտանք եմք». (Եր. 39): Բուն Աւետարանի խօսքերը. «Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալն ձեզ, ասասջիք, թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտեաքն առնել արարաք». Ղուկ. գլ. ԺԻ, համ. 10:

§ 11. «Օ՛ր այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք նենգաւորք կերպարանին՝ ի կերպարանս առաքելոց Քրիստոսի. և չեն ինչ զարմանք. քանզի և ինքն սատանայ կերպարանի՝ ի հրեշտակ լուսոյ. և ոչինչ է մեծ, թէ և պաշտօնեայք նորա կերպարանին իբրև զպաշտօնեայք արդարութեան, որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց». Թուղթ Պաւղ. առ Կորնթ. երկր. գլ. ԺԲ, համ. 13—15:

§ 12. «Քանզի ոչ եմք իբրև զայլն, որ վաճառական լինին բանին Աստուծոյ. այլ իբրև ՚ի հաստատութենէ, այլ իբրև յԱստուծոյ, առաջի Աստուծոյ, ՚ի Քրիստոս խօսիմք»: Թուղթ Պաւղ. առ Կորնթ. երկր. գլ. Բ, համ. 17:

«Յոր ինչ որ համարձակիցի, անդամութեամբ ասեմ, և ես. Երբայցեցինք իցեն, և ես. Իսրայելացիք իցեն, և ես. զաւակ Լըրահամով իցեն, և ես, պաշտօնեայք Քրիստոսի իցեն, յանդգնագոյնս ասացից, թէ առաւել ևս ես: Եթէ վաստակօք, առաւել, եթէ գանիւք, և՛ս առաւել, եթէ բանտիւ, աւելի քան զնոսա, եթէ մահուամբ, բազում անգամ: Ի Լըրէից, հնգիցս, քառասուն միով պակաս արբի, երիցս ձողկեցայ, միանգամ քարկոծ եղէ. երիցս նաւակոծ եղէ. զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ. ՚ի ճանապարհս բազում անգամ: Ա իշտս ՚ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս ՚ի հեթանոսաց, վիշտս ՚ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս ՚ի ծովու, վիշտս ՚ի սուտ եղբարց: Ի ջանս և ՚ի վաստակս, ՚ի տքնութիւնս բազում անգամ. ՚ի ցուրտ և ՚ի մերկութեան: Թո՛ղ զայլ ներութիւնսն. և զի հանապազ խուժանն ՚ի վերայ իմ կուտէր, և հոգք ամենայն եկեղեցեաց: Ա՛ հիւանդանայ, և ո՛չ ես հիւանդանամ. ո՞ գայթակղի, և ո՛չ ես տապանամ: Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարութեանն պարծեցայց: Լստուած և հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ՛ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ո՛չ սքտեմ: Ի Ղամասկոս ազգապետն Լրետայ արքայի պահէր գբաղաքն Ղամասկացոց ունել զիս. և ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, և փախեայ ՚ի ձեռաց նորա»: Թուղթ Պաւղ. առ Կորնթ. երկր. գլ. ԺԿ, համ. 21—33:

Իաց ՚ի սոցանից և ուրիշ տեղերում առջ է բերում Պաւղոսը իր պարծանքները. բայց մենք հերիք համարենք այսքանը:

§ 13. Բնագիրը. «Եւ հաւատոց Լստուծոյ առաւել ընդանի», (եր. 39): Պաւղոսից է փոխ առնում այս ձևը. «Մանաւեդ առ ընտանիսն հաւատոյ», Թ. Պաւղ. առ Ղազատ, գլ. Զ, համ. 10: Իններորդ գարում ծաղկած հրաշալի Մաշտոցը իր հոյակապ և սքանչելի նամակի մէջ, որ գրեց Լըբասին, մեզ թվումէ թէ դարձեալ Պաւղոսի այս գաղափարն է յեղյեղում, երբ ասումէ. «ըստ անդակից գոլոյ ինձ ՚ի մանկութենէ օրինաց Լստուծոյ»¹⁾:

1) Են պարոնները, որոնք ամեն ստութեան երկրպագումն միայն թէ ճշմարտութեան երեսից փախչին, ինչպէս սատանան խոնկից, չեն ամաչում մինչև այսօր էլ այս սուրբ եպիսկոպոսը քաղկեդոնական հռչակել, առիթ առնելով նորա բուրբական ազանց սխալը: Ահաւասիկ բուն ճշմարտութիւնը: Յիբաւ է որ այս ահանաւոր անձը, Գեորգ կաթողիկոսի օրով, մինչդեռ Սեւանայ վանքումն էր լինում, կարծելով թէ կարելի է ընդունել քաղկեդոնեան ժողովը առանց ուղղափառ լինելուց դադարելու:

Փարպեցին, այս թուրթի մէջ, առ հասարակ շատ է հետևում Պաւղոսի ձևերին, ինչպէս պիտի տեսնէ կարգացողը:

§ 14. Բնագիրը. «Եւ ամենեցուն կղկղանք թէպէտե երեւիցեմ», (եր. 39): Ղարձեալ, Պաւղոսի խօսքն է այս. «Եւ համարիմ կղկղանս». Թ. Պաւղ. առ Փիլիպ, գլ. Գ, համ. 8):

§ 15. Բնագիրը. «Լսն եղեալ որդի», (եր. 40): Մենք թէ և թարգմանեցինք բառ առ բառ, բայց յայտնումենք այս տեղ, որ միտքը չենք հասկանում պարզապէս. ուստի և բնագիրը պահեցինք, գուցէ կարգացողը մեզանից աւելի հասկանայ:

§ 16. Կորնթացոց հետ էր Պաւղոսի բանը, որի վրայ ակնարկումէ Փարպեցին: «Աւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում անդամութեանս... մի՛ որ համարեցի զիս անզգամ. ապա թէ ոչ, գոնէ իբրև զանզգամ ընկալարուք զիս»: Թ. Պաւղ. առ Կորնթ. երկր. գլ. ԺԿ, համ. 1 և 16:

§ 17. Բնագիրը. «Չկեալ զիմ ՚ի տղայութեանն զայն Տէր իսկ ինքնին քաջ գիտէ», (եր. 40). և մի փոքր սորանից յետոյ. «Լըդ զառաջին կելոյն իմոյ զվարս՝ Տէր Ներսէհ և Լըատ Կամսարական գիտեն»: Եյս խօսքերը յիշեցնումեն մեզ Պաւղոսի Լգգրիպասին տուած պատասխանը. «կենաց իմոց որ ՚ի մանկութենէ ՚ի սկզբանէ լեալ յազգի անդ իմում յԵրուսաղէմ, տեղեակ են» և այլն. Գործք Լաւք. գլ. ԻԶ, համ. 4:

հրատարակել էր այս մասին մի գրուածք: Երանելի Գեորգ կաթողիկոսը տեսնելով այս նշովքով դատապարտեց թէ գրուածքը եւ թէ նորա հեղինակը, ցոյց տալով, եթէ որքան սխալական եւ մեղանշական է այդ խոսքացոյց ժողովի սահմանադրութիւնը, դու ասա, Լեւոնի տուածքը:

Երանելի Մաշտոցը անախտակիր ոգով քննելով այս բաները զղջացաւ իր գործի վերայ եւ իր կարծիքով գրուածքը իսկոյն պատասխանելով ապաշխարեց եւ մեղայ դուցեց: Սմբատ թագաւորի եղբայր Լըբասը, իր եղբոր թագաւորութեան մասին թշնամացած լինելով երջանիկ Գեորգ կաթողիկոսի հետ եւ դաւաճանութիւն հնարելով նորա ընդդէմ, երբ նամակ էր գրել Մաշտոցին, որ նա եւս միանայ իր հետ ընդդէմ կաթողիկոսին, իր ծանծաղամտութեամբ կամենալով զրոգել Մաշտոցի վրէժխնդրութիւնը, յիշեցնումէր նորան կաթողիկոսի նշովքը: Եհա Մաշտոցի խօսքերը. «բայց իմ նշովք դատապարտութեան յաւետ յիբաւի եւ արժանի էր. եւ զի վրէպեցայ եւ ըստ արտուղի անկեալ ինքնահրաման բարձի զխտոց սուրբ Հարցն, որ ՚ի մէջ մեր եւ ՚ի Քաղկեդոնականացն, վասն որոյ աղօթահայց ապաշխարութեամբ եւ առաջի անկմամբ պատաստեցի նովին սուրբ ձեռօք զձեռնադրեալան յինէն կարծեօք». (Յովհ. կաթ. եր. 83): Եյս խօսքերից յետոյ Մաշտոցը քաղկեդոնիս էր ասողը, պարզապէս հայհոյումէ անկաշառ ճշմարտութեան սրբութիւնը: Եյսչափ:

§ 18. Եյս տեղ բնագրում այսպէս է ասած. «Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ՚ի Հոռոմս». (Եր. 40): Այլ թսուեն երկրորդ երեսում, Փարպեցին, խօսելով իր սուրբ Գրոց տեղեկութեան մասին, ասումէ դարձեալ. «Իսկ մեր երանելի վարդապետքն, զամենայն զկտակարանս եկեղեցւոյ երիցս և չորիցս ուսուցեալ մեզ», և այլն: Արոնց վրայ են այս ակնարկութիւնքը և վարդապետներ ասելով որոնց է ուզում մեզ հասկացնել. մենք յանձնառու չենք դրական պատասխան տալ այս բանին:

Եւ հասարակ, տարածված կարծիք է, թէ Փարպեցին, թէ և համարվումէ, կամ իր Պատմութեան մէջ ինքն էլ ասումէ իր համար. «աշակերտ Եղանայ Երծրունոյ», բայց և այնպէս, որպէս թէ աշակերտված է նաև մեր Մեծ Թարգմանչաց—Սուրբ Սահակին և Սուրբ Մեսրոպին:

Թափ տանք մի փոքր այս կարծիքը, որ, գոնէ հինգ հարիւր տարի է, ամեն հեղինակ իր նախորդներից փոխ առնելով կրկնումէ:

Կիրակոս Գանձակեցին խօսելով Մեծ Թարգմանչաց վրայ այսպէս է շարունակում. «Արոց վարդապետք և ուսուցիչք Սուրբն Սահակ և Մեսրոպ, և զխաւորք յաշակերտացն Սուրբ Յովսէփ և Յովհանն և Ղ. Լոնդ. և Սահակ և Մովսէս քերթողահայր և Մամբրէ վերծանող նորուն եղբայր, Եզնակ և Կորիւն, Սուրբն Եղեշէ, Գաւրիթ փիլիսոփայ և Յովհաննէս, տէր Եբրահամ, Երձան, Մուշէ, Խոսրով, Ղազար և յետոյ Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս», և այլն. (Եր. 17):

Եյս տեղ տեսնումենք մի Ղազարի անուն, բայց չենք կարող ասել թէ Կիրակոսը Փարպեցուն է հասկանում Ղազար ասելով: Ստոյգ է, Կիրակոսը իր յառաջաբանի մէջ, (Եր. գ.) խօսելով հայ պատմիչների վրայ, տալիս է Ղազար Փարպեցու անունը, ճարտասան կոչելով նորան. բայց այն տեղ, Փարպեցին երևումէ ոչ որպէս աշակերտ Մեծ Թարգմանչաց, այլ որպէս պատմիչ և սորանով չէ փարատվում մութը աշակերտների կարգում յիշված Ղազարի վրայից, որովհետև նա կարող էր մի այլ Ղազար եղած լինել քան թէ Փարպեցին, ինչպէս և կար էլ մի ուրիշ մարդ Ղազարիկ կոչված, որ ամեն իրաւունքով զգուշացնումէ շ. Մ. Չամչեանը չչփոթել Փարպեցու հետ:

Մեզ թվումէ թէ Փարպեցին Մեծ Թարգմանչաց աշակերտ կարծողքը օգնութիւն չեն ստանում Կիրակոսից:

Փոխանակ դորա, Ալարդան պատմիչը, որ ժամանակակից և աշակերտակից է Կիրակոսին, որովհետև երկուքն էլ Անական վարդապետի աշակերտքն են, իր գրքի 51-րդ երեսում, ոչ միայն Մեծ Թարգմանչաց աշակերտ է ասում Փարպեցուն, այլ ուրիշների հետ նորա անունն էլ տալով և պատմագիր անուանելով շարունակումէ. «Սուրբ հանդերձ (այսինքն աշակերտներով, որ մենք չենք յիշում այս տեղ) Թարգմանեցին (Մեծ Թարգմանիչքը) զամենայն մատեանս ՚ի ստոյգ օրինակաց»:

Եստուածաշնչի Թարգմանութեան մասին է խօսում, և որովհետև ասումէ ՚ի ստոյգ օրինակաց, ուրեմն, երկրորդ Թարգմանութեան մասին: Եյս խօսքերին նայելով Փարպեցին 433 թուականներին գործակից է Ս. Գրքի Թարգմանութեան, ուրեմն, այդ թուականներում ոչ միայն աշակերտված պրծած է նա Մեծ Թարգմանչաց այլ և Յունաստանից էլ վերադարձած, որովհետև Թարգմանութեան գործակից լինելու համար պէտք էր որ նա Յունարէն իմանար, և գիտներ, որ նա այդ լեզուն ուսաւ Յունաստան:

Յայտնի է թէ այս շատ աջողակ վկայութիւն է և մեծ օգնութիւն այն մարդուն, որ անպատճառ ուզումէ, որ Փարպեցին Մեծ Թարգմանչաց աշակերտ եղած լինէր: Բայց պէտք չէ մոռնալ, որ Խորենացին, Կորիւնը և ինքը Փարպեցին, խօսելով Եստուածաշնչի Թարգմանութեան մասին և երբեմն էլ գործակից աշակերտաց անունը տալով, չեն յիշում Փարպեցու անունը:

Շ. Միք. Չամչեանը Փարպեցու ժամանակի վերաբերութեամբ շատ շիտթ հասկացողութիւն ունի: Երբեմն ասումէ թէ Փարպեցին ականատես է Առամշապուհ թագաւորին (Հատ. Ե. եր. 754) որ ինչպէս յայտնի է և ինքը Չամչեանն էլ վկայումէ վախճանեցաւ 421 թուին. ուրեմն Փարպեցին ծնած էր այդ թւից առաջ եթէ Առամշապուհին ականատես էր: Երբեմն ասումէ թէ Փարպեցին ականատես է Մեծ Թարգմանչաց և յետոյ թէ. «Սա թէպէտ և չէր յատուկ աշակերտ Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ, բայց տեսեալ էր զնոսա և ՚ի տղայութեան ուսեալ էր ինչ ինչ ՚ի դպրատան նոցա, և յետ մահու նոցին աշակերտեալ եղև երանելոյն Եղանայ»: (Հատ. Ե. եր. 540): Մէկը հարցնէ, թէ ո՞վ վարդապետ, ո՞վ է վիզգ չաթու ձգել, որ առաջ Առամշապուհին ականատես ասես, յետոյ Մեծ Թարգմանչաց աշակերտ և վերջը այսպիսի բացադուրթեամբ խօսք յետ առնուս: Բայց մենք չենք

մեղադրում Չամչեանին. նա էլ իր նախորդների նման մի վարդա-
դապետ. Հայոց պատմութիւնն էլ շատերի աչքում մի առասպել,
և ոչ գիտութիւն եւրոպական հասկացողութեամբ, ուստի ինչ որ
մարդու մտքը գալիս է կարելի է ասել, էլ ոչ քննութիւն և ոչ
ապացոյց: Մենք ոչ միայն չենք մեղադրում Չամչեանին, այլ ու-
րախ ենք, որ նա, շատ անգամ կարդացած լինելով Արդան վար-
դապետի գիրքը, չէ կամեցել կրկնել նորա ասածները:

Մտքա են այս բոպէիս մեր ձեռքում եղած գրքերը, որոնց մէջ
խօսք կար Փարպեցու աշակերտութեան մասին: Ար հաւատանք, եթէ
ասնն մեզ, թէ մի քանի ուրիշ հեղինակներ նոյնպէս խօսումն այդ
բանը. մանաւանդ, որ մեր ժամանակագիրքը ինքնուրոյնաբար գրու-
մեն միայն այն բանը որ եղել է իրենց օրով, կամ մտ է իրենց
ժամանակին, իսկ հին բաները, թէ և շատերը նոցանից Աղամից
են սկսում, այնու ամենայնիւ առանց քննութեան, առանց դատաս-
տանի փոխ են առնում իրենց նախորդներից, թէ և այո, երբեմն այ-
լայլելով իրենցից առաջ գրողների ասածը:

Ի այց այն բոլոր կարծիքները, որ վերեւը մէջ բերինք, և ընթեր-
ցողը կարդաց, կամ, եթէ սոցանից շատ առաջ ապրած հեղինակների
գործերում էլ լինին սոցա նմանքը, մենք միահամուռ մերժումենք:

Ղալար Փարպեցին ոչ գործակից է եղել Ս. Գրքի թարգմա-
նութեան, ոչ աշակերտ է եղել Մեծ թարգմանչաց, ոչ ուսել է
նոցա դպրոցում «ինչ ինչ ՚ի տղայութեան» և կարող ենք աւելցնել,
թէ և ոչ իսկ տեսել է նորանց:

Մինչև Փարպեցու թղթի յայտնվելը ներելի էր տակաւին կըրկ-
նել թէ և անհիմն բայց հնացած կարծիքը. իսկ Փարպեցու թղթի
յայտնված օրից այդ կարծիքների գինը կոտրեցաւ: Եւ այսուհետև
ոչ միայն արժէք չունին այլ բնաւ ներելի չէ կրկնել:

Ի այց սակայն պ. Լյմինը, իր յառաջաբանի մէջ այսպէս է խօ-
սում. «Գնացեալ աշակերտեցաւ Ղալար առ ոտս Աղանայ, որ և
քեռի գորով Ահասանայ Մամիկոնենի ընկալաւ զպատանին զխաղա-
կիցն ազգակցին իւրոյ սիրով և ոչ զլացաւ ՚ի նմանէ զուսաբեր զիւր
վարդապետութիւն, զատուցանելով զնա ՚ի ծառայութենէ աշխարհիս
պարեգօտիւք: Օղին յերկար մի դեգերելոյ յուսումն սրբազան տա-
ռից առ ոտս սրբակրօն առնս ըստ հրամանի նորին և վարդա-
պետացն իւրոց Սահակայ և Մեսրովպայ գնաց ՚ի Հոռոմս» և այլն
(եր. 20):

Աւելի քան թէ զարմանումենք, որ պ. Լյմինը Փարպեցու թուղ-
թը իր ձեռքում ունենալով, և մանաւանդ այդ թղթի հետ միասին,
տպումէ այս խօսքերը: Մենք զարմանումենք, ոչ թէ պ. Լյմինի
առ հասարակ ձևի վրայ որով խօսումէ և պատմումէ մեզ, որ Աղա-
նը Ահասանին քեռի լինելով ընդունել է սիրով նորա խաղակիցը
և այլն և այլն, որ մեզ պարսպ ժամերի արդիւնք է երևում, որով-
հետև հիմք չկայ, այլ զարմանումենք որ Պարոնը ասումէ թէ Փար-
պեցին (Աշուշայի տանից դուրս եկած) աշակերտվեցաւ Աղանին և
«ղինի յերկար մի դեգերելոյ յուսումն սրբազան տարից առ
ոտս սրբակրօն առնս ըստ հրամանի նորին և վարդապետա-
ցըն իւրոց Սահակայ և Մեսրովպայ գնաց ՚ի Հոռոմս»:

Սուրբ Արդանանց Աւարայրի պատերազմը եղաւ 451 թուա-
կանի դարնան. Չիք Ասսակը 450 ի աշնանը բռնոտեց, որպէս
Համայեակ Մամիկոնեանի երեք որդիքը ¹⁾ նոյնպէս և միւս նախա-
րարաց զաւակները, որ յետոյ ուղարկեց Պարսկաստան:

«Իսկ յամին եօթն և տասներորդի Հազկերտի արքայի (455 թիւ),

1) Այլ առակ ըւարուք. «Իսկ զինի վճարման սուրբ նահատակացն մեր, շարն Աս-
սակ՝ զկին և զերեսին որդիս Համայեակ ՚ի Գոռն տանէր: Աւարան Պատմ. եր. 56:
Մենք չենք ընդունում Համայեակի կնոջ Չուիկի դերութիւնը. այս մասին Աւարանի վը-
կայութիւնը բնաւ արժէք չունի մեր աչքում: Գուցէ, եթէ Փարպեցու պատմութիւնը
չլինէր և թուղթն էլ չյայտնվէր, ընդունելիք Աւարանի խօսքը. բայց քանի որ Հը-
մայեակի կնոջ—Չուիկի—անուցած հոյակապ Փարպեցին ասումէ թէ չիք Ասսակը ու-
րիշ նախարարաց որոց հետ—որոց, բնաւ և ոչ մի կնոջ անուն չկայ—ըտնից և
Համայեակի երեք որդիքը և Գուռը տարաւ, երբ Աշուշան Պարսկաստանից յետ բերե-
լով նորանց յանձնումէ նոցա մօրը Չուիկին, մենք չենք ընդունում Աւարանի խօսքը:
Փարպեցու թղթից իմանումենք նորա յարաբերութիւնը Չուիկի հետ. այն տեղից
մենք տեսնումենք, որ այս երանելի տիկինը մայր է եղել մեր հոյակապ վարդապե-
տին, Փարպեցու Պատմութեան մէջ կարգումենք այդ օրհնեալ տիկնոջ զովասանու-
թիւնը և այն տեղ, ուր խօսում է Գոռում կապված նախարարների Հայաստան մնա-
ցած կանանց վրայ, Փարպեցին առիթ չէ բաց թողում որ կարելի եղածի չափ ման-
րամասն չլսամք: Մամիկոնեանց դերդաստանին վերաբերեալ մի նշանաւոր անցք, ինչ-
պէս կարելի է, որ Փարպեցին ըւր Չուիկի դերութիւնը: Մենք չենք կարող այս
թղթը տալ, երբ նա չէ ծածկում մեզանից Ներսէս և Հրահատ Կամսարականների
կանանց դերութիւնը, Մեծ Ահասանի պատերազմերի ժամանակ Պերոզի օրով: Չենք
կարող թղթը տալ, որովհետև, եթէ Չուիկը տարված լինէր Պարսից Գուռը անհնար
է թէ նորա պէս ժրագլուխ կինը հանդէս չունենար այն անցքերի մէջ որ կապված
նախարարների և Ս. Ղեւոնդեանց մասին խօսելով պատմումեն մեզ և Փարպեցին
և Եղիշին, առանց Չուիկի կամ որ և էիցէ կնոջ անուն յիշելու: Չենք կարող թղթը
տալ որովհետև Փարպեցու Պատմութեան և թղթի մէջ փոքր այլապէս պիտի խօս-
վէին, եթէ Չուիկը լինէր երբ և էիցէ բռնված:

ելիանն Վրաց Աշուշայ աղաչէր զաւագս դրանն արքունի, բազում և անհամար կարասի ծախեալ իւրաքանչիւր ումէք. և մանաւանդ անօրէն հազարապետին Միհրնբրէհի, զոր մեծաւ ջանիւ և սաստիկ աշխատութեամբ հաւանեցուցեալ տայր ասել ց[թագաւորն] Յազկերտ զի շնորհեսցեն նմա զօրդիս երանելոյ նահատակին և մայրակայ ՚ի տոհմէն Մամիկոնէից, զորս առեալ էր նենգաւոր իշխանին Սիւնեսց Վասակայ ՚ի դայեկաց, որպէս զօրդիս մահապարտաց և տարեալ ՚ի Ղուռն զի մեռցցին, որք էին յոյժ տղայք»։ (Փարպ. Պատմ. եր. 185)։

Ղաննք թէ նոյն 455 թուականին, երբ Վահանը յետ եկաւ Պարսկաստանից իր երկու եղբարց հետ, նորա մայրը Չուիկը տարաւ նորան Աշուշայի տունը, ուր ուսում էին տալիս Փարպեցուն, զննք թէ այդ թուականից սննդակից և խաղակից դարձաւ Փարպեցին Վահանին, զննք թէ Փարպեցին «ըստ տիոց աւագադոյն էր քան զՎահան», բայց և այնպէս պիտի ընդունենք, որ Փարպեցին, 455 թուականին խաղացող պատանի է։

Մենք չգիտենք, թէ որքան ժամանակ տեսց Փարպեցու Վահանի սննդակցութիւնը և խաղակցութիւնը, բայց և այնպէս պ. Լյմինը ընդունում որ Փարպեցին աշակերտուել է Աղանին այս բանից յետոյ, որովհետև ասում է թէ Աղանը ընդունեց նորան որպէս իր ազգակցի խաղակից։

Մենք չգիտենք, թէ որքան ժամանակ մնաց Փարպեցին Աղանին աշակերտ և երբ գնաց Յունաստան, բայց պ. Լյմինը ընդունում է, որ եղել այս «զգնի յերկար մի դեգերելոյ յուսումն սրբազան տառից» Աղանի մօտ։ Մենք այսքանը գիտենք, որ Փարպեցին «անդստին ՚ի մանկական տիոցն սկիզբն արարեալ բանական գիտութեան՝ Յունաց յաշխարհն ճանապարհօրդէր»։ (Թղթի յառաջաբ. եր. 36)։ Մենք այսքանը գիտենք, որ Փարպեցին տղայութեան ժամանակ բնակակից էր եղել Վահանին, որովհետև վկայ է բըռնում սորան իր տղայութեան ժամանակ վարած կեանքին. «Օկեալ զիմ ՚ի տղայութեանն՝ զայն Տէր իսկ ինքնին քաջ գիտէ»։ (Թուղթ, եր. 40)։ Մենք այսքանը գիտենք, որ Փարպեցին ստոյգ և սուրբ հաւատը ուսել է Աղանից տղայութեան ժամանակ. «սուրբ և ստոյգ հաւատ, զոր ուսեալ ՚ի տղայութեանն յերանելոյ Աղանայ՝ կեամ նովիմք ՚ի նմին անփոփոխութեամբ մինչև ՚ի վախճան կենցաղոյս իմոյ»։ (Թուղթ, եր. 65)։

Մենք այսքանը գիտենք, որ Աղանը կրօնաւորուելուց և Ղուղթն դաւառում Ս. Մեսրոպի կացած վանքում մնալուց յետոյ գնացել է Յունաստան (նորա հայրն էլ և հօրեղբարքն էլ գնացին Վարդանանց պատերազմից անմիջապէս յետոյ, գուցէ Աղանն էլ նոցա հետ) և Յունաստանից վերադարձել է 457-ից յետոյ, որովհետև թուովմա Արծրունին (եր. 91) խօսելով նորա հօր և հօրեղբարց մասին ասում է. «կացեալ անդ մինչ ՚ի ժամանակս Առաջինն Աւոնի կայսեր, մեռանի անդ Վասակ և Տաճատ... իսկ երանելոյն Աղանայ Արծրունոյ որդոյ Վասակայ դարձեալ ՚ի Յունաց աշխարհէն եկն յերկիրս և այոց, նովին կրօնաւորական խտամբերութեամբ և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ» և այլն։ Աւոն առաջին կայսրն թագաւորեց 457-ին։ Աղանի հայրը մեռաւ Աւոնի օրով։ Աղանը և այսպէս վերադարձաւ հօր մահից յետոյ ուրեմն անտարակոյս 457 թուականից յետոյ։

Մենք այսքանը գիտենք, որ և այոց Մեծ լուսաւորիչ Ս. Սահակը կնքեց իր մահկանացու կեանքը 439-ի սեպտեմբերի 9-ին։ Ս. Մեսրոպը, նորանից վեց ամիս յետոյ, այսինքն 440-ի փետրվարի 19-ին։ Ուստի 455-ին, երբ Մեծ Վահանը վերադարձաւ Պարսկաստանից և Աշուշայի տանը սննդակից և խաղակից եղաւ Փարպեցու հետ, եթէ այդ թուականին նաև քսան տարեկան պատանի ճանաչենք Փարպեցուն, որ չէ կարելի թոյլ տալ բնաւ, այնու ամենայնիւ Մեծ թարգմանչաց վախճանելու թուականներում Փարպեցին աւելի չէ լինում քան թէ հինգ վեց տարեկան տղայ։ Բայց այդ թուականներում չկար նա անգամ և այդքան. քսան տարեկան տղայ չէր կարող եղած լինել նա երբ խաղակից էր Վահանին Աշուշայի տանը։ 446 թուականներում Փարպեցին կամ նոր էր ծնած կամ շատ շատ երկու երեք տարեկան և այս կերպով 455-ին, 17—18 տարեկան։

Այսպէս լինելով բանը, ուր կը մնայ Վարդանի ասելը թէ Փարպեցին գործակից է եղել Մեծ թարգմանչաց Աստուածաշունչը երկրորդ անգամ թարգմանելիս, որ ինչպէս յայտնի է Ափեսոսի Ս. Դողովից յետոյ եղաւ 433 թուականին, ուր կմնայ Փարպեցուն նոցա աշակերտ եղած լինելը, կամ Չամչեանի թէ Վասակայուհին ականատես էր, Մեծ թարգմանչաց տեսել էր և տղայութեան ժամանակ մի քանի բան նոցա դպրոցում ուսել էր ասելը. ուր կը մնայ պ. Լյմինի կարծիքը թէ Փարպեցին Սուրբ Սահակի և Սուրբ Մես-

րոպի—իր վարդապետների հրամանով—գնաց Յունաստան: Փարպեցին 455-ին խաղացող պատանի է Մշուշայի տանը, Մեծ Թարգմանիչքը այդ միջոցին արդէն 15—16 տարի է որ վախճանել են, բայց պ. Լյմինը այս չափով էլ գոհ չլինելով և Փարպեցուն 457 թուսկանից յետոյ մի քանի տարի էլ Մշուշին աշակերտութիւն արած ընդունելով, յետոյ Յունաստան է ուղարկում նորան Մեծ Թարգմանչաց հրամանով:

Մեզ թվումէ, թէ Մեծ Թարգմանչաց անդրաշիրմեան հրամանը լոկ երեւակայութեան արդիւնք է նոր ժամանակների, որ, հինգերորդ դարում, երեւակայութեան մէջ էլ տեղ չունէր:

Բայց եթէ այս ամենը մոռնալով, միայն այս անունը, որ ինքը Փարպեցին ամեն ուրիշից լաւ կարող էր իմանալ, թէ ո՛ւմ աշակերտ է ինքը, ապա ուրեմն առանց այլ և այլի պիտի ստենք, որ այդ առաքինի մարդը աշակերտ է եղել Մշուշին և ոչ Մեծ Թարգմանչաց: Փարպեցին թէ Պատմութեան և թէ Թղթին մէջ պարզապէս ասումէ, թէ ինքը աշակերտ է երանելի Մշուշին, թէ սա է եղել Ղաղարի աղատութեան պատճառը, թէ իր տղայութեան ժամանակ Մշուշից է ուսել Սուրբ հաւատը, թէ Մշուշն է նորան պարեգօտ հագցրել: Փարպեցին եթէ նաև մի ամիս լինէր աշակերտված Մեծ Թարգմանչաց, ապա անշուշտ և պարծանքով կը յիշէր այն սուրբերի և մի ամսվայ երախտիքը, մանաւանդ մենք տեսնումենք թէ ինչ որդիական և արժանի յարգութեամբ է խօսում նա Մեծ Թարգմանչաց մասին:

Մեզ թվումէ թէ Փարպեցու թղթում յիշված վարդապետքը են Մեծ Թարգմանչաց աշակերտներից, որ այն միջոցին բնաւ պակաս չէին և «ղմի միով ելեւելս առնէին» ինչպէս ասումէ Փարպեցին իր Պատմութեան մէջ: Մեզ թվումէ թէ Մշուշը թէև եղել է Փարպեցու դաստիարակութեան գլխաւոր ուղղիչը այնու ամենայնիւ Փարպեցին ունեցել է նորա ձեռքի տակ թերևս և ուրիշ ուսուցիչք, երբ յոքնականապէս վարումէ վարդապետ խօսքը, և եթէ մենք էլ յոքնականապէս պիտի հասկանանք: Եւս վերջին խօսքերը ասումենք այն պատճառով որ Փարպեցու ասած «առ ՚ի բժշկութիւն վերաւորաց փութա՛ հաս յօգնել» բանի մէջ (եր. 53) վերաւորացը վերաւորիս պիտի կարգանք, որովհետև միայն Փարպեցու գլխին էր եկել փութորիկը և նա էր վերաւորը:

Բաց ի սոցանից, մենք չգիտենք, թէ ո՛վքեր էին նորան ուսում

տալիս Մշուշայի տանը. և հարկ է թէ կային ուսուցիչք, երբ ասումէ «յորում գրան և զմեզ ուսուցանէին», (եր. 41):

Չխարզ և իցէ այս է ճշմարիտը, որ Փարպեցին Մեծ Թարգմանչաց ոչ աշակերտ է եղել և ոչ նոցա հրամանով Յունաստան գնացել. թող այսուհետև ո՛վ ինչ կամի խօսի:

§ 19. Եւս կամարականները Վահանի հօրեղբօր, այսինքն, Մեծ Վարդանի թոռներն էին: Յայտնի է թէ Մեծ Վահանը Մեծ Վարդանի եղբօր երանելի շմայելի որդին է, իսկ Մեծ Վարդանը իր կրտսեր գուտորը, որի անունը Վարդ-Մնոյշ էր, ամուսնացուցած էր Մշարունեաց տիրոջ Մշուշի կամարականի հետ, որոնցից ծնեցան Մերսէհ, շրահատ և Վահան կամարականները: Եւ ինչպէս սոցա հայրը—երանելի Մշուշի—մինչև իր մահը հաւատարիմ մնաց թէ Ս. Վարդանին, որ ինչպէս ասացինք իր աներն էր, թէ զոգին և թէ սուրբ ուխտին, այնպէս էլ նորա որդիքը մինչև վերջը հաւատարիմ մնացին Մեծ Վահանին և եղան նորա թեւը և թիկունքը: Փարպեցին սոցա մօտ է կեցել այն բոլոր խոսվութեանց և պատերազմի ժամանակները, որ Պերոզի ընդդէմ մղումէր Վահանը և որին մեծապէս գործակից էին կամարականքը:

§ 20. Վահանի նուաճումը, այսինքն նորա հաշտութիւնը Պարսից տէրութեան հետ, եղաւ 484 թւին, երբ Պերոզի տեղը նստաւ Վաղարշ թագաւորը: Բայց պէտք չէ մոռնալ, որ Մեծ Վահանը ցած չգրեց զէնքը, մինչև որ յարգել տուեց Պարսից տէրութեան, թէ շայոց զոգի և՛ թէ նորա եկեղեցու իրաւունքները: Եւս հաշտութեան մանրամասն նկարագրութիւնը կարելի է տեսնել Փարպեցու սոցոգ Պատմութեան մէջ 279-դ երեսից սկսած մինչև 306-դ երեսը:

§ 21. Բնագրում այսպէս է ասած. «Եւ երթեալ ՚ի Սիւնիս կեցի անդ ամս երկուս, զձմեռն ՚ի քարայրի առ առն միում հոչակելոյ ՚ի բնակչաց գաւառին յամենայն կրօնաւորութիւնս, որում անուն էր Սովսէս, և տեղին՝ Լնձուկ, և զաման յաղաքս տօթոյ տեղոյն՝ քահանայապետ աշխարհին՝ տէր Սուշէ, տանէր զիս առ ինքն, ուր և լինէր ՚ի հովու: Երգ՝ զառաջինն կեղոյն իմոյ զվարս՝ տէր Մերսէհ և շրատ կամարական գիտեն զՍիւնեացն յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին»: (եր. 40):

Պ. Լյմինը, տէր Սուշէի վերաբերութեամբ, այսպէս է ծանօթաբանում. «Սուշէ եկաց կաթողիկոս զկնի Սամուէլի ՚ի 502 ամի»:

Չենք ամառում այս տեղ ասել, որ պարզապէս չենք հասկանում այս ծանօթաբանութեան միտքը: Լրդեօք, շայոց կաթողիկոսն է հասկանում պ. Լյմինը քահանայապետ աշխարհին խօսքը, և ուզումէ ասել, թէ Փարպեցու Սիւնեաց աշխարհում մնալը Մուշէ կաթողիկոսի օրով էր, ուրեմն 502 թուականից յետոյ. թէ ուզումէ ասել այս այն Մուշէն է, որ Սամուէլից յետոյ կաթողիկոս նրատաւ 502 թուականին:

Թէպէտև չգիտենք, թէ այս երկուքից ո՞րը կամենումէ հասկացնել պ. Լյմինը, բայց այդ բնաւ արգելք չէ մեզ, որ երկուքն էլ միասին մերժենք, որպէս իսպառ անհիմն բաներ:

Կախ, Փարպեցու յիշած Մուշէ քահանայապետը շայոց կաթողիկոսն չէ, այլ Սիւնեաց եպիսկոպոս, Սիւնեաց հռչակաւոր Ստեփանոս եպիսկոպոսի յաջորդը, որ և նոյնչափ երեւելի և առաւել ևս, Պետրոս եպիսկոպոսի նախորդը, որ քերթող է կոչւում: Փարպեցին պարզապէս անուանումէ Մուշէին Սիւնեաց եպիսկոպոս, երբ «երթեալ ՚ի Սիւնիս կեցի» ասելուց յետոյ, նոյն երկրի վերաբերութեամբ աւելցնումէ «քահանայապետ աշխարհին» խօսքը, որով, յատկացնելով նորան Սիւնեաց երկրին, պարզացնումէ բանը և էլ պատճառ չէ թողում, որ ո՞վ և իցէ համարէ նորան շայոց կաթողիկոս: Բաց ի սորանից, Փարպեցին վկայ է բռնում Մուշէին, Սիւնեաց երկրում իր ունեցած վարքին ու բարքին. «զառաջնն կելոյն իմոյ զվարս՝ տէր Կերսէհ և շրատ Կամարական գիտեն. զՍիւնեացն՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին». որ ասել է. Յունաստանից վերադառնալուց յետոյ, երբ բոլոր խոտովութեանց և պատերազմերի ժամանակները Կամարականների մօտ էի, այդ միջոցին վարած կեանքիս որպիսութիւնը նոքա գիտեն, կարող էք նոցանից տեղեկանալ: Իսկ երբ պատերազմները վերջացան, և ես, հանգչելու և աղօթքի պարապելու համար, գնացի Սիւնեաց աշխարհը և երկու տարի կեցայ, ձմեռները Մովսիսի մօտ Լնձուկ ասացեալ տեղում, իսկ ամառները Մուշէի մօտ, որ տանումէր ինձ, ուր և ինքը դուրս եկած էր լինում ապահովութեան, այդ միջոցի կեանքիս որպիսութիւնն էլ այս յիշված Սիւնեաց եպիսկոպոսը գիտէ:

Երկրորդ, ինչպէս առաջ էլ ասացինք. (§ 20) Մեծ Սահանը հաշտվեցաւ Պարսից տէրութեան հետ 484 թուականին: Մինչև այս իրողութիւնը, Փարպեցին, ինչպէս ինքը վկայումէ, կեցել է Կամարականների մօտ, և հաշտութիւնից յետոյ գնացել է Սիւ-

նեաց աշխարհը, ուր մնացել է միայն երկու տարի: Փարպեցին գրնացել է այն տեղ նոյն 484-ին, և յետ է եկել 486-ին, որովհետև վերադառնալով Սիւնեաց երկրից, նա տակաւին կենդանի գտաւ Սուրբ Յովհան Մանգակունուն, որ վախճանեցաւ կամ նոյն 486-ի վերջերում կամ 487-ի սկզբում: և որովհետև 484-ին էլ 486-էլ Ս. Յովհան Մանգակունին էր կաթողիկոս ուրեմն Փարպեցուն, ամառները իր մօտ ընդունող տէր Մուշէն չէր կաթողիկոս: Եւ որպէս զև Լորանից կաթողիկոս չհասկանան Մուշէի քահանայապետութիւնը, յայտնումենք, որ 491 թուականի Սաղարշապատի Սուրբ Ժողովում, որի մասին խօսել ենք (§ 6), մենք տեսնումենք Մուշէին որպէս Սիւնեաց եպիսկոպոս, միւս գաւառների եպիսկոպոսների կարգում:

Երրորդ, Սամուէլ կաթողիկոսից յետոյ, 502 թ—նի կաթողիկոս նստող Մուշէն, Երևանի մօտ Կոտայի նահանգից էր, գեղի անունը զանազան ձևով են դնում ժամանակագիրք, ոմանք, Լղբերից, ոմանք, Լյլաբերից և ոմանք, Լյլաբերդից ասելով. իսկ Սիւնեաց աշխարհի Մուշէ եպիսկոպոսի ինչ տեղից լինելը մեզ չէ ասում պատմութիւնը, ինչպէս և չէ ասում, թէ Սամուէլին յաջորդողը Սիւնեաց եպիսկոպոս Մուշէն էր: Փարպեցու բարեկամ Մուշէ եպիսկոպոսը միայն եղած չէ, որ Մուշէ անուն էր կրում, նորանից առաջ էլ յետոյ էլ եղած են Մուշէներ. պատճառ չունինք չընդունելու որ նորա օրով էլ կային:

Պ. Լյմինը, թէ և առանց հիմքի դրել էր այս ծանօթութիւնը, գոնէ պիտի չմոռնար այս և 53-դ երեսում, երբ հարկաւոր էր գրտնել այն կաթողիկոսի անունը, եթէ անպատճառ պիտի կաթողիկոս իմանանք այն մարդը, որից բողոքումէր Փարպեցին, չպիտի զներ դարձեալ Մուշէի անունը. որովհետև անհաշտելի հակասութիւն է դուրս գալիս: Փարպեցին, իր թղթում իր Սիւնեաց աշխարհում ունեցած վարք ու բարքին վկայ է բռնում Մուշէին, ուրեմն նա այն ժամանակ դարձեալ Սիւնեաց առաջնորդ էր և ոչ կաթողիկոս, և առաւել ևս ոչ այն մարդը, որից բողոքումէր Փարպեցին. պատճառ, այն ժամանակ պիտի այլապէս խօսէր թղթում և պիտի ասէր թև այդ մարդը, որ այժմ ինձ անտես արաւ, ինքը գիտէ իմ վարքս ու բարքս, ըստ որում Սիւնեաց աշխարհում եղած ժամանակս ինձ իր մօտ էր պահում ամառները: Թէ ինչ է այդ տեսակ

ծանօթաբանութեանց օգուար, որ պ. Լյմինը անուամբ, մենք բնաւ չենք հասկանում:

§ 22. Բնագրում գրած է շրատ, պ. Լյմինը ծանօթաբանուամբ. «Շրատ համ շրատ, որպէս գրէ կրճատելով Ղազար»: (եր. 40):

Ինչպէս երևում, պ. Լյմինը բնաւ հաշուի մէջ չէ դնում այդ թուղթը օրինակող գրագիրների սխալանքը և դարերի ծանրութիւնը, որոնց տակ ճնշվել է այդ թուղթը. պատճառ, իբրև իրողութիւն ուղղուած մեղ հաւատացնել, թէ այդ կրճատութիւնը եղած է բուն Ղազար Փարպեցու ձեռքով: Մեղ թվումէ թէ պ. Լյմինը բնաւ ապացոյց չունի. թղթի օրինակը, որ տպել է, ապացոյց չէ, որովհետև այն տեղ կան և ուրիշ սխալներ և ուրիշ աղճատանք, որ չէր կարող Փարպեցին անել: Եւ թէ այդ աղճատանքը եղել է կամ անհմուտ գրիչների և կամ ժամանակի ձեռքով, որ անմերժելի է, ինչն չէ կարելի ասել որ այդ կերպով և շրատը դարձել է շրատ:

Ինչ որ մեղ է վերաբերվում մենք այս վերջին կարծիքն ունինք այդ կրճատութեան մասին և չենք կարողանում ասել թէ ինքը Փարպեցին է կրճատել, և սոքա են մեր պատճառները:

Նախ, Ղազար Փարպեցին, իր Պատմութեան մէջ, միշտ շրատ հատ է անուանում Ըրշաւի Կամարականի երկրորդ որդուն և ոչ մէկ անգամ շրատ:

Երկրորդ, Փարպեցին քաջ ճանաչելով Կամարականների յարգը, շատ անգամ վայելած լինելով նոցա մարդասիրութիւնը, չէր կարող այն աստիճանի ծոյլ լինել, չասենք անքաղաքավարի, որ Մարզպանին գրած թղթում, նորա ազգականի և իր բարեկամի և երևելի մարդու անունը կրճատէր: Ըյդ բանը իսպառ ընդդէմ է Փարպեցու բնաւորութեան, որ Խուժիկին ծանրանումէ Խուժիկ կոչել, որովհետև այդ մարդը հոգաբարձու էր եղել Ս. Ղևոնդեանց մարմինները ձեռք բերելու. Փարպեցին նեղանում, որ ոչ ոք հոգ չէ տարել Խուժիկի անունը իմանալու, որ ինքը նորա անունը գրէր և ոչ Խուժիկ, որ անարդական անուն էր այն մարդու ազգի վերաբերութեամբ (Տես Փարպ. Պատմ. եր. 180): Թէ առհասարակ ո՞ր աստիճանի յարգութեամբ և քաղաքավարութեամբ է խօսում Փարպեցին Մարզպանին հետ և Կամարականների մասին, այդ ինքը կարգացողը կարող է տեսնել առանց մեր ասելու:

Երրորդ, մեր բոլոր պատմութեան մէջ, որքան մեղ յայտնի է չէ եղել երբէք մի մարդ որ շրատ անուն ունենար, և մենք մանաւանդ կարծումենք, թէ Փարպեցին չէր կարող իր բարեկամի անունը այնպէս կրճատել և մի այնպիսի անուն շինել, որ բնաւ չէր եղած շայերի մէջ:

Եւ այց պ. Լյմինը պնդում, թէ Փարպեցին է կրճատել այդ անունը, որովհետև չէ հերիքացել այս ծանօթութեամբ, այլ իր յառաջաբանի մէջ (եր. 21) կրկին անգամ ծանօթաբանում այս մասին. «Օ անուն յեանոյս Ղազար ՚ի թղթի իւրում կրճատելով շրատ կոչէ»:

Թող ներէ մեղ պ. Լյմինը ասել, թէ որպէս միշտ և հանապազ, նոյնպէս, և մանաւանդ 1500 տարի առաջ պատահած պատմական անցքերի նաև մի ամենաչնչին հանգամանքի վրայ ոչ ոք իրաւունք ունի առանց ապացուցի բերան բանալ: Մեր դատապարտածը շրատ անունը չէ, այլ այն ուղղութիւնը, որ ապացոյց չունեցող ենթադրութիւնը դնումէ աշխարհի առջև, որպէս աներկբայելի իրողութիւն: Եղճատված ձեռագրի մէջ շրատ տեսնելը բնաւ իրաւունք չէ տալիս մեղ հաստատողպէս ասել, թէ ինքը Փարպեցին է կրճատել: Մեղ թվումէ թէ այս տեսակ եղբակացութիւնքն են մանաւանդ պատճառ եղել մեր պատմական յիշատակարանների մթութեանց, շփոթութեանց և երբեմն բարեւոյնեան խառնակութեան այնպէս, որ մարդ մոլորվում և չէ իմանում թէ ինչ լայ իր գրուելը: Մեղ թվումէ թէ այն մարդը, որ հանդէս է գալիս այսօր պատմութեան այս կամ այն մթութիւնը բացատրելու, յիշատակարանների այս կամ այն խօսքը մեկնելու կամ լուսաբանելու, պարտական է հերքել և մերժել խնամով այն բոլորը ինչ որ հիմք չունի, և մաքուր խղճմտանքով ներգործելով, ոչ բնաւ ներել իրեն դորա փոխանակ, իր կամամտածական կարծիքներն էլ արդէն եղածների վրայ աւելցնել:

§ 23. շար չկայ իմանալու, թէ ովք' որդի էր Ղազար Փարպեցին: Պ. Լյմինը իր յառաջաբանի մէջ (եր. 18) այսպէս է խօսում: «Թէև այնպէս է մեղ անուն ծնողաց նորա, սակայն՝ որպէս երևի, ահանաւորք ոմանք էին և հարուստք»: Պ. Լյմինը երկու բանի վրայ է հիմնում այս կարծիքը. նախ, իբրև ծանօթութիւն կամ վկայութիւն, հարուստ բառի տակ, բերել է Փարպեցու ասածը իր թղթում: «Եւ դու (Ղազան) յայց ելեալ ինդրել զիս և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածէր ՚ի տուն ոչ իբրև զաղբատ

զորք 'ի կազմածէն և 'ի մանկուոյն, և ոչ իբրև օտար զորք 'ի քէն և կամ ծառայ ուրուք»: Երկրորդ, վերը մէջ բերած յառաջաբանի խօսքերից յետոյ պարոնը շարունակուամբ. «քանզի վաղ տեսանեմք զնորահասն Ղազար 'ի տան Բղեշխին Սրաց Եշուշայի, յորոյ 'ի դրան կրթէին զնա յուսումն զպրութեան»:

Մեզ թվումէ թէ այս վկայութիւնքը իրաւունք չեն տալիս մեզ ենթադրել թէ Փարպեցու ծնողքը ականաւորք ոմանք էին և հարուստք: Եւ սորա են մեր պատճառները:

Նախ, Փարպեցու Եշուշայի դոնում երեւելը կարող էր ունենալ խիստ շատ պատճառ, բաց ի նորա ծնողների ականաւոր և հարուստ լինելուց: Պատմութիւնը մեզ չէ ասում, թէ ինչ պատճառով տեսնուեմք Փարպեցուն Եշուշայի դոնում. ուստի և իրաւունք չունինք եզրակացնել այս բանից, թէ երեւելի և հարուստ մարդիկ պիտի եղած լինէին Փարպեցու ծնողքը:

Երկրորդ, Փարպեցին, խօսելով իր մարդու ծառայ չլինելու մասին իսկոյն յարումէ. «քանզի պարեգօտաւորք ազատեալ են 'ի Քրիստոս»: Մեզ թվումէ թէ ոչ անխորհրդաբար ասումէ Փարպեցին այս խօսքը, երբ իր ազատութիւնը հիմնումէ պարեգօտի վերայ. աւելցնելով տակաւին, «իսկ որ զատոյցն զիս պարեգօտիւք 'ի ծառայութեան աշխարհիս և ազատութեան եղև մեզ առ ի թ տէր Եղան քո տեառն քեռի էր»: (Եր. 41):

Երրորդ, որ ասումէ Փարպեցին, թէ ինձ քո տունը տարի որ ոչ որպէս մի աղքատ մարդ և այն, յայտնի է թէ այս խօսքերը չէ կարելի է առնուլ բացառոցաբար նորա ծագման վերաբերութեամբ, այլ մանաւանդ նորա այն ժամանակի վիճակին վերաբերութեամբ, երբ Մեծ Սահանը Սիւնեաց երկրից հրաւիրեց նորան վերադառնալ: Իսկ թէ Սիւնեաց երկրում նա աղքատ մի մարդ չէր, դրան վկայումէ ինքը Փարպեցին երբ վանքից հալածվելու զիպուածով ասումէ. «Բայց բերեալքն իմ յԵղուանից և 'ի Սրաց և 'ի Սիւնեաց և յԵրշարունեաց... մնաց 'ի տեղուջն գրով. և զիս հանին մերկ և թշնամանօք յամենայն արարելոց իմոց, զոր 'ի մանկութենէ արարեալ էի»: (Թճուղթ, Եր. 56): Եւ յայտն լինելով բանը, անտարակոյս, Փարպեցին որպէս մի աղքատ և ողորմութեան կարօտ մարդ չեկաւ վանքը, ուստի և կարող էր իր թղթում ասել, թէ «ածէր 'ի տուն ոչ իբրև զաղքատ զորք 'ի կազմածէն և 'ի մանկուոյն»:

Չորրորդ, Փարպեցու այս խօսքը «և ոչ իբրև օտար զորք 'ի

քէն», յայտնի է թէ ազգակից չէ կարող նշանակել, որովհետև, այն ժամանակ, Սամիկոնեանց տան ծառայքը կամ Եւաքը չպիտի համարձակէին նորա վրայ բանսարկութիւնք անել Սահանին և աչքից հանել: Ոչ օտար ասելով մեզ թվումէ թէ ուզումէ յիշեցնել իր սննդակցութիւնը և խաղակցութիւնը Սահանին և մանաւանդ, երբ մէջ է բերում այն պատճառները, որոնցով ասումէ, թէ ինքը արժանի էր Սահանին չէ յիշում իր ազգակցութիւնը: Եթէ ազգակից լինէր ո՞րչափ ևս առաւել պիտի ասէր» ըստ այդմ մասին քեզ տեսանդ անկ էի»:

Հինգերորդ, թէ Փարպեցու աղքատ չլինելը վերաբերվումէ լոկ նորա անձին, և ոչ նորա ծնողաց, երևումէ նաև նորանից, որ երբ վանքից հալածեցին նորան յափշտակելով բոլոր նորա ունեցածը, այն ժամանակ Ղազարը ստիպվեցաւ բարեպաշտ մարդոց օգնութիւնը ընդունել: Սամիկոնեան Համազասպի համար ասումէ. «բազում անգամ հանդոյց զիս և 'ի հալածման կերակրիչ իմ եղև», (Թճուղթ, Եր. 57):

Բայց սակայն, մենք երբէք չենք ուզում ասել, թէ Փարպեցին ծառայ մարդու, կամ աղքատի զաւակ էր. մեզ յայտնի չէ այդ, որովհետև պատմութիւնը լուս է այդ մասին. միայն, այս է մեր ասածը, թէ պ. Ամինի մէջ բերած պատճառաբանութիւնքը չեն կարող և թոյլ են Փարպեցին ականաւոր և հարուստ մարդերի զաւակ եղած ենթադրելու: Մենք այսքանը գիտենք, ինչպէս առաջ էլ ասացինք, պատմութեան մէջ, որպէս գիտութեան մէջ, անպատշաճ են թեթև եզրակացութիւնք. այսչափ:

§ 24. Բնագրում ասած է. «Տէր Եղան քո Տեառն քեռի էր» (Եր. 41): Եթէ քեռի խօսքը պարզապէս մօրեղբայր հասկանանք, և պիտի այսպէս հասկանալ, որովհետև ուրիշ նշանակութիւն չունի այդ խօսքը, որքան մեզ է յայտնի, ապա ուրեմն Սահանի մայրը— Զուիկը, և Եշուշայի կինը— Ենոյշ-Սրամը քոյրեր են Եղան և Մերհուժանի՝ Երծրունիներին, պատճառ, Եղանի հայրը Սասակ

1) Սյո պատուական Մերհուժանի կամ Մերհուժանի անունը պէտք չէ շիտեւ Երծրունեաց տանից դուրս եկած ուրացող Մերհուժանների հետ: Սյո պատուական Մերհուժան Երծրունին, երանելի Եղանի եղբայրը, ինչպէս պատմումէ Փարպեցին (Պատմ. Եր. 108) ու խառնակ հախարար էր, և Սահանի հօր երանելի Զմայելի և Սմատունի Սահանի հետ միասին, Հայոց նախարարաց թղթով, 450 թուին Յունաստան գնաց Թեոդոս կայսրից Պարսից ընդդէմ օգնութիւն խնդրելու: (Ինչ ապրանք էր այդ կայսրը, Եղիշն ասումէ թէ չքանզի խաղաղասեր էր 'ի Քրիստոս, ոչ կամեցաւ

Արծրունին լինելը, որպէս նաև Մերհուժանի Աղանին եղբայր լինելը տարակոյտի ենթակայ խնդիր չէ: Նախ, ինքը Փարպեցին իր Պատմութեան մէջ (եր. 14) վկայում է թէ Աղանը Ալասակ Արծրունու որդի է, և թէ Մերհուժանը Աղանի եղբայրը (եր. 108): Երկրորդ, արծրունեաց տոհմի պատմաբան Թովմա Արծրունին իր պատմութեան 75, 76, 80 և 91 երեսներում, Աղանի մասին մի քանի տեղեկութիւնք աւելի տալով մեզ, կրկնում է այս բանը գրականապէս: Ուստի եթէ Հիմնվելնք քեռի խօսքի վրայ, և պէտք է Հիմնվել, ուրեմն Չուիկն էլ Անոյշ-Ալամն էլ Ալասակ Արծրունու դստերքն են:

Ն. Մ. Չամչեանը, իր խմբագրի մէջ, որ շայոց Պատմութեան մակագիր ունի, շատ, է, եր. 508, ասում է. «էառ և եղբայրն Ալարգանայ շմայեակ իւր կին զգուստր Ալամայ ուրումն մեծի

ելանել ընդ առաջ պատերազմաւ. այլ այր մի Ենասուլ անուն, որ էր նոր սպարապետ արեւելից, առաքեաց առ նա բազում գանձիւք: Եւ արք Պարսիկք, որ քախուցեալ էին վասն Քրիստոնէութեան եւ էին ՚ի քաղաքին կայսեր, կալաւ եւ ետ ՚ի ձեռն նորա (Յազեկրտի): Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նոցա... Եղիւ. եր. 13—14: Թեև այս բանը շայոց օգնութիւն խնդրելուց առաջ էր):

Իսկ այն չիք Մերհուժաններից առաջինը, որ եւ Մեծ ուրացող Ս. Ներսէս Մեծի ժամանակ, այն է 376 թ—ին ուրացաւ և բրիտանեայ Հայերի արիւնը խմելով հինգ տարի անդադար թուր քաշեց ազգի եւ եկեղեցու ընդդէմ: մինչև վերջին պատերազմում շայոց պարապետ Տոյակապ Սմբատ ասպետը բռնեց նորան եւ կրակի նման տաքբրած կարմիր շամիրը պսակ շինելով և ուրացողի դիմին դնելով տեղն ի տեղը շան սատակ արաւ. (381 թ—ին):

Երկրորդ չիքը, նոյնպէս Մերհուժան Արծրունի, ութերորդ դարում այն է 786 թ—ին Եզիտ ոստիկանի ժամանակ ուրացաւ, որով բոլոր Ասպուրականի իշխանութիւնը ըստացաւ և այս այն ժամանակ, երբ նորա երկու երանելի եղբայրը—Սահակը և Համազասպը—դահճի ձեռքով մորթվեցան նոյն 876 թ—ի, ապրիլի 8-ին, հաստատ և հաւատարիմ մնալով ազգին և եկեղեցուն: Բայց այս Մերհուժանն էլ համ չառաւ իր ուրացութիւնից: Երբ Ասպուրականի իշխանութիւնը առած վերադառնում էր իր երկիրը, Ասակ քաղաքում նստող Մամիկոնեան Գաւթի իշխանը նորա առաջը դուրս դառնալով, Ասպուրականի տեղ դժոխք ուղարկեց, նոյն իսկ հանդիպած տեղում նորա պատանը ձեւելով:

Յաւելի է, որ մի քանի չիքերի պատճառով որպէս Մերհուժան նոյնպէս և Ասա անունը էլ ոչ որ չէ տալիս իր զաւակներին: Պէտք չէ մոռնալ որ այդ անուններով շատ ընտիր և պատուական մարդիկ են եղել, և ազգի և եկեղեցու համար արիւն թափել ուստի մի քանի չիքերի պատճառով այն մարդոց անունն էլ կորցնելը լաւ բան չէ: Մենք սրտանց չնորհակալ ենք մեր հին բարեկամից, որ այս նախապաշարմունքի ընդդէմ իր պատուական որդու անունը գրել է Մերհուժան: Թող նմանի նա Աղանի եղբոր Մերհուժանին:

իշխանի և էր անուն աղջկանն Չուիկ և զքոյր Չուկայ որ կոչելուր Անոյշ-Ալամ, էառ իւր կին բգեշխն Ալրաց Աշուշայ, որ և էր իշխան Գուգարացոց»: Հանգուցեալ վերապատուելին պատմում է այս բանը իր գրքի 57-րդ գլխում, որի լուսանցում կարգում ենք հետեւեալ հեղինակների անունները, որոնց գործերից որպէս թէ քաղել է ամբողջ այդ գլխի բովանդակութիւնը: Եւ սուքա են այդ անունները. Խորենացի, Փարպեցի, Յովհաննէս կաթողիկոս, և Ասողիկ: Բաց ի սոցանից ցոյց է տալիս և Յայսմաւուրքի սեպտեմբ. 9, սորա քամակից հետեւում է և մէկ և այլն: Մեզ թվում է թէ իրաւունք չունինք բանի տեղ չդնել այս և այլն խօսքը, որովհետեւ շատ անգամ Չամչեանի աղբիւրը այդ խօսքն է լինում, որին ոչ տասնաւոր, այլ հարիւրաւոր ապացոյցներ պատրաստ ենք դնել պահանջող տեղեր:

Բանը այն է, որ Խորենացին, Փարպեցին, Յովհ. կաթողիկոսը և Ասողիկը բնաւ չեն յիշում Չուիկի հօր անունը և, բաց ի Փարպեցուց, նաև Չուիկի անունը: Իսկ թէ ինչ աղբիւրից է հանել Չամչեանը թէ Չուիկը Ալամ անունով մի մեծ իշխանի դուստր էր այդ մեզ յայտնի չէ: Ստոյգ է Յայսմաւուրք և և այլն չունինք մեր մօտ, բայց հազիւ թէ դոցա հեղինակութիւնը բան արժէ պատմական խնդիրների մէջ: Եթէ Ն. Չամչեանը Ալամ չասէր այլ մի ուրիշ անուն, ապա, Հիմնվելով Փարպեցու քեռի խօսքի վրայ առանց երկարաբանութեան կ'անցնէինք և բնաւ իսկ ուշ չդնելով այդ անունին, սակայն Ալամ անունը ստիպում է մեզ մի փոքր մտածել, որովհետեւ Աշուշայի կնոջ անունը Անոյշ-Ալամ է. և յայտնի է թէ աղջիկները երբեմն կոչվում էին իրենց հօր անունով, Անոյշ-Ալամը աւելցնելով այդ անունի սկզբում կամ վերջում:

Իսկ եթէ Չուիկի հօր անունը Անոյշ-Ալամից եղբակացնելով շինված է Ալամ կամ Ն. Չամչեանի և կամ այն մարդու ձեռքով, որից փոխ է առել վերապատուելին այդ անունը, ապա ուրեմն մեզ մնում է ասել որ բաւական աջող է եղել այդ առասպելի արուեստակութիւնը: Խնդրի վախճանական լուծումը թողում ենք ժամանակին, բայց, մինչև այդ ժամանակ, Չուիկին ճանաչում ենք Ալասակ Արծրունու դուստր:

§ 25. Այս բգեշխը, մեր շատ անգամ յիշած, Աշուշայ, Ալրաց բգեշխն է:

§ 26. Արկանելի բառը, մեր լեզուի մէջ, գլխարկից սկսած մինչև օթոցը (փռուածք, խալիչայ) ամեն բան նշանակելով, մեր թարգմանութեան մէջ բնագրի խօսքը պահեցինք, որովհետև չգիտենք ստուգապէս թէ ի՞նչ բան էր, որ Փարպեցին տանուէր Սահանի քամակից, խաղալու ժամանակ:

§ 27. Ինագիրը. «Եւ վկայէ Վիր ՚ի Կաթուղիկէսն». (Եր. 42) մենք, ՚ի Կաթուղիկէսն խօսքը Իմաստութիւն (Սողոմոնի) կարդալով թարգմանեցինք, որովհետև այն Փարպեցու խօսքը չէր: Կաթուղիկեայց անունով յիշված վկայութիւնը ոչ միայն Կաթուղիկեայց թղթերում այլ և բովանդակ Վոր Կտակարանի մէջ չկայ. շին Կտակարանումն էլ միայն մի տեղ. «Վախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ» (Իմաստութիւն, գլ. Բ, համ. 24), ուստի մենք համարձակվեցանք գրչի աղճատանքը սրբագրել:

Եւ որպէս զի չկարծեն ոմանք թէ չին ժամանակներում Սողոմոնի Իմաստութիւնը Կաթուղիկեայք էր անուանվում (ըստ որում անհիմն կարծիքներ առան են մեր ժամանակներում), ուստի վկայ ենք կանչում Ագաթանգեղոսը, ուր Ս. Լուսաւորիչը ասումէ. «Քանզի և ասէր իսկ Իմաստունն, թէ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ». (Ագաթ. Եր. 119):

§ 28. «Եւ պահէր Եսաւ ո՛րս Յակովբայ վասն օրհնութեանցն զոր օրհնեաց զնա հայր իւր, և ասէր Եսաւ ՚ի մտի իւրում, մերձեսցին աւուրք կարեաց հօր իմոյ զի սպանից զՅակովբ զեղբայր իմ». Ծնունդք, գլ. ԻԿ, համ. 41: 'Ետք գրով տպված խօսքերը հրէական բնագրին մէջ այսպէս են. «և ասաց Եսաւ ՚ի սրտի իւրում. աւուրք սոցոյ հօր իմոյ (այսինքն հօրս մեռնելու օրերը) մերձեալ են. սպանից յայնժամ զեղբայր իմ զՅակովբ»:

§ 29. «Եւ վաճառեցին զՅովսէփ Իսմայելացոցն բսան դահեկանի». Ծնունդք, գլ. ԼԿ, համ. 28:

§ 30. «Եւ բամբասեցին Մարիամ և Ահարոն զՄովսէս վասն կնոջն Եթէովպացոյ՝ զոր ան Մովսէս. զի կին Եթէովպացի առ: Եւ ասեն՝ թէ ընդ Մովսիսի միայն խօսեցաւ Տէր, ոչ սպաքէն և ընդ մեզ խօսեցաւ և լուաւ Տէր... Եւ եղև բարկութիւն սրտմտութեան Տեառն ՚ի վերայ նոցա՝ և գնացին... Եւ ահա Մարիամ բորոտեալ էր իբրև զձին. և հայեցաւ Ահարոն ընդ Մարիամ և ահա բորոտեալ էր»: Թիւք գլ. ԺԲ, համ. 1—10:

§ 31. Տես Առաջին Թագաւորութեանց ժը, ժթ, ի, իբ, իգ, իդ, և իզ գլուխները:

§ 32. «Եւ դպիրքն որք յԵրուսաղեմէ իջեալ էին ասէին թէ բէկղղբուղ գոյ ՚ի դմա, և իշխանաւ դիւացն հանէ դա զգևս». Աւետ. Մարկ. գլ. Գ. հ. 22: «Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւ դիւաց հանէ դա զգևս». Աւ. Մատթ. գլ. Թ, համ. 34: «Ոչ իւիք հանէ դա զգևս, եթէ ոչ Բէկղղբուղաւ իշխանան դիւաց». Նոյն գ. ԺԲ. համ. 24: «Բէկղղբուղաւ իշխանան դիւաց հանէ դա զգևս». Աւ. Գուկ. գլ. Ժա. համ. 15:

33. «Բնդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր». Մատթ. գլ. Թ, համ. 11: Չի՞նք զի ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէք և բմպէք». Մարկ. գլ. Բ, համ. 16: «Բնդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և բմպէք». Գուկ. գլ. Ե, համ. 10: «Բնդէր սա զմեղաւորս ընդունի և ուտէ ընդ նոսա». Նոյն, գլ. ԺԵ, համ. 2:

§ 34. «Յայնժամ մտտեան առ Նա աշակերտքն Յովհաննու և ասեն. ընդէր մէք և փարիսեցիքն պահեմք յաճախ և քո աշակերտքդ ոչ պահեն». Մատթ. գլ. Թ, համ. 14: «Ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց». Մատթ. գլ. ԺԵ, համ. 19, Գուկ. գլ. Լ, հ. 34: «Բնդէր աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն և քո աշակերտքդ ոչ պահեն». Մարկ. գլ. Բ, հ. 18: «Բնդէր աշակերտքն Յովհաննու պահեն ստեպ և ինդրուածս առնեն, նոյնպէս և փարիսեցոցն. և քոյքդ ուտեն և բմպեն». Գուկ. գլ. Ե, համ. 33:

§ 35. «Ոչ բարուք ասեմք, եթէ Սամարացի ես դու, և դե գոյ ՚ի քեզ». Յովհ. գլ. Ը, համ. 48: Տես նոյնպէս Յովհ. գլ. Լ, հ. 20, Ը, 52. Ժ. 20. Մարկ. Գ. 30:

§ 36. «Ինդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա. և ոչ գտանէին: Զի բազում սուտ վկայութիւն վկայէին զնմանէ. և նման միմեանց՝ ոչ էին վկայութիւնքն: Այլք յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, և ասէին, թէ մէք լուաք ՚ի դմանէ զի ասէր. ես բակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից այլ առանց ձեռագործի: Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա»: Մարկ. գլ. ԺԳ. հ. 55—58: «Խոռվէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամենայն շրէաստան, սկսեալ ՚ի Ղալիլէէ մինչև ցայսր». Գուկ. գլ. ԻԳ. համ. 5: «Գտաք զսա

զի թիւրէր զազգս մեր, և արգելոյր 'ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձնէ, թէ Վրիստոսն իցէ թագաւոր», նոյն, գլ. նոյն, հ. 2:

§ 37. «Քանզի զիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա... առեալ ջուր լուաց զձեռս առաջի ժողովորեանն և ասէ. քաւեալ եմ ես յարենէ արգարոյդ այգորիկ. դուք գետասջիք». Մատթ. գլ. ԻԿ, հ. 18 և 24: Տես և Մարկ. գլ. ԺԵ, հ. 10, Ղուկ. իգ, համ. 4, 14, 15, և 22: «Առէք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն դատեցարուք». Յովհ. գլ. ԺԲ, համ. 31:

§ 38. Բնագրում ասած է. «Ա իձակեցին մահու, և ոչ ուղղոց այլ անիծից» և իսկոյն սորանից յետոյ բացայայտուամք. «այսինքն՝ խաչի». (Եր. 43): Բանի զօրութիւնը այս է. երբայական օրէնքով անիծված էր այն մարդը, որ փայտից կախվելով էր մեռնում: «Օհ անիծեալ յԱստուծոյ է ամենայն, որ կախիցի զփայտէ»: Արհր. Օրէնք, գլ. ԻԷ, համ. 23: Իսկ խաչվելը համարվում էր փայտից կախվելը. «Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս՝ զոր դուքն սպանէք կախեալ զփայտէ». Գործք Առաք. գլ. Ե, համ. 30): «Բա Յիսուս որ 'ի Ազգարեթէ զոր օձն Աստուած Հոգւով Սրբով և զօրութեամբ... սպանին կախեալ զփայտէ», նոյն, գլ. Ժ, համ. 38—39: Այս պատճառով Պաւղոսը ասում է. «Վրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք 1)». զի գրեալ է, թէ անիծեալ ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ»: Թուղթ Պաւղ. առ Վաղատ, գլ. Գ, համ. 13: Մեր ուսումնական եղբարքը չնեղանան մեզ, որ այսպիսի մանրամասն ծանօթութիւնք են զնում ամեն քայլափոխ. նոքա աղատ են չկարգալ. մենք հասարակ ժողովրդի համար ենք գրում:

§ 39. «Եթէ զիս հալածեցին ապա և զձեզ հալածեցին, եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեցին». Յովհ. գլ. ԺԵ, հ. 20:

§ 40. «Եթէ զտանուտէրն Բէեղզերուդ կոչեցին, որչափ ևս առաւել զընտանիս նորա». Մատթ. գլ. Ժ, համ. 15:

§ 41. «Տեսեալ որդւոցն Աստուծոյ զգտներսն մարդկան զի գե-

1) Մեզ թվում է թէ այս ոճը «անէծք լինելը», որպէս նաև «նոյով լինելը», (Փարպեցին իր Պատմութեան մէջ բերելով այս վկայութիւնը գրում է «նոյովեալ լինելը»), (Եր. 89) բնիկ հայկական ոճ չէ, այլ յունական լեզուի ուղղակի ազդեցութիւն, ըստ որում կարգում ենք :

Այս տեղ պահատում է շարունակութիւնը, այսինքն բերելու օրինակը. Հրատ:

ղեցիկ էին առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին»: Մտնուդք, գլ. Օ, համ. 2:

§ 42. «Եւ ահա այր Խորայէլացի, գայր ածէր զեղբայր իւր առ կին իւր Մադիանացի յանդիման Մովսիսի, և յանդիման ամենայն ժողովորեան որդւոցն Խորայէլի. և նոքա լային առ զրան խորանին վկայութեան: Եւ տեսեալ Փենէէսի որդւոյ Ազիազարու, որդւոյ Ահարոնի քահանայի, յարեաւ 'ի միջոյ ժողովորեանն, և առեալ զեղբարդն 'ի ձեռն իւր և եմնւտ զհետ առնն Խորայէլացւոյ 'ի հնոցն 1) և խոցեաց զերկոսին զայրն Խորայէլացի, և զկինն ընդ արգանդ իւր և զազարեաց հարուածն յորդւոցն Խորայէլի 2).... Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. Փենէէս որդի Ազիազարու, որդւոյ Ահարոնի քահանայի ցածոյց զսրտմտութիւն իմ յորդւոցն Խորայէլի... ահա ես տաց նմա ուխտ խաղաղութեան. և եղիցի նմա և զաւակի նորա յետ նորա ուխտ քահանայութեան յաւիտեական. փոխանակ զի քինականիւր եղև Աստուծոյ իւրում և քաւեաց վասն որդւոցն Խորայէլի: Եւ անուն առն Խորայէլացւոյ հարելոյ, որ հարաւ ընդ կնոջն Մադիանացւոյ, Օամբրի... և անուն կնոջն Մադիանացւոյ հարելոյ Վազբի»: Թիւք, գլ. ԻԵ, հ. 6—8, և 10—15: «Ապա եկաց 'ի մէջ Փենէէս, քաւեաց և արգելաւ մահ. համարեցաւ նմա յարգարութիւն ազգէ յազգ մինչև յաւիտեան». Սաղմ. ՂԵ, համ. 30:

§ 43. «Եւ բանակեցաւ Խորայէլ 'ի Սատտիմ և պղծեցաւ պոռնկել ընդ գտներսն Մովաբու: Եւ կոչեցին զնոսա 'ի զօհս կոոց

1) Բառական թարգմանութիւն է յունականից, ուր կարգում ենք Καμινος, մինչդեռ հրեական բնագրում ԴՅԲ պարզապէս սենեակ է նշանակում և ոչ հնոց. և Ջամբրին Քաղբու հետ ո՞ր է մտնում հնոցը. յայտնի է թէ իր սենեակը կ'երթար, ինչպէս և ասում է Աբրապական բնագիրը: Հայկազ բառարանն էլ «հնոց» բառի տակը, ճարը կտրված յիշում է ըստ այլոց պոռնկանոց. ցանկալի էր իմանալ ո՞րք են այդ «այլքը», որ հնոցը պոռնկանոց են հասկանում: և քանի արժէք ունի այդ տեսակ քաղցրատուք մեկնութիւնը:

Մենք վէճ չունենք, զուցէ եղև են մարդիկ որ հնոց բառը այդ տեղում արդարացեալու համար ստիպուել են այդպէս կարկտել աններելի ուշաբարձութեամբ. որովհետեւ եթէ Խորայէլեան բանակում մի պոռնիկ մարդ կամ մի բող յայտնուէր իսկոյն քարկոծում էին նորան առանց խնայելու, էլ ի՞նչպէս ուրեմն կարող էր յատուկ բողանոց լինել բանակի մէջ եթէ բող և պոռնիկ չկար: Բայց, արեւոյից ինչ հարցնես լոյրիկա: Սակայն Հայկազեան բառարանը պարտական էր անունով յիշել հնոցը պոռնկանոց հասկացողքը. որովհետեւ այժմ առանց վկայութեան էլ հասատ չկայ:

2) Հետեալ § 43-դ յօդուածում յիշված հարուածի վրայ է ակնարկում:

իւրեանց, և եկեր ժողովուրդն 'ի զոճից նոցա: Եւ նուիրեցաւ Խորայէլ Բէլիեգովրայ, և բարկացաւ սրտամուծեամբ Տէր 'ի վերայ Խորայէլի... Եւ ասէ Մովսէս ցցեղն Խորայէլի, կոտորեցէք իւրաքանչիւր զընտանի իւր զնուիրեալ Բէլիեգովրայ... Եւ եղեն մեռեալքն 'ի հարաւածոցն յայնցանէ քսան և չորք հազարք»։ (ԹԻԲ, գԼ ԻԵ, համ. 1—3, 5 և 9: «Եւ մի պոռնկիցուք որպէս ոմանք պոռնկեցան 'ի նոցանէ և անկան 'ի միում աւուր քսան և չորք հազարք»։ (Թուղթ, Պաւղ, առ Կորնթ, Ըռաջ, գԼ Ժ, համ. 8): «Պղծեցան նոքա 'ի Բէլիեգովր... բարկացուցին զնա 'ի գործս իւրեանց, յաճախեաց 'ի վերայ նոցա բեկումն»։ Սաղմ. ՃԵ, համ. 28—29:

§ 44. Պաւթի որդու Լմնի անզգամութեան վրայ է ակնարկում իր քրոջ Թամարի հետ: Բայց որ ասումէ «վասն անհանձար խօսիցն», մենք հասկանումենք այդ Յովնադաբի տուած խորհուրդը: Մենք չենք արտագրում այդ անցքի պատմութիւնը, նախ որ երկար է, երկրորդ, որ շատ պիղծ բան: Կամեցողը թող կարգայ, Երկր. Թագ. գԼ ԺԳ, համ. 1—22, 27—29 և 32:

§ 45. «Եւ հաճոյ եղև Ենովք Լստուծոյ, և ոչ ուրէք գտանէր, զի փոխեաց զնա Լստուած»։ Ծնունդք, գԼ Ե, համ. 24:

§ 46. «Եւ օրհնեաց Լստուած զՆոյ և զորդիս նորա, և ասէ ցնոսա, աճեցէք և բազմացարուք և լցէք գերկիր և տիրեցէք դմա»։ Ծնունդք, գԼ Թ, համ. 1:

§ 47. «Եւ ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք... և վերացաւ Եղիա շարժամբ յերկինս»։ Չորրորդ Թագ. գԼ Բ, համ. 11: Լսյ տեղ յայտնումենք ընթերցողին, որ Թուղթի բնագրում ասած էր. «Իսկ զարմանալին զանէն զԵղիսայէ» և այլն. մենք Եղիաս կարդալով թարգմանեցինք, որովհետև Եղիսէն, Եղիայի սքանչելի ճանապարհորդութիւնից յետոյ, երկար ժամանակ գետնի երեսին ապրելով, այս տեղ էլ վախճանեցաւ: Տես Չորր. Թագ. գԼ ԺԳ, համ. 20:

§ 48. Լմենայն որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում»։ Սատթ. գԼ Ե, համ. 28:

§ 49. Պաւղոսը ինքն է վկայում. «Եթէ զփորձ ինչ ինդրէք գՐրիստոսի, որ ինևս ընդ ձեզ խօսի»։ (Թ. Պաւղ, առ Կորնթ. երկր. գԼ ԺԳ, համ. 3:

§ 50. «Լստուհետև աշխատ ոք զիս մի' արացէ, զի ես զչարչարանս Քրիստոսի 'ի մարմնի իմում կրեմ»։ (Թ. Պաւղ, առ Վաղատ, գԼ Օ, համ. 17: «Լնում զպակասութիւն նեղութեանցն 'ի մարմնի իմում» (Թ. Պաւղ, առ Կորոս, գԼ Ե, համ. 24: Լմենայն Հայոց եկեղեցին մեր բազմերախտ Հօրն է երգում. «Խոստովանող Քրիստոսի ճշմարիտ վկայ, բազմաչարչար նահատակ Տէր Պրիգորիոս, զպակասութիւն չարչարանաց Տեառն 'ի մարմնի քում կրեցեր»։ (Շարական):

§ 51. Բնագրում ասած է. «Քանզի ընդ գիտնոյ Օրինաց են խօսքս»։ (Եր, 46): Պաւղոսիցն է փոխ առնում այս ձևը. «Օհ ընդ գիտունս օրինաց խօսիմ»։ (Թ. Պաւղ, առ Հռովմ. գԼ Լ, համ. 1:

§ 52. Բնագրում ասած էր. «Լսլ սակաւ բանիւք զոր յերկրորդումն թղթին գրէ 'ի Կորնթացուցն», և այլն: Ինչպէս ընթերցողը արդէն տեսաւ, մենք գրել ենք «առաջին թղթում», որովհետև յերկրորդումն խօսքը Փարպեցու խօսքը չէր այլ օրինակող գրիչներին աղճատանք. պատճառ մեջ բերված վկայութիւնը Կորնթացոց երկրորդ թղթում չէ, այլ առաջնում, և ահա ասիկ. «Ինաւ և անուանի' իսկ 'ի ձեզ ընդէր պոռնկութիւն» (Թ. Պաւղ, առ Կորնթ, Ըռաջ, գԼ Ե, հ. 1: Որ մի և նոյն է, գրեթէ բառ առ բառ, Փարպեցու Թուղթի բնագրում մեջ բերվածի հետ. «Ինդէր իսկ բնաւ և անուանի 'ի միջի ձերում պոռնկութիւն», (Եր, 46):

§ 53. «Լսլ պոռնկութիւն և ամենայն պղծութիւն, կամ ագահութիւն և անուանեցի մի' 'ի միջի ձերում»։ (Թ. Պաւղ, առ Եփես, գԼ Ե, համ. 3:

§ 54. «Լմենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ է կռպարիշտ ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսին և Լստուծոյ»։ Նոյն, գԼ նոյն, հ. նոյն:

§ 55. Բնագրում անուն չկայ, այլ մի քանի կէտ. բայց պ. Լյմինը ծանօթաբանումէ. «Լստէն բառ ինչ պակասի, գուցէ անուն իցէ Յովհաննու, որոյ և յառաջ բերեալ տեսանի բան»։ Լիակատար իրաւունք ունի պ. Լյմինը. գուցէն էլ հարկաւոր չէր, որովհետև բովանդակ Լստուածաշնչի մեջ, բաց ի Յովհաննէս Լեւտարանչից ոչ ոք է ասել այդ խօսքերը: Մենք դրականապէս ընդունեցինք պ. Լյմինի առաջարկութիւնը. բայց յայտնումենք, որ մենք երաշխաւոր չենք, թէ Փարպեցին անպատճառ Յովհաննէս է

գրել: Յովհաննէս Աւետարանիչը մի քանի անուն ունի գուցէ նոցանից մինը գրած էր. բայց երաշխաւոր ենք, որ թէ ինչ էլ գրած է եղել Փարպեցին, այնու ամենայնիւ Յովհաննէս Աւետարանչին է հասկացել: Բայց որովհետեւ այդ խօսքերը Աւետարանի մէջ չեն այլ Առաքեալի թղթում, ուստի մենք գրեցինք «Յովհաննէս Առաքեալ»: Ահաւասիկ բուն խօսքերն էլ. «Են մեղք, որ մահու չափ են. ոչ վասն այնորիկ ասեմ եթէ ինդրեցես. ամենայն անիրաւութիւն մեղք են. և են մեղք, որ մահու չափ են». թուղթ Յովհ. Առաք. գլ. Ե, համ. 16—17:

§ 56. «Ասան այգորիկ ասեմ ձեղ. ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյութիւն մի թողցի: Եւ որ ոք ասիցէ բան զորդույ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զհոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայտմ աշխարհի, և մի՛ ՚ի հանդերձելումն». Մատթ. գլ. ԹԻՆ, համ. 31—32: «Ամէն ասեմ ձեղ, զի ամենայն թողցի մարդկան մեղք և հայհոյութիւնք որչափ և հայհոյեցեն, բայց որ հայհոյեցէ զհոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտեանիցն մեղաց». Մարկ. գլ. Գ, համ. 28 և 29: «Եւ ամենայն որ ասէ բան զորդույ մարդոյ, թողցի նմա. բայց որ զհոգին Սուրբ հայհոյիցէ, մի թողցի նմա. Գուկ. գլ. ԺԻՆ, համ. 10: Պաւղոսը հոգւոյն Սրբոյ հայհոյութիւն է համարում, երբ մարդ, ճանաչելով ճշմարտութիւնը, մեղանչում նորա ընդդէմ, որովհետեւ ասումէ». Օլի կամակար մտօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այնուհետեւ ոչ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ. այլ ասեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ հրոյն որ ուստիցէ զհակառակորդսն». թուղթ Պաւղ. առ Եբբ. գլ. Ժ, համ. 26—27: Ենթողի է համարում այս մեղքը, ապա ուրեմն հոգւոյն Սրբոյ հայհոյութիւն է ճանաչում, որովհետեւ մնացած միւս բոլոր մեղքերը անթողլի չեն: Եւ այս յայտնի է. որովհետեւ ինքը Քրիստոսն էլ ասումէ:

§ 57. Քրիստոսի ասած յիմար և իմաստուն կոյսերի առակի վրայ է ակնարկում: Կարգացողը կարող է տեսնել այդ առակը Մատթ. գլ. ԻԵ, համ. 1—12:

§ 58. Սաղմոսիցն է փոխ առնում այս ձևը. «Սուրբ նոցա մոցին ՚ի սիրտս նոցա և աղեղունք նոցա փշրեսցին». Սաղմ. Լ, Օ, համ. 15:

§ 59. Այս տեղ բնագրում այսպէս էր ասած. «Յաղաքս որոյ և զայլն ամենայն և զորս առ նոսա արանցն ծառայք նորա», և այլն. (եր 48): Մենք, ինչպէս կարող է տեսնել ընթերցողը թէ և թարգմանել ենք գրեթէ բառ առ բառ, բայց խոստովանումենք, որ մի փոքր մուծ է երևում մեղ այս ասացուածը. պատճառ, չէ հասկացվում, թէ որ ասումէ, «ծառայք նորա», ո՞վ է այս նան, կամ որի՞ ծառայքն են որ ունին: Արը շատ սրբերի անուն տալով յետոյ յիշումէ և մեր Ս. Լուսաւորչին, արդեօք նորա՞ ծառայքը պիտի հասկանալ, կամ թէ նորա ի տեղ պէտք է նոցա՞ կարգալ և բոլոր յիշված սրբերին վերաբերել, մենք յանձնառու չենք ասել, մանաւանդ որ պարզապէս չենք հասկանում և չգիտենք: Այս պատճառով էլ բնագիրը պահեցինք այս տեղ, որ ընթերցողը տեսնէ:

§ 60. Պարտականութիւն ենք համարում պահել այս տեղ այդ հոյակապ առածի բնագիրը. «Ղստ խոզի հարսնացելոյ կոյսըւր բաղանիք». (եր 49): Թէպէտ և սովորաբար չեն թարգմանում այսպիսի առածները, մանաւանդ որ շատ անգամ և չէ թարգմանվում, կամ համը կորցնումէ, բայց մենք մեր ընթերցողներին մօտաւորապէս գաղափար տալու համար թարգմանեցինք, այնպէս, ինչպէս տեսնումէ ընթերցողը:

§ 61. Ինագիրը այսպէս է տպած. «Մի արդարեւ պատմեցի այս գէթ ըստ բանի ողբոյն և մի՛ լուիցէ ՚ի գրունսս Ասկաղովնի». (եր. 49): Գէթ բառի տակ պ. Լ. մինը այսպէս է ծանօթաբանում. «Յերկոսին յորինակն գրեալ տեսանի ՚ի գէթ»: Ինչպէս ընթերցողը տեսնումէ, մենք օգուտ չենք քաղել պ. Լ. մինի սրբագրութիւնից, և պատճառը այս է, թէ որքան պ. Լ. մինը իրաւունք ունի գէթ շարկապի վրայից նախդիրը հալածելու, որպէս գրչի սխալ, նոյնքան իրաւունք ունի ամեն մարդ յատուկ անուն Գէթ ի հալածեալ նախդիրը պաշտպանելու, որպէս բուն Փարպեցու ձեռքով գրված նախդիր:

«Եւ ողբայ Գաւիթ զողբս զայս ՚ի վերայ Սաւուղայ և ՚ի վերայ Յովնաթանու որդույ նորա... Մի պատմք ՚ի Գէթ, և մի՛ տայք զայդ աւետիս յերս Ասկաղովնի, զի մի՛ երբէք ուրախ լիցին դստերք այլազգեացն, և մի՛ ցնծացեն դստերք անթլփատիցն»: Երկր. Թագ. գլ. Ե, համ. 17 և 20:

Այս Գէթը և Ասկաղովնը այլազգեաց հինգ նախարարութեանց երկուքն են. Գողթաթը Գէթացի էր նոյնպէս: Երբ Սաւուղը իր

վերջին պատերազմում մեռաւ և նորա մահի լուրը Ղաւթին հասաւ, այն ժամանակ, սա պատուց իր շորերը և ողբաց նորա մահը: Փարպեցին իր թղթում բերելով այս ասացուածը, աւելցնումէ. «Բտ բանի ողբոյն»: Ղաթնեաց գրուածքը սրբագրելը շատ զգուշալի բան է առ հասարակ. բայց մանաւանդ, երբ չենք հասկանում մեր սրբագրութեամբ բռնաբարած բանը: Ըստքան:

§ 62. «Մի գուցէ քաղցեք զորոմնն և զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցեք. թոյլ տուք երկոցունց աճել ՚ի միասին մինչև ՚ի հունձս, և ՚ի ժամանակի հնձոց ասացից ցհնձողն. քաղցեք նախ զորոմնդ, և կապեցեք զայդ խրձունս առ ի յայրել և զցորեանն ժողովեցեք ՚ի շտեմարանս իմ»: Մատթ. գլ. ԺԳ, համ. 29—30:

§ 63. «Եւ հնձողքն հրեշտակք են». Մատթ. գլ. Ժ, հ. 39: «Եւ առաքեաց Տէր Ըստուած հարցն նոցա ՚ի ձեռն մարգարէիցն, կանխեալ առաքեաց զհրեշտակս իւր...արհամարհէին զհրեշտակս նորա և անգոսնէին զբանս նոցա». Երկր. Մնացորդ. գլ. Լ, Գ, համ. 15—16: «Եւ առաքեաց Ըստուած հարցն նոցա զհրեշտակս և զմարգարէս իւր...և արհամարհեցին զհրեշտակս նորա». Ընաջ. Եզր. գլ. Ը, հ. 50—51: «Եւ ասէ Ընդէոս հրեշտակն Տեառն ՚ի հրեշտակս Տեառն ցժողովուրդն». Մարգ. Ընգ. գլ. Ը, համ. 13: «Օհ շրթունք քահանային զգուշացին գիտութեան...զի հրեշտակ Տեառն ամենակալի է». Մարգ. Մաղաք. գլ. Բ, համ. 7:

§ 64. «Ես ասացի թէ աստուածք իցեք, կամ որդիք բարձրելոյ ամենեքեան: Ղուք աւագիկ որպէս մարդիկ մեռանիք, և որպէս զմի յիշխանաց անկանիք». Մաղմ. ՁԸ, համ. 6—7: Եւ ասէ Տէր ցՄովսէս ահա ետու գրեզ աստուած Փարաւոնի». Եւբ. գլ. Լ, համ. 1: «Ո՛չ յորէնս ձեր գրեալ է. ես ասացի թէ աստուածք իցեք». Յովհ. գլ. Ժ, համ. 34:

§ 65. Բնագիրը այսպէս է ասում. «Իսկ ես ոչ հրեշտակս՝ և վարդապետ և ոչ երբէք իսկ չեմ եղեալ բանիս այս ըստ երբէք ՚ի հարցողաց ուրուք կամաց գործոյ իշխանութեան, և ոչ երբէք». (Եր. 49): Մենք այնպէս ենք հասկանում ինչպէս թարգմանել ենք:

§ 66. Հայոց ազգի մեղքից, այս բանը ասես թէ նորա եկեղեցու ճակատումն է գրված: Ըստ որ է Կիլիկիոյ մէջ Կողանողուն, ազգի և կաթողիկոսի կամքին ընդդէմ, առաջնորդներ է կարգում. շատ անգամ, այն, բռնապատումէ և եպիսկոպոս ձեռնադրել իր ար-

բանեակները, որի օրինակները և սոցա ողբալի հետևանքը միշտ անպակաս է ազգի աչքից:

§ 67. «Մի բազում վարդապետս լինել եղբարք իմ, գիտասջիք, զի մեծ դատաստան ընդունելոց եմք». թ. Կաթ. Յակ. Ընաք. գլ. Գ, համ. 1:

§ 68. Բնագրում ասած է. «չսեն զՊողոսի բողոքն, թէ զանձինս դատեաք». (Եր. 50): Մեզ թվումէ թէ ձեռագիրը կրճատված է այս տեղ. պատճառ, Պաւղոսը այսպէս է ասում. «Օհ եթէ զանձինս քննեաք ապա ոչ դատապարտեաք». թուղթ Պաւղ. առ Կորնթ. Ընաջ. գլ. Ժ, համ. 31: (Պատապարտեաք խօսքը պիտի կրաւորականապէս հասկանալ, յունական բնագրին համաձայն):

§ 69. «Ընաջի իմ եղև դատաստան, և առնոյր դատաւորն կաշառս. վասն այնորիկ ցրուեցան օրէնք և իրաւունք ՚ի գլուխ ոչ ելանն. զի ամբարիշտն յաղթահարէ զարգարն. վասն այնորիկ ելանէր դատաստանն թիւր». Մարգ. Ըմբակ. գլ. Ը, համ. 3—5: Հարազատ թարգմանութիւն է յունականից. բայց մի փոքր անհամաձայն է երբայականի հետ: Բայց թողունք այդ. մենք այս տեղ ուրիշ բան ունինք ստելու:

Բնագրում ասած էր. «Եւ զմարգարէին Ըմբակումայ ստունկանն զաղաղակ՝ մանաւանդ թէ նովաւ». (Եր. 50): Մենք այս դերանունը աղաղակի տեղ դրված հասկանալով թարգմանեցինք. և որովհետև եթէ կամենայինք դերանունի տեղ դերանուն գնել դարձեալ ինչպէս. նորանով. բանը պիտի շփոթվէր և ընթերցողը պիտի գժուարանար հասկանալ թէ յ՛մ է վերաբերում, մագարէին, թէ աղաղակին, ուստի մենք աղաղակը վերստին կրկնեցինք:

Բուն հին լեզուի մէջ էլ սովորական չէ այն ձևը—էական դերանուն, ինչպէս սա, դա, նա, գործ գնել անշունչ առարկաների կամ վերացեալ բմբանողութեանց տեղ—բայց երբեմն երբեմն կայ գործ ածված. և մեզ թվումէ թէ յունական լեզուի ազդեցութիւն է այս, որովհետև այդ լեզուն, ինչպէս մեր լեզուն նա և նոյն, առանձին դերանուն չունի այլ երկուքի գաղափարն էլ տալիս է մի և նոյն խօսքով մի և նոյն դերանունով, որ նախնիք թէ և սովորաբար թարգմանումեն մեր լեզուի պահանջողութեան համեմատ երբեմն նա և երբեմն նոյն, բայց տեղ տեղ ներս է մտած նա փոխանակ նոյն ի:

Հին լեզուի մէջ այս «նա նոյն և այն» դերանունների տարբեր

գործածութիւնը, որ շատ դիւրութիւն է տալիս բանի պարզ հասկացողութեանը, ձախողակի, շփոթվել է նոր լեզուի մէջ: Առանց նորան էլ մեր մէջ գերանունները սեռ չունենալով ծանրացնում են բանը. բայց երբ այդ գերանուններից էլ լրիկ մի հատը միայն գործ ենք դնում, այն ժամանակ ստիպվում ենք շատ տեղ բուն անունը կրկնել, որպէս զի գաղափարքը չշփոթվին:

Արարտեան բարբառում, որի կատարեալ և գեղեցիկ գաղափարը, մտաւորապէս, տալիս է մեր «Հիւսիսափայլը», նոյն և այն գերանունները չեն գործածվում հոլովված: Անացել են միայն ուղղակիւքը, իսկ միւս հոլովները առնվում են նախ: Սորա հակառակ Արտասնգնուպոլի բարբառում, նա և նոյն գերանունները ուղղակիւքում միայն և անխտիր ամեն բանի տեղ գործ ածվելով, չունին միւս հոլովները: Սոցա պակասը լցնում են այն՝ հոլովները: Մեզ թվում է թէ այս բանի մասին պէտք էր հոգ տանել. պատճառ, մերն էլ նոցանն էլ գովելի բան չէ: Այս բաների մանրամասն քննութիւնը պէտք է պահանջել գալոց քերականութիւնից նոր լեզուի:

§ 70. Բնագրում, Աւուկ անունի տակ, պ. Ամինը ծանօթաբանում է այսպէս. «Արդեօք անուն տեղւոյ է Աւուկս այս, եթէ մարդոյ. ինձ կարծի եթէ յատուկ անուն մարդոյ պիտի լինել, և գուցէ նոյն իսկ իշխանին Անձևացեաց, զոր ՚ի Պատմութեան իւրում յիշատակէ Ղաղար յերկուս գէպս՝ կոչելով զնա իշխան Անձևացեաց Աւուկ (Պատմ. Ղաղարայ եր. 221—22): Գուցէ ՚ի դրախտին Աւուկ իշխանիս այսորիկ էր, որ յանձնեաց Սահան Ղաղարայ զվերակացութիւն Աթուղիկէ եկեղեցւոյ ՚ի Աոր քաղաքի» (եր. 51):

Մեզ թվում է, որ թէ ուշադրութեամբ կարդար պ. Ամինը Փարպեցու Պատմութեան 221—22 երեսները, որ ինքն է յիշում, ապա հազիւ թէ թոյլ կը տար այս ենթագրութիւնը: Փարպեցու Պատմութեան մէջ յիշված Աւուկը մի ուրացեալ և չիք մարդ էր, որ զօրքով և զէնքով 482 թուականի գարնան յարձակվեցաւ երկու ուրիշ ուխտապահ և հաւատարիմ նախարարների վրայ, երբ սքա Սահանի այն նեղ ժամանակը գնում էին նորան Պարսից ընդդէմ օգնելու: Թող խօսի ինքը Փարպեցին. «Աւուկը զայս պատգամ չորեցունց գաւառաց նախարարացն (Սահանն էր ուղարկել այս պատգամը Արժրուհեաց, Անձևացեաց, Սոկաց և Աշտունեաց իշխաններին)

կէսքն փափաքեալք աջոյ կողմանն գրո՛հ տուեալ ընթանային ՚ի հօտ ոչխարացն ժամանել. և այլք ընդ դասակս այծեաց ձախակողմեան հաղորդեալք գնային անդարձութեամբ ՚ի խաւարն արտաքին: Ոմն յԱնձևացի նախարարացն սեպուհ մի, որում անուն էր Յովհանն. և միւս ևս երուանգունի Աերսէհ անուն, միաբանեալ ՚ի խընդիր բարի ցանկութեան, ընդ որս և հաւանեալ և այլ արք ճշմարտութեան նուիրիչք գնային խառնիլ ՚ի գունգն զօրավարին Այոց Սահանայ Սամիկոններ: Աւ մինչդեռ ժողովեալ գնային ՚ի ճանապարհի, մերձեալք ՚ի քաղաքագեօղն որ կոչի Արեստ. ՚ի ժամանակի քառասնորդացն պահոց ՚ի մեծի շաբաթու զատկին, յանկարծակի յանդգաստից եկեալ հասանէին ՚ի վերայ նոցա իշխանն Անձևացեաց Աւուկ անուն և իշխանն Սոկաց Յոհան անուն, բազում այրուծիով ընդ առաւօտն ծագել: Աւ սոցա զգացեալք կէսքն զինեալք և կէսքն թէպէտ անպատրաստք էին այլ օգնութեամբ Բարձրելոյն քաջալերեալք հարկանէին ՚ի դիմի աներկիւղապէս», և այլն (եր 221—22):

Ուր էին գնում Սահանը, Ս. Յովհանն Սանդակունին, Փարպեցին և միւսերը 486 թուականին այս չիքի պարտեղը:

Բայց այս, որպէս ենթագրութիւն, հիմնաւոր թէ անհիմն, տակաւին կարող էր անել պ. Ամինը. բայց ինչ ասենք այս խօսքերին որ պ. Ամինը խօսում է իր յառաջաբանի մէջ. «Յանդիման եղև (Փարպեցին) մեծի մարդպանին՝ այն ինչ զօրավարն Այոց ՚ի Աւուկ զրախտին էր» (եր. 22): Ինչ տեղից է առնում պ. Ամինը այս հարցասիրութեան արժանի տեղեկութիւնը: Ով է արդեօք նորան պատմում թէ Փարպեցին Սիւնեաց երկրից վերադառնալով առաջին անգամ «յանդիման եղև մեծի մարդպանին ՚ի Աւուկ զրախտին»:

Մեզ թվում է, թէ այս մի այնպիսի խօսք է, որ բնաւ հիմք չունի, որպէս և այս խօսքերին յաջորդող, միւս, սոցանից ոչ պակաս, պարմանալի խօսքերը այդ յառաջաբանութեան, որ, ճշմարիտն ենք ասում, հիացնում են մեզ:

Աւուկան, իբրև արծաթ կրակով է փորձում այսօր գիտութիւնը և ինչ որ չէ դիմանում այդ հրափորձութեան իբրև փոշի ցրնդեցնում է օդի մէջ, մաքրելով գիտութիւնը եկամուտ և կամամտածական կարծիքներից:

Սայ մեզ, մենք տասն և իններորդ դարու մէջ, հերիք չհամարելով այն բոլոր խաւը, որ զիղված է մեր պատմութեան վրայ,

տակաւին աշխատումենք մի քանի խուրձ աւելցնել. «Գիր զմեղս ՚ի վերայ մեղաց»: Բայց բարձրացնումենք այս տեղ մեր բողոքը ընդդէմ այն բոլոր մարդերին, որ իրենց մտքի կամ երեւակայութեան արգիւնքը կամենումեն զնել մեր առջև որպէս գիտութեան խօսքը: Գիտութեան խօսքերը չեն դոքա և գիտութիւնը նոյնպէս հրաժարւումէ այսօր այդ գիտութեան կարծեցեալ քուրմերից, ինչպէս երբեմն Ահմադ Խորայեզի կարծեցեալ մարգարէներից. «որք ասէին, այսպէս ասէ Տէր, և ես Տէր ոչ առաքեցի զնոսա և ես Տէր ոչ խօսեցայ և սկսան յարուցանել բանս» (Մարգ. Աղեկ. գլ. Ժ. Գ.):

Պ. Լամինը մի կողմից կարծումէ թէ թողթում յիշված Աւուկը է Անձեւացեաց իշխանը, և միւս կողմից էլ հաստատողպէս ասումէ թէ Փարպեցին Սիւնեաց երկրից վերադառնալով «յանդիման եղև մեծի մարդպանին ՚ի գրախտին Սեկոյ»: Այնպէս Աւուկը Անձեւացեաց իշխանն էր, ուրեմն իր երկիրը և գրողամնայ պարտեզը Անձեւացեաց գաւառում: Անշուշտ պ. Լամինն յայտնի է, թէ ո՛ր էին Սիւնիք և ո՛ր Անձեւացիք. ուրիշ ամենը թողած, նոցա մտակայ Գեղամայ ծովակը և Սարազայ սարը շատ անգամ յիշվումէ մեր պատմութեան մէջ. Փարպեցին Սիւնեաց աշխարհից վերադառնալով ճանապարհի վրայ արդեօք պատահումէ մարդպանին Աւուկի պարտեզում, թէ՞, Գուին վերադառնալուց յետոյ, յատկապէս գնումէ Անձեւացեաց երկիրը որ մարդպանին ներկայանայ:

Արդ՛արև մեզ շատ զուարճալի է թվում այս փոքրիկ ենդրի լուծումը:

Այն ժամանակ միայն Անձեւացեաց իշխան կարելի էր ենթադրել Փարպեցու թողթում յիշված Աւուկը, եթէ այդ մարդը միայն լինէր մեր պատմութեան մէջ այդ անունով: Գրեթէ 400 տարի յետոյ ժամանակների վերաբերութեամբ, Յովհաննէս կաթողիկոսը պատմելով Բուխայի հասուցած հարուածները, այսպէս է խօսում. «Աւ անտի ևս չուեալ (Բուխայ) յԱւտի գաւառ՝ ձերբակալ ՚ի Տուս գիւղ աննէ զՍտեփանոս, որում և Աոն անուանէին զնա, որ ՚ի նախնւոյ իւրմէ Սեկոյ՝ Աւորդիք ազգն անուանէին» (եր. 71): Աւ յետոյ Աւորդեաց Գէորգ նահապետի անունը տալով բացատրումէ. «որ սակս Սեկոյ չեցելոյ հաւուսն իւրեան, ազգն յայն անուն սև որդիք անուանէին» (եր. 103): Աստուծու սիրուն աղաչումներ, հինգերորդ դարում, չէին կարող ուրիշ Աւուկներ լինել բացի Անձեւացեաց իշխանից:

Աւ ինչ պատճառով Աւուկը անպատճառ պիտի մարդու անուն կարծենք. մի՞թէ չէ՞ր կարող տեղի անուն եղած լինել. մի՞թէ չէ՞ր մեր աշխարհագրութեան մէջ տեղ, որ Աւուկ կոչվէր: «Աւ զԱւուկ բերդակ, որ է մարդաղև». Ասողիկ, (եր. 179): Ստոյգ է այս անունը մենք լուծումք տասներորդ դարու վերաբերութեամբ. բայց կարելի է ասել թէ այդ տեղը չկար հինգերորդ դարում, կամ, եթէ կար, դեղնուկ էր կոչվում և ոչ Աւուկ: Մենք այս բերդի անունը յիշեցինք այս տեղ ոչ այն պատճառով, որ ասինք թէ նորա պարտիզումն է անցել յիշված անցքը, հեռի մեզանից այդպիսի ծակ մարգարէութիւնք, այլ որպէս զի ցոյց տանք, որ Աւուկը կարող էր և տեղի անուն եղած լինել, ինչպէս ցոյց տուինք որ Անձեւացեաց իշխանից զատ եղած են և ուրիշ Աւուկներ:

Բայց մենք ուզումենք տակաւին մի քայլափոխ առաջ տանել մեր սկեպտիցիզմը. ինչ է մեր հիմքը, որ մենք պիտի ասենք թէ Սեւուկի դրախտի մէջ է անցել յիշված անցքը: Ինչ իրաւունք ունինք «՚ի Սեկոյ դրախտին» խօսքը բացարձակապէս ներդոյական հոլով ճանաչել. «Սեկոյ» խօսքն էլ դրախտին յատկացուցիչ: Մեզ թվումէ թէ Փարպեցին իրաւունք չէ տալիս մեզ մի այդպիսի վերլուծութեան: Ահա բնագրի խօսքերը. «Աւ կամաւ ևս խորհիցիս զԵրզնիզ գտուեալ պատգամն երանելոյն Յովհաննու Գիւտայ կաթողիկոսի եղբորորդոյն, բեզ Տեանն ՚ի Սեկոյ դրախտին յարանց ոմանց, որք խոստանալովքեզ Տեանն կարասի խնդրէին զտեղիդ»:

Մի՞թէ իրաւունք պիտի ունենայ բարկանալ մեր վերայ հայկաբանութեան ուսուցչապետը, եթէ այսպէս հասկանանք. «Բեզ Տեանն յարանց ոմանց դրախտին Սեկոյ», մի՞թէ չէ՞ կարելի մտածել թէ Սեկոյ ի նախդիրը լինէր արանցի նախորի կրկնութիւնը, և մի՞թէ ընդդէմ է քերականական ուղիղ կանոններին հասկանալ եթէ արք Սեկոյ դրախտին խոստանալով կարասի խնդրէին զտեղին:

Այս այն աստիճանի պարզ կանոն է որ բնաւ օրինակ ևս չենք ուզում բերել:

Բայց ինչ ասել է Աւուկի պարտեզի մարդիկ: Այնպէս Սեկոյ դրախտը պիտի Սեկոյ պարտեզ իմանանք, ուրեմն և շացեաց դրախտն էլ շացեաց պարտեզ: Բայց շնորհակալ ենք երանելի Սովսէս Խորենացուց որ շացեաց դրախտը վանքի անուն եղածը մեզ իմացնումէ. (Խոր. Գիրք Գ. գլ. 14): Չէ՞ր կարող Սեկոյ դրախտն

ցառոցաբար տրվում են կաթողիկոսների, որովհետև գլխաւոր քահանայութեան, (որ նոյն է և գլխաւոր քահանայ և քահանաների գլխաւոր, ըստ որում մեր լեզուի մէջ վերացեալ անունները շատ անգամ գործ են անվում փոխանակ թանձրացեալի) և քահանայապետ խօսքերը բուն յունական *ἀρχιερεὺς* բառի ճիշդ թարգմանութիւնը լինելով, որպէս արհի երեց, երիցապետ, աւագ երեց (ինչպէս և Փարպեցին էլ ասումէ աւագ քահանայութիւն, Պատմ. եր. 106) որպէս տեսուչ քահանաների անխտիր գործ է դրվում եպիսկոպոսների վերաբերութեամբ: Եւ ոչ միայն այս բառերը, այլ նաև հայրապետ բառը եպիսկոպոսներին արված տեսնումներ շատ տեղ, որպէս նաև Լսողիկի Պատմութեան 79 երեսում: «Եւ յետ մահուան Սուրմակայ ժողովեալ հայրապետացն շայոց խնդրեալ գտին քահանայ ոմն Յովսէփ անուն... և հրամանաւ Արդանայ նստուցին յաթոռ կաթողիկոսութեան»: Յայտնի է թէ հայրապետ խօսքը կաթողիկոս չէ նշանակում այս տեղ, այլ, եպիսկոպոս, առաջնորդ, վանհայր և այլն: Եկեղեցական ժողովների վերաբերութեամբ սովորաբար ասվումէ այսքան կամ այնքան հայրապետ, մինչդեռ ոչ միայն այդ բոլորը կաթողիկոսք չէին, այլ և ոչ եպիսկոպոս, որովհետև հասարակ քահանայք միշտ շատ կային այդ ժողովների մէջ: «Շնորհազարդ սուրբ հայրապետ» ասումէ Մաշտոցը ամեն եպիսկոպոսի, և այս տողերը գրել է Սուրբ Յովհան Մանդակունին:

Եւ ոչ միայն այս, այլ մեզ թվումէ, թէ նաև լոկ քահանայք, որ ձեռնադրութեամբ չունէին եպիսկոպոսական աստիճան, բայց և այնպէս անուանվում են քահանայապետ թէ իւրեանց արժանաւորութեան և թէ վարած պաշտօնի պատճառով: «Հրաման տային սուրբ քահանայապետքն Լստուծոյ կապելոցն նախարարաց, աղծից և տքնութեանց պարապելոյ» և այլն. (Փարպ. Պատմ. շայ. երես 154): Լսելորդ է ասել, որ բաց ի Ուշտունեաց Սահակ եպիսկոպոսը, Ղևոնդեանց մէջ ուրիշ եպիսկոպոս չկար: Լսո՞, կար Յովսէփը — տեղապահ կաթողիկոսը, բայց նա նոյն Փարպեցու կրկին և կրկին ասելով լոկ քահանայ էր ¹⁾, թէ և կարգված «գլուխ ա-

1) Թող ինչ կամի ասէ Չափեանը, հիմնվելով Եղիշէի եպիսկոպոս բառի վրայ, որ տեսուչ է նշանակում. մենք, Փարպեցու կրկին եւ կրկին բացարձութիւնը ընդունում ենք որպէս անհերքելի վկայութիւն այն բանին, թէ Ս. Յովսէփը բնաւ եպիսկոպոս չէ ձեռնադրված:

մենայն շայոց քահանայութեան» (եր. 136): «Կոյնպէս արժանաւորութեան պատճառով և սարկաւազը անուանվումէ քահանայ. Սուրբ Ղևոնդը, Պարսից հրապարակում, յայտնելով Սուրբ Յովսէփի և Սուրբ Սահակ Ուշտունեաց եպիսկոպոսի ո՛վ և ինչ լինելը, յարումէ. «Իսկ այլքս և ես միապէս եմք ըստ կարգի քահանայութեան» (Փարպ. Պատմ. եր. 136) մինչդեռ անժխտելի է, որ սարկաւագ էլ կար նոցա մէջ, ինչպէս միաբերան վկայում են Եղիշէն և Փարպեցին: Արի օրինակը թերևս այս էլ կարող է ցոյց տալ, որ Փարպեցին, բուն կաթողիկոսական իշխանութիւն հասկացնելու համար, ասես թէ հերիք չէ համարում լոկ գլուխ քահանայութեան խօսքը և Ս. Ղևոնդի բերնով Ս. Յովսէփին անուանումէ «Գլուխ ամենայն շայոց քահանայութեան: Արևում, երբ ասացինք, թէ Փարպեցին լոկ քահանային էլ քահանայապետ է կոչում, հարկաւոր էր աւելցնել, որ մենք մոռացանք, որ թէ կապված սուրբերի մէջ հրաման տուող կար, այդ, տիրապէս, Ս. Ղևոնդն էր: Ինքը Ս. Յովսէփը, որ կաթողիկոսական պաշտօն էր վարում, առանց Ս. Ղևոնդի հրամանին ոչ մի բան չէր անում: Եթէ ասենք թէ և չէր խօսում, կարծում ենք թէ չենք սխալվում: Եւ այս յայտնի է Փարպեցու սոյոգ պատմութիւնից. «Եւ Սուրբն Յովսէփ հարցանէր ցայն Լստուծոյ Ղևոնդ, թէ գիտեմ, թէ հասեալ դայ ի մեզ Ասասի, լըբի անամծութեամբ սրտիւ գալ առ մեզ յողջոյն, և թո զմտաւ ածեալ, որպէս պարտ է առնել մեզ, հրամայեալ և այնպէս առնեմք մեք». (եր. 130) Մեզ թվումէ թէ այս բանը, որպէս նաև բովանդակ եղելութեանց մէջ, Ս. Ղևոնդի գլխաւորապէս պաշտօն վարելը, որի անունով և բոլոր նահատակքը Ղևոնդեանք անուանվեցան, իրաւունք է տալիս հաւանականաբար ենթադրել, թէ Փարպեցու քահանայապետ խօսքը վերաբերվումէ նաև գոնէ Սուրբ Ղևոնդին, եթէ ոչ նորա ընկեր միւս բոլոր քահանաներին:

Լստարակոյս, պ. Լսմինի քահանայապետ խօսքը միակողմանի հասկանալն էր պատճառը, որ ինչպէս § 21. ցոյց տուինք, Սիւնեաց Սուշէ եպիսկոպոսին կաթողիկոս էր կոչում, եթէ չենք սխալվում: Մենք ընդգէմ չենք և չենք մերժում թէ գլխաւոր քահանայութեան կամ քահանայապետ խօսքերը չէ կարելի և կաթողիկոս հասկանալ. ըստ որում շատ տեղ մեր կաթողիկոսքը եպիսկոպոս են կոչում իրենց, որպէս նաև բոլոր ուրիշ ազգերի պատ-

րիարքները, որպէս և շուրջի Պապը. ուր մնաց որ Յովհաննէս Լւեաթարանիչը լոկ երէց է ստորագրում: Բայց ընդդէմ ենք և չենք կարող թոյլ տալ, թէ շայց լեզուի մէջ գլխաւոր քահանայուն թեան, կամ գլխաւոր քահանայ, կամ որ նոյն է քահանայապետ բառերը, միմիայն կաթողիկոս են նշանակում: Այդն իսկ Խորենացու նղովքը « ՚ի վերայ գլխաւորաց քահանայութեանն » չէ կարելի բացառողաբար կաթողիկոսների վրայ հասկանալ, կարող էր, որ այդ բանը եղած լինէր և եպիսկոպոսների վրայ, թէ և այն, մենք էլ երբեմն, առանց քննութեան, պ. Ամինին հետեւելով, այդ նղովքը վերագրած ենք կաթողիկոսներին, բայց այս սխալ է, քանի որ վերը շատ անգամ յիշված խօսքերը լոկ կաթողիկոս չեն նշանակում:

Երկրորդ, գնենք թէ կարելի է այս տեղում գլխաւոր քահանայութեան խօսքը կաթողիկոս հասկանալ, բայց և այնպէս, մեզ թվումէ թէ պ. Ամինը հիմք չունի, երբ Մանգակունու անունն է տալիս:

ա) Սուրբ Յովհանն Մանգակունին կաթողիկոս նստաւ, ինչպէս ինքը պ. Ամինն էլ խոստովանումէ, 480 ին:

բ) Մինչև 484 թիւը, Ալահանի անհնազանդութիւնը և պատերազմը տեւումէր Պարսից ընդդէմ Փարպեցին, ինչպէս ինքը իր թղթում վկայումէ, Ամասրականների մօտ էր այդ միջոցին, և բնաւ որ և իցէ եկեղեցական պաշտօնի մէջ չէր:

գ) 484-ին Ալահանը հաշտվեցաւ. և Փարպեցին գնաց Սիւնեաց աշխարհը: Երկու տարի այդ տեղ մնալուց յետոյ վերագարծաւ Եւրարատ, ուրեմն 486-ին:

դ) Ս. Յովհանն Մանգակունին վախճանեցաւ 487-ին.....:

Ծանօթ. Եյս տեղ պակասումն մի բանի բացառութիւնը. գուցէ ծանր հիւանդութեան և այլ պատճառներով հանդուցեալը կարողացած չէր աւարտել կամ պարզադրել իսկ սև օրինակների մէջ շարունակութիւնը և վերջը մենք չը գտանք: Եստուծու փառք, որ դէմ այսբանը յաջողեցաւ մեզ ձեռք բերել և հրատարակել: Բայց գուցէ պ. Սերովբէ Նալբանդեանի մօտը եղած թղթերի մէջ գտնվի սորա պակասը: Մենք խնարհաբար խնդրում ենք այս ազնիւ պարոնից հասուցանել մեր ձեռքը իր մօտ գտնված սև օրինակները, որ մի օր կարողանանք Եստուծու աջողելով այս պատուական աշխատասիրութեան պակասը լցուցանել:

Հրատ.

ՅԱԻԵԼՈՒԱԾՔ

12 Ապրիլի, 1863, Ս. Պետերբուրգ.

Անգին եղբայր

Ամսիս 11-ից գրած նամակդ նոյն երեկոյեան ստացայ, ծխախոտի եւ գրքի հետ միասին: Մայց պէտքէ քեզ ասեմ, որ ուղարկածդ այն չէ, ինչ որ քեզանից խնդրել էի: Քո ուղարկած գրքի բովանդակութիւնը մի անպիտան բան է, յիմար եւ անձոնի ոտանաւորներ, աշխատասիրութիւն մի ոմն Մադատովի, որ իր ազատութեանց տակ «Սէյադ» է ստորագրում. երեւի թէ այդ իսկ անունը քեզ սխալանքի մէջ է ձգել, ըստ որում ես Սայաթ-Նովայի երգարանն էի խնդրել այս վերջինս բոլորովին ուրիշ գիրք է: Ուղարկած ոտանաւորներդ որ եւ է գաւառական բարբառով չեն գրած, այլ աղաւաղած եւ աղճատած լեզւով, որ ոչ հոգի ունի եւ ոչ բնաւորութիւն, իսկ Սայաթ-Նովայի երգարանը գրած է ճիշդ եւ յատկապէս այն բարբառով, որով խօսումեն Արաստանի շայերը: Ինձ հարկաւոր են բուն բարբառները, եւ ոչ թէ լեզուների խառնուրդը: Սայաթ-Նովայի երգարանը, որ 1852 թ. սպիտեցաւ Մոսկվայում, մի պատուական գիրք է, որի սկզբում գրած է նոյն բարբառի բննութիւնը, Վէորդ Ալմէրգեանի աշխատասիրութիւն: Յուսով եմ, որ այժմ հասկացար թէ ինչ էի խնդրում: Մեծապէս կուրախացնէիր ինձ, եթէ ճարէիր իմ համար «Սոս եւ Արդիթեր» եւ «Ալէրք շայաստանի». այստեղ երեւի մեր ծանօթների մօտ կը գտնվին, աղաչումեմ խնդրիր նոցանից եւ ուղարկիր ինձ: Վմանապէս ինձ հարկաւոր են մի քանի ուրիշ գրքեր եւ բառարաններ, բայց այդ մասին այժմ չեմ գրում, որովհետեւ կարելի է քեզ կը յաջողի մինի երաշխաւորութեամբ աղատել ինձ այս-

տեղից, այն ժամանակ կարելի է առաւել լաւ պարապել քան թէ այժմ այստեղ, ուր մի խօսք հայերէն չեմ լսում, բայց լեզուի վերայ քննութիւն եմ գրում, յիշողութեանս եւ 20 տարւայ գործունէութեանս շնորքով, որ դարձեալ բաւական չէ:

Առ հասարակ այս իմ ձեռնարկութեան համար շատ քիչ նիւթեր կան. իմ միակ յոյսը պօլէմիկայի վրայ է, որ անպատճառ կը ծագէ այս աշխատութեան պատճառով: Այնուհետեւ, գուցէ, յետաջըջական (реакционный) յօդուածների մէջ կ'երեւին զանազան տեղերից զանազան ձեւեր եւ ես, առ ոչ ինչ գրելով յիշոցները եւ չպատասխանելով նոցա, օգուտ կը քաղեմ տված խրատներից: Բայց առաւել ուրախ կը լինէի, եթէ մի ուրիշը յանձն առնէր կատարել մի եւ նոյն բանը, ձեռքի տակ պատրաստ ունենալով այս իմ լաւ թէ վատ աշխատութիւնը:

Բայց քանի որ չունինք մեր քաղաքական լեզուի մտաւոր քերականութիւնը (ճիշդ քերականութեան մասին դեռ մտածել հարկաւոր չէ), քանի որ դա վարժապետների եւ աշակերտների ձեռքին չէ գործածական, նոր լեզուի գրականութիւնը բնաւ յառաջադիմութիւն կարող չէ ունենալ: Ասենք թէ կարելի է գրել կոկ եւ հարթ ոճով, սակայն դարձեալ դա ժողովրդի համար կլինի օտար ու խորթ. ժողովուրդը այդպիսի գրուած երբէք եւ ամենեւին կարող չէ մարտել, ուրեմն դա չի միանալ նորա բարոյական կազմութեան հետ, վասն զի այդ կոկ ու հարթ գրուածքի տարերքը առնուած են ոչ թէ կենդանի, այլ հին ու մեռած լեզուից եւ կազմված են հնացած սիստեմայի ազդեցութեան տակ, ուր երբեմն թէ եւ լավումեն կենդանի լեզուից առած նախադասութիւնք, բայց գոքա առ հասարակ անհետ կորչումեն խիստ սիստեմամուլութեան հեղեղների մէջ: Այս խօսքերից պարզ երեւումէ, որ ես մեղադրումեմ ուրիշների հետ միասին և իմ անձը, և այս խոստովանութիւնը ամեն սխալից ես բարձր եմ դասում: Մենք առաջինը մտցրինք և ընդհանրապէս գործածեցինք գրականութեան մէջ քաղաքական լեզուն: Ահա արդէն 10 տարի ժամանակ է անցել այն օրից, երբ առաջին անգամ լոյս տեսաւ այդ լեզուով գրած գիրքը, և մենք միշտ հրապարակով յայտնած ենք մեր պատրաստութիւնը ուղղել մեր սխալները, եթէ բարեխղճաբար ցոյց տան մեզ. սակայն ոչ ոք վստահացաւ այդպիսի աշխատութիւն իր վրայ առնուլ և բարեխղճաբար պատասխանել մեզ. ընդհակառակը մեր հրաւերին պատասխանում են լոկ

յիշոցներով, և միաբերան արհամարհում և մերժումէին գրականութիւնից քաղաքական լեզուն, այն ինչ հարկ էր նոցա մասնաւորապէս ցոյց տալ մեր իսկ մոլորութիւնքը:

Այնչապէս մեր այդ ասպարէզի վերայ ունեցած տասնամեայ փորձը, մեր յարաբերութիւնը ժողովրդի հետ, բերին մեզ վերոյիշած փրկարար խոստովանութեան, և այդ եղելութիւնը—պէտքէ ուրախ սրտով յայտնենք—կատարվեցաւ առանց գրամոլների և հնութեան պաշտողների օգնականութեան:

Մեզանից ոչ ոք հաշիւ էր տուել իրեն, թէ քանի՞ խոնարհմունք և քանի ժամանակ կայ նոր լեզուի բայի մէջ. թէ և այս բանը այժմ ծիծաղելի է թվում, բայց այսու ամենայնիւ ճշմարիտ իրողութիւն է: Իրաւ է, այդ խոնարհմունքներից և ժամանակներից մի քանիսը գործ էինք ածում անգիտակցաբար, լեզուի հոգուն հնազանդվելով, բայց և մի քանիսը թողում էինք անգործածելի, ի վնաս մեր նոր կենդանի խօսքին: Այժմ և, խոստովանումենք, շատ անգամ հարկաւորութիւն էր պատահում նոցա գործածելու, բայց մենք զեռ անփորձ և անհաստատ հողի վրայ լինելով, ամենայն զգուշութեամբ աշխատումէինք զանց առնել նոցա այնպէս, ինչպէս փորձառու նաւաւարը փախչումէ իր ծովագնացութեան ժամանակ վտանգաւոր տեղերից: Ահա այդպիսի անկանոն գործակատարութիւնը—փոխանակ ուղիղ ճանապարհով նպատակակէտին դիմելու, ծուռ ու մուռ ճանապարհով գնալը—յառաջ բերաւ այն անյարմարութիւնքը, որոնք խորթ էին թվում ժողովրդին և ասես թէ մի անանցանելի պատ էին քաշում գրականութեան ու ժողովրդի մէջ:

Նոր լեզուի մի քանի ձեւերը արհամարում էինք այն հիման վերայ, որ նոյն ձեւերը չկան հին լեզուի մէջ, ինչու որ գործ էինք ածում միայն այն խոնարհմունքները և ժամանակները, որոնք բառական թարգմանութիւն էին հին լեզուի համապատասխան խոնարհմունքներից և ժամանակներից. կարծես թէ XIX դարու հայը ստորագրութեամբ պարտաւորվել էր վաղի մի հայերին ապագայում ևս այնպէս խօսել, ինչպէս 2000 տարի առաջ նահապետների ժամանակ խօսում էին: Ահա աննեղելի սխալ և հակառակ մեր սկզբունքի—նոր լեզուն գործածելի անել:

Տուրինի պալատի կամ Ֆլորենդինեան հոետորները բնաւ չեն կաշկանդվում Մենքի կամ Արկերոնի հեղինակութեամբ. նոցա փոյթ չէ թէ ինչպէս էին խօսում նրանք իրենց ժամանակը,

որովհետև իրենք իրենց գիտցածին պէս խօսելու կատարեալ իրաւունքը լաւ ճանաչուամեն. լեզուն ժամանակի արդիւնք է և ծաղկումէ ժողովուրդի հասկացողութեան և քաղաքակրթութեան համաձայն. վատ թէ լաւ է ծաղկում—այդ ուրիշ խնդիր է. բայց իրողութիւնը այս է, որ այդ լեզուն, որպէս ժամանակի լեզու, ունի նոյն լիակատար և անժխտելի իրաւունքը, որ իր ժամանակին ունեցել է նախընթաց նահապետական լեզուն: Թող այդ, ինչո՞ւ համար այն լեզուն լաւ է, այս վատ. ո՞ւր է այն անպայման կշռաչափը, որ կարող լինի այս հարցուածին պատասխան տալ: Աշխարհիս երեսին անպայման բան չկայ, ամենայն ինչ պայմանաւոր է, նայելով դիտողութեան կէտին: Բայց ի՞նչ բան է դիտողութեան կէտը: Անդին նախկին: Արեւմն այդ դիտողութեան կէտը ազատ չէ, այլ ստրուկ է: Գիտողութեան կէտը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմացութիւն և ճաշակ (понятие и вкус), որ կենդանի մարդու բնածին յատկութիւնքն են, ասել է ժամանակի և քաղաքակրթութեան արդիւնք: Բայց եթէ այդ ժամանակը միանգամայն մերժէ այն, ինչ որ նախնիքը առանց կշռելու ու չափելու ընդունել էին, և դորա փոխանակ նոր սկզբունքների վերայ ստեղծէ մի ուրիշ, ո՞չ ապաքէն դա յայտնի ապացոյց է, որ նա հերքումէ և էլ չէ ընդունում երբեմն պաշտելի գաղափարի գեղեցկութիւնը ու պիտանութիւնը:

Ինչ ոգուտ ժամանակակից մարդուն Միքէլ-Անճէլօյի մեռած և սառն արձանների երկնային գեղեցկութիւնից, երբնա կարօտութիւն է քաշում իրական կենդանի կնոջ, չասենք այնպիսի չքնադագեղ կնոջ, բայց կենդանի կնոջ և հետևաբար համաձայն իր ընկերական և ֆիզիօլոգիկական պահանջմունքներին: Մարդկային բնութիւնը չի հրաժարուիլ ամենատեղ կնոջից անգամ, եթէ գեղեցկագոյնը չէ գտնում, պատճառ բերելով թէ Աստիկանի արձանները անհամեմատ գեղեցիկ և չքնաղ են իր ընտրածից: Ո՞չ ապաքէն ապուշ կը կոչէինք այն մարդուն, որ, հանգամանքներից ստիպված լինելով պսակիլի, հրաժարարվէր պսակից այն պատճառով, որ իր հարսնացուն նման չէ Բելվեդերեան Անեռային: Ինչ կամենաք ասէք, այս մեծ յիմարութիւն է:

Բայց ես ահա լարեցի իմ թոյլ թելը և չափը կորուսի, մոռանալով որ քեզ նամակ եմ գրում, և ոչ թէ շարագրութիւն:

Ողջ եղիւ եւ նամակդ անպակաս արակ Միքայէլ:

14 Ապրիլի, 1863 Ս. Պետերբուրգ.

Սերելի եղբայր

..... Ես մեծ ուրախութեամբ կը կարգամ մի օր քո ակնարկած յօդուածները կուռնկի մէջ, այդ բաները ինձ շատ հարկաւոր են. բայց այժմ խօսենք հանգուցեալ Ալվերդովի կարծիքի մասին, թէ «Տարօնոյ գաւառներում առաւել, քան թէ ուր և իցէ, մնացել են լեզուի գեղեցկագոյն ոճերը»:

Ես շատ յարգումեմ մեր հայրենակցի գիտութիւնը և տաղանտը, բայց այսու ամենայնիւ ես գնումեմ բոլորովին ուրիշ ճանապարհով:

Նա խորհուրդ է տալիս ընդունել Տարօնոյ բարբառը դրականապէս, իսկ մենք ընդունումենք դրան համեմատութեամբ. պատճառ որ ընդհանուր ստրկութիւնը դրան կը բերէ մեզ անվախճան հակասութեանց: Ազգը թողաւ հին լեզուն, մտքերի բացադրութեանց հին ձևը, և սկսաւ գործածել նոր, վայրենի և անմշակ ձևը ոչ այն պատճառով, որ առաջինը վատթար կամ ցածագոյն էր նորից, կամ ընդ հակառակն, որ նորը լաւագոյն կամ գեղեցկագոյն է հինից, այլ այն պատճառով, որ հնացած ձևերը էլ չէին համապատասխանում նորա մտքերի կազմութեան: Մի և նոյն պատմաբանական պատճառը, որ ստիպեց նորան թողուլ հին ձևը, կը ստիպէ նորան չհնադանդիլ ընդհանրապէս մի որ և իցէ՝ բարբառի ձևերին, ևս առաւել կը ստիպէ փախչել, յօգուտ յառաջագէմ նոր լեզուին, այն բարբառից, որի մէջ հարազատութեամբ պահված են հին լեզուի ձևերը: Ազգը թողաւ հին, մշակված և բաւակաւին կոկ, լեզուն հարկից ստիպված, ըստ որում այդ լեզուն էլ իր առաջվայ ձևով անհասկանալի էր նորան, ուրեմն ո՞ր լօգիկային հետեւելով մենք պէտքէ դիմենք այն բարբառին, որի մէջ առատութեամբ գտանվումեն հին ձևեր: Այդ լեզուն իսպառ կորցնումէ իր խորհուրդը, երբ որ ուրանումեն նորա անկախութիւնը: Ես ինքս առաջ քիչ թէ շատ հետևումէի նոյն ուղղութեան, որ այժմ գովաբանվումէ կուռնկի մէջ, բայց իմ մէջ առաջացաւ յեղափոխութիւն և աչքերս բացվեցան: Իմ համար այժմ փոյթ չէ թէ այս կամ այն բարբառով աւելի գեղեցիկ են խօսում, այսինքն աւելի մօտ հին ձևերին. ես

որիչ բան են փնտուում: Երբ բարբառի մէջ շատ են մշակված կենդանի ձևերը նոր լեզուի: Էին ձևերի համար, որ (ինչպէս հաւատացնում են մեզ) գործ են անում Տարօնի բարբառի մէջ, եւ հարկաւորութիւն չունին զիմելու Տարօնոյ բարբառին, եւ կարողեմ գտնել այդ բաները Վ և յետագայ դարերի մատենագրերի շարագրութեանց մէջ, բայց եթէ կան դորա մէջ նոր ձևեր, ժամանակի ձեռքով մշակված, մեր ներկայ հարկաւորութեանց համաձայն, ապա ուրեմն շնորհեցէք մեզ:

Լեզուն մի որ և իցէ վարդապետութիւն չէ, ամենավատթար վարդապետութիւնը կարելի է տարածել, և նա, նայելով իր յատկութեան, կը ճարէ այստեղ ու այնտեղ իրեն հետևողներ, շատ կամ քիչ: Բայց լեզուն վարդապետութիւն չէ, կարելի չէ լեզուն քարոզել, ուզես առ բոլոր ազգը և նստեցուր աշակերտական նստարանների վերայ, որ անկարելի բանէ, դարձեալ աշխատանքդ անօգուտ կը լինի: Եւս մի շատ քնքոյշ խնդիր է: Լեզուն խորհրդածութիւն չէ որ շարագրվի, լեզուն օրէնք չէ որ հրամայվի: Մի որ և իցէ մտքի յայտարար ամենագեղեցիկ ձևը անգամ որ և է գաւառի, պէտքէ մոցնենք լեզուի մէջ ոչ թէ ստիպողական կամ պաշտօնական կերպով, այլ գաղտագողի, որպէս մաքսանենգութիւն, որպէս զի պատճառ չլինի յետաշրջութեան: Մենայն շրջան (эпоха) ունի իր բնաւորութիւնը և կերպարանքը, նոյն բնաւորութիւնը և նոյն կերպարանքը պէտքէ բնականաբար ունենայ և նորա լեզուն: Մեր հին լեզուի մէջ ասում ենք «գան ըմպել», իսկ նորի մէջ գանը չէ խմելով, այլ ուտելով, ասում ենք ծեծ ուտել և ոչ թէ խմել: Հին լեզուի մէջ ոչ մի տեղ կարելի չէ գտնել այդպիսի ոճ:

Գաւառական բարբառները կարող են օգնել ընդհանուր լեզուին առանձին ինքնուրոյնաբար մշակված բառերով և ասացուածներով, բայց միայն այնպիսիներով, որ չկան միւս բարբառների մէջ, կամ եթէ մինը միւսից գերազանց է: Ընդհանուր պահասութեան կարօտութիւնը փոխադարձաբար լցուցանելով միայն հնարաւոր է նոր լեզուի մշակութիւնը, իսկ եթէ ամբողջապէս անունք մի որ և իցէ գաւառական լեզու, որքան էլ որ դա լաւ լինի, այսու ամենայնիւ կարող չէ արմատ ձգել օտար հողի վրայ, որովհետեւ դա մի ուրիշ գաւառի ծնունդ և սեփականութիւն է: Մենայն փորձ որ և է բարբառի կողմից միւս բոլոր բարբառների համար գրոշակ բարձրացնել «այսպէս խօսիր» վերնագրով, միշտ կը լինի ձայն

բարբառոյ յանապատի: Չանաղան գաւառների մարդիկը, եթէ կամենում են նոյն լեզուն բարոյական գործիք շինել ազգի համար, պէտք է զոհ բերեն իրենց գաւառական անձնասիրութիւնը: Եւսպէս կարող չէ մի օրինաւոր բան յառաջանալ:

Փոխադարձ մերժումն մի քանի գաւառական վերջաւորութեանց կամ մասնիկների, և ընդ հակառակն, փոխադարձ ընդունելութիւնը ոմանց, ընդհանուրի օգտի համար, կարողէ հասուցանել ցանկալի կէտին: Եւսել ևս աւելորդ է, որ այդ գործողութիւնը, այսինքն մի քանիսը կտրել ձգելը և մի քանիսը պատուաստելը, պէտք է ամենայն զգուշութեամբ և կանոնապատշաճ կերպով կատարվի, որպէս զի գործողութիւնից յետոյ մնացած մրուրը զիւրամարտելի լինի, այս տեղ ձևը ու գեղեցկութիւնը երկրորդական բաներ են: Տարակոյս չկայ, որ ազգը կարող չէ լինել խօսել ընդհանուր լեզուով, կենդանի խօսքը իւրաքանչիւր գաւառի ժողովրդի բերնում ունի իր կապրիզները և հաճոյքը: Բայց լեզուի մշակութեան առաջին խնդիրը այն պէտքէ լինի, որ խնամք տարվի այդ լեզուն բարոյական զիւրըմբռնելի գործիք անել և փոքր ի շատէ ուշիմ գաւառաբնակի համար մատչելի, և այդպէս գիտութեանց համարդ իւրաւ անցանելու ճանապարհ բանալ, առանց որին լուսաւորութիւնը և զգաւորութիւնը աներևակայելի է: Գորան ընդհանուր խօսակցական լեզու անելու համար, ոչ թէ մեր մէջ, այլ հազար անգամ մեզանից զօրաւոր ազգերի մէջ անգամ, ամենեւին հնար չկայ, չնայելով որ համալսարաններ, ձեմարաններ, դանազան ուսումնարաններ և բազմաթիւ օրագիրներ ունին: Ինձ հարկաւոր չէ, որ հետս խօսողը այնպէս խօսի, ինչպէս ես եմ խօսում, բաւական է եթէ նա ինձ հասկանայ, հասկացողութիւնը առաջին քայլն է, ինչ որ ներկայ սերունդը հասկանայ, այն գալոց սերունդից ունելիքներով կարելի չէ լինել իւրել:

Եւս իմ բոլոր ասածներից պարզ երևումէ, թէ ես որպիսի ուղղութեան հետևում եմ: Եւս ամենեւին երաշխաւոր լինել կարող չեմ, թէ կը պատասխանեմ հարցուածին այնպէս կամ կը կատարեմ այդ գործը այնպէս, որ կարելի լինէր ասել satis est կամ ecce homo. Ինձ օտար է այդպիսի մանր անձնասիրութիւնը: Իմ անձնասիրութիւնը բաւականացած կը լինի, եթէ ես կարողանամ իրագործել այն, ինչ որ զօրութիւն կը ներէ և ինչ որ կարող եմ: Եստուծու փառք, եթէ ճարեմ որքան և իցէ համազգացութիւն ոչ թէ դէպի

իմ վաստակը, այլ դէպի այդ ուղղութիւնը, եթէ ես կարողանամ
 համոզել այդ ուղղութեան կարևորութեան մասին, այդքանը շատ
 բաւական է իմ համար: Աս, իբրև առանձին անհատ, կարողեմ
 մասնաւոր բաներում մեծ սխալներ անել, թող նկատողները ուղ-
 ղեն, ներկայ հանգամանքների մէջ և մեր ունեցած միջոցներով
 կարելի չէ պահանջել, որ պատկերի բոլոր մասերը առանձին առած
 գեղեցիկ լինին, ես ճիգն եմ թափում այն վախճանին, որ դոքա
 ամենքը երենց տեղերում լինին և բնական կարգով դասաւորված:
 Ղեկեցիկութեան, երեսի գծագրութեան մասին պէտքէ հոգայ ժամա-
 նակը, որովհետև «լեզուն խորհրդածութիւն չէ, որ շարագրվի,
 որովհետև լեզուն օրէնք չէ, որ հրամայվի», ինչպէս որ ասացի
 վերևում:

Թէ և ես տակաւին մինչև բայերն եմ հասել, բայց առաջուց
 կարող եմ ասել, որ ընթացութիւնը կը սակաւանայ, իսկ խոնարհ-
 մունքը և ժամանակները կ'աւելանան, գրաբառի նկատմամբ, փոր-
 ձի համար ես խոնարհեցի մի բայ և ուրախութեամբ տեսայ որ ժա-
 մանակները և խոնարհումը առաւել ճիշդ և ուղիղ են, քան թէ
 հին լեզուի մէջ: Սակայն առ այժմ այսքանս այդ մասին բաւական է:

Աս պատրաստումեմ նաև նիւթեր վասն ներածութեան մի մեծ
 գործի—Ֆիզիկա—Ֆիլոլոգիկական—պատմաբանական—աշխարհագ-
 րական, որի նման բան դեռ ևս չէ եղած, ես այս գործի մէջ Ռեօքլին
 եմ պարտական, նորանից ուսայ: (Նայց այդ նիւթերը դեռ ևս ցրված
 են, պատճառ, ես առանձին գրութեանց (ТЕЗИСЬ) վրայ առանց
 կարգի եմ գրում: Այդ կտորները ես չեմ կարող այս տեղ և անկարելի
 է միաւորել յառաջ քան գործիս վերջանալը և իմ բերդից ազատվելը:
 ինքրած գրերս շուտով ճարիր
 և ուղարկիր

Միքայէլ Նալբանդեանց:

14 Սպր. Ս. Պետերբուրգ:

2870

« Ազգային գրադարան



NL0345056

